ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) **Թիվ-1** (1671) Հունվար 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Հույսի ու հուսախաբության միջև (էջ 1-4)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Ռուսաստանի տարածաշրջանային շահերը: Ինչպե՞ս հարաբերվել Մոսկվայի հետ(էջ 5-7)

3- Տարածաշրջանային

Նարե Գևորգյան
Արցախի ապաշրջափակումն ու տարածաշրջանային արձագանքները (էջ 8-9)

Ժաննա Վարդանյան
Հայաստանի ու Ադրբեջանի հանդեպ իրանական կողմի տրամադրությունները (էջ 10-12)

Լիանա Պետրոսյան
Արցախի շրջափակումը Բաքվի կողմից. «բնապահպանները» և բրիտանական շահը (էջ 13-14)

4- Աշխարհաքաղաքական

Արաքս Փաշայան
Հայաստան-Հնդկաստան հարաբերությունների ընթացքն ու հեռանկարները (էջ 15-20)

Կարօ Մանճիկեան
Սուրիոյ 11-ամեայ տագնապի փորձառութեան դասերէն (էջ 21-24)

Գայանե Մանուկյան
Ռուս-ուկրաինական «հակամարտության» և դրա ակունքների շուրջ (էջ 25-29)

5- Իրավաքաղաքական

Արփի Աբրահամյան
ՀՀ-ԵՄ հարաբերություններ (Հոդված 2) (էջ 30-34)

Արմեն Մարուքյան
«Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը» և հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները (էջ 35-42)

6- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Բացուի՛լ (էջ 43-44)

Հույսի ու հուսախաբության միջև

Վերջին շրջանում փաշինյանական ռեժիմը իրականացնում է շեշտված ու բացահայտ հակառուսական քաղաքականություն: Հիշենք այդ քաղաքականության մի շարք դրսևորումներ. Նիկոլ Փաշինյանը մերժեց ստորագրել Երևանում գումարված Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գագաթնաժողովի հռչակագիրը, հայկական կողմը հրաժարվեց մասնակցել Ռուսաստանի միջնորդությամբ Մոսկվայում կայանալիք Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարների բանակցություններին, չեղարկեց 2023 թ. Հայաստանում ՀԱՊԿ միացյալ ուժերի զորավարժությունների անցկացումը, մինչ այդ պաշտոնական Երևանը անցանկալի անձ էր հայտարարել Ռուսաստանի Պետդումայի պատգամավոր Միխայիլ Զատուլինին՝ արգելելով նրա մուտքը Հայաստան, այն գործչին, որը գրեթե 30 տարի միանշանակորեն պաշտպանել է պրոհայկական և պրոարցախյան տեսակետներ՝ բացահայտորեն հակադրվելով ադրբեջանական դիրքորոշումներին:

Պաշտոնական քայլերի կողքին ակնհայտ է հակառուսական քարոզչությունը, որով լցված են հայկական լրատվամիջոցներն ու համացանցը, նույն իշխանության գիտությամբ և թելադրանքով են տեղի ունենում հակառուսական զանազան ակցիաները ռուսական դեսպանատան կամ Գյումրու ռուսական ռազմաբազայի դեմ և այլն:

Այս ամենին ներկայումս հաճախակի են անդրադառնում ռուսական քաղաքագիտական շրջանակները՝ շեշտելով, որ, 44-օրյա պատերազմը տանուլ տալու, սեփական սահմանները պաշտպանել չկարողանալու մեղքը Ռուսաստանի վրա բարդելով, Հայաստանի իշխանություններին հաջողվել է հակառուսական տրամադրություններ սերմանել նաև հայ հասարակության մեջ: Որքան էլ արտառոց է երևույթը, շատ հաճախ Ռուսաստանի ամենաբարձր մակարդակի պաշտոնյաներն են հանդես գալիս Հայաստանի իշխանավորների այս կամ այն հայտարարության հերքմամբ: Ինչ նպատակ է հետապնդում իշխանությունը՝ չափազանց վտանգավոր այս արկածախնդրությանը դիմելով:

Սույն թվականի հունվարի 10-ին մամուլի ասուլիսի ձևաչափով Նիկոլ Փաշինյանը, ըստ էության, հրապարակեց իր կառավարության որդեգրած քաղաքականությունը թե՛ Հայաստանի և թե՛ Արցախի վերաբերյալ: Հիշյալ ասուլիսի ժամանակ նա ասաց. «Եթե մենք ուզում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը զարգացած և անվտանգ պետություն լինի, մենք պետք է մեր տարածաշրջանում մեր հարաբերությունների որակը փոխելու մասին մտածենք: Այսինքն՝ մենք նաև կառավարության 2021-26 թվականների գործունեության ծրագրում, ըստ էության, նոր մի

դիտակետ ենք ներկայացնում որպես կառավարության գործունեության կարևոր ուղղություն, և մենք այդ ուղղությունը պայմանականորեն անվանում ենք տարածաշրջանացում: Այսինքն՝ պատմականորեն մենք մեր տարածաշրջանում ավելի շատ մտավախություններ ենք ունեցել, քան հնարավորություններ ենք տեսել, և դա հասկանալի է. մենք գիտենք, բոլորս գիտենք, թե դա ինչու է այդպես դասավորվել, բայց մենք կարծում ենք, որ գուցե նաև ժամանակն է, որ փոխենք մեր դիտանկյունը»[1]: Ասվածի տրամաբանական շարունակությունը կարելի է համարել քիչ անց ասված միտքը. «Մենք խաղաղություն կարող ենք ունենալ, եթե ի վիճակի լինենք մեր հարաբերությունները՝ հանդուրժող հարաբերություններ հաստատել Թուրքիայի և Ադրբեջանի հետ»: «Էս ա խաղաղության բանաձևը, և, իհարկե, միջազգային հանրության էն ռեսուրսները, որոնք կարող են մեզ օգնել էդ հարցում, էդ ռեսուրսներն ու հնարավորությունները պետք ա օգտագործել»,- նշել է Փաշինյանը: Լրագրողի այն հարցին, թե ճիշտ է, որ ՀԱՊԿ-ի վրա հույս չեն դնում, բայց Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը հավատում են, Փաշինյանը պատասխանում է. «Ես ՀԱՊԿ-ի վրա հույս դնում եմ, այլ բան, որ ՀԱՊԿ-ը կարող ա հուսախաբ անել: Իսկ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը հավատում եմ մի պատճառով, որովհետև որևէ բան անելուց առաջ պետք է հավատալ դրան. եթե չես հավատում, ինչի՞ ես անում: Եթե չենք հավատում, ինչի՞ ենք բանակցում: Փորձը ցույց ա տալիս, որ ձևի համար բանակցությունը լավ տեղ չի տանում»: Ահա, դաշնակցից երես թեքելու դեպքում գործում է մի

տրամաբանություն, իսկ ցեղասպան թշնամու հետ հարաբերություններ կարգավորելու ցանկության դեպքում՝ մեկ ուրիշը. «….փոխել տարածաշրջանում հարաբերությունների որակը», «….տարածաշրջանում ավելի շատ մտավախություններ ենք ունեցել, քան հնարավորություններ ենք տեսել, բայց գուցե ժամանակն է, որ փոխենք մեր դիտանկյունը», «….խաղաղություն կարող ենք ունենալ, եթե ի վիճակի լինենք հանդուրժող հարաբերություններ հաստատել Թուրքիայի և Ադրբեջանի հետ», իսկ Ադրբեջանի պայմաններով շուտափույթ խաղաղության պայմանագիր կնքելու, միաժամանակ Արցախից հրաժարվելու հարցում Արևմուտքի դերակատարության մասին ավելացնում է. «…. միջազգային հանրության էն ռեսուրսները, որոնք կարող են մեզ օգնել էդ հարցում, էդ ռեսուրսներն ու հնարավորությունները պետք ա օգտագործել»: Ավելին՝ նույն հարցազրույցում երկրի ճակատագիրը տնօրինողն ասում է. «…. Ստացվում ա, որ Ռուսաստանի Դաշնության ռազմական ներկայությունը Հայաստանում ոչ միայն չի երաշխավորում Հայաստանի անվտանգությունը, այլև, ընդհակառակը, սպառնալիքներ ա ստեղծում Հայաստանի Հանրապետության անվտանգության համար: Եվ մենք էս փաստերից հետևություններ չենք անում, մենք առայժմ արձանագրում ենք էս փաստերը»: Շատ խորաթափանց պետք չէ լինել հասկանալու համար, որ այստեղ խոսքը ամենևին էլ խաղաղապահների մասին չէ, այլ Գյումրիում տեղակայված ռազմականի գոյության անհրաժեշտության, ինչի ուղղությամբ «առայժմ» քայլեր չեն արվում, սակայն չկասկածենք, որ դա նույնպես օրակարգային հարց է:

Ինչ-որ բան չեն հիշեցնում այս մտքերը: Նույն բանը չէ՞ր խորհուրդ տալիս արդյոք ազգային անվտանգության հարցերով ԱՄՆ նախագահի խորհրդական Ջոն Բոլթոնը 2018 թ. հոկտեմբերի 24-25-ին, երբ Երևանում էր, այն է՝ աշխարհաքաղաքական կողմնորոշումների հարցում հրաժարվել պատմական կաղապարներից, հրաժարվել Ռուսաստանի ու Իրանի հետ բարեկամական հարաբերություններից և դեմքով շուռ գալ դեպի Թուրքիա ու Ադրբեջան: Դրանից երկու տարի անց Ադրբեջանն ու Թուրքիան պետք է ցեղասպանական պատերազմ սանձազերծեին արցախահայության դեմ, և այսօր էլ հայությանը ոչնչացնելու, նրա կենսական տարածքների նկատմամբ հավակնությունները շարունակվում են, ինչի մասին ասուլիսի ժամանակ անգամ Փաշինյանն է խոստովանում: Բայց ահա Հայաստանի այլ «ԴՆԹ», այլ «գեն» ունեցող իշխանությունը (նույն Փաշինյանի բնորոշումն է հիշյալ ասուլիսի ժամանակ) ձեռնարկել է տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը փոխելու գործընթաց:

Անկախ նրանից՝ ով ինչ վերաբերմունք ունի Ռուսաստանի նկատմամբ, արդյոք բոլորի համար պմ՞ոզ չէ, որ Ռուսաստանն այսօր, իսկ առավել ստույգ՝

Ուկրաինայում իր անխուսափելի հաղթանակից հետո, պահպանելու է Կովկասում գլխավոր հարց լուծողի իր կարգավիճակը: Իսկ եթե ակնհայտ են Ադրբեջանի ու Թուրքիայի ագրեսիվ հավակնությունները այս և ոչ միայն այս տարածաշրջանում, հայկական կողմի «բարի» ցանկությունները բավարա՞ր են արդյոք, որ տևական խաղաղություն հաստատվի Հայաստանի ու ամեն օր նրա նկատմամբ սադրանքների ու պատերազմի սպառնալիքը պահպանող թշնամիների միջև:

Չհաջողելով պարտվողական պատերազմով ձերբազատվել Ռուսաստանից ունեցած կախվածությունից՝ Փաշինյանն ու իր առաջնորդած ուժը դրանից հետո էլ ամեն կերպ փորձում են իրենց ուսերից ցած նետել այդ պատասխանատվությունը: Պատահական չեն նրանց խիստ դժգոհ արձագանքները, երբ արցախցիները հայտարարում են անկախության նպատակից չհրաժարվելու և Ադրբեջանի կազմ վերադառնալու հավանականությունը մերժելու մասին: Նույն այս հանգամանքն է պատճառը, որ 120.000 արցախցիների շրջափակմանն ապազգային իշխանությունն արձագանքում է միայն միջազգային ուժերին հասցեագրված ձևական հայտարարություններով: Փաստացի Արցախը կրկին ստրկացնելու հարցում ՔՊ-ական իշխանությունը հանդես է գալիս որպես Ադրբեջանի դաշնակից:

Ադրբեջանի կողմից նոր պատերազմի սանձազերծման սպառնալիքի պայմաններում Հայաստանը անհեթեթ մեկնաբանությամբ մերժում է իր թշնամիներին ուղղված զորավարժություններ անցկացնելու ՀԱՊԿ-ի նախազգուշական քայլը, երբ նույն ժամանակ Հայաստանի սահմանների մոտ Թուրքիան ու Ադրբեջանը անցկացնում են հերթական զորավարժությունները: Ի դեպ, Հայաստանի իշխանությունները մեր տարածքում զորավարժություններ կազմակերպելու ՀԱՊԿ-ի

նախորդ առաջարկը մերժել էին 2020 թվականի պատերազմի նախօրյակին, երբ դարձյալ Ադրբեջանն ու Թուրքիան համատեղ զորավարժություններ էին անցկացնում, և դրա հետևանքների մասին Հայաստանի դաշնակիցները զգուշացնում էին: Այս և սույն հոդվածում շարադրվելիք մյուս փաստերը ևս մեկ անգամ հաստատում են 44-օրյա պատերազմում Հայաստանի իշխանությունների կանխամտածված պարտության փաստը, ինչպես և այդ պարտության մեղքը Հայաստանի նախկին իշխանությունների կամ Ռուսաստանի ուսերին բարդելու անհեթեթությունը:

Ինչո՞ւ հենց նման ճակատագրական պահին, երբ փորձ է արվում շրջափակման մեջ խեղդելու Արցախը, երբ ուկրաինական ճակատում Ռուսաստանի զբաղվածության և հայկական բանակի անպաշտպանունակության պայմաններում Ադրբեջանը և նրա թիկունքից Թուրքիան փորձում են վերջնականապես ծնկի բերել Հայաստանը, Փաշինյանը խաղում է այս վտանգավոր խաղը: Թերևս պատասխանը կարելի է կռահել վերջին շրջանում արևմտյան երկրների՝ քաղաքական և անվտանգային ոլորտների բարձր պաշտոնյաների հետ հայ պաշտոնյաների հանդիպումների ու փոխայցերի իրողության գնահատմամբ: Այն պարագայում, երբ ակնհայտ է դառնում ուկրաինական ճակատում Ռուսաստանին ջախջախելու անհնարինությունը, Արևմուտքին ամեն գնով անհրաժեշտ է Ռուսաստանի դեմ երկրորդ ճակատի ձևավորումը, թեկուզև նախնական փուլում այն իրականացվի քաղաքական-դիվանագիտական ճնշման ձևով:

Իր հերթին Ռուսաստանը ծայրահեղ զգուշավորությամբ փորձում է խուսափել նոր ճակատի, կամ ճակատների հետ բախման հավանականությունից:

Արցախյան երկարատև շրջափակման աննախադեպ փաստին Արևմուտքի ոչ համարժեք արձագանքն ուղղակիորեն շաղկապվում է կովկասյան տարածաշրջանում իր ներկայացուցիչներ Թուրքիային և Ադրբեջանին հատկացված դերակատարության՝ Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելու ծրագրի հետ: Ի դեպ, վերջին շրջանում մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել Ադրբեջանի ու ԱՄՆ-ի համապատասխան պաշտոնյաների միջև՝ երկու երկրների ռազմական համագործակցությանն ուղղված կոնկրետ և շոշափելի խնդիրներ լուծելու նպատակով: Եվրոպական չինովնիկները, կանգնելով էներգակիրների հայթայթման նոր աղբյուրների և ճանապարհների փնտրտուքի առջև՝ քննում են Ադրբեջանի բռնապետին, իսկ Հայաստանի իշխանությունը երկիրը վերածում է երկու աշխարհակարգերի միջև բախման գոտու: Անկախ իշխանությունն իհարկե պետք է ձգտեր տարբեր բևեռների միջև հավասարակշռության պահպանման՝ ռազմավարական և մարտավարական քայլերը բխեցնելով ազգային կոնկրետ շահերից, բայց այս իշխանությանն առաջնորդում են ոչ թե ազգային շահերը, այլ տերերի թելադրանքը և ամեն կերպ իշխանությունը պահպանելու պատեհապաշտությունը:

Նիկոլ Փաշինյանն իր հայտնի ասուլիսի ընթացքում հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին խոսելիս ստանձնում է Ալիևի փաստաբանի դերը և իր պարտքն է համարում ներկայացնել հակառակորդի մեղադրանքներն ու պահանջները հայկական կողմին: Նա իր հակառակորդների զայրույթը հարուցելու վախից հրաժարվում է դաշնակիցների հետ զորավարժություն անցկացնելու մտքից, սեփական բանակը հզորացնելու նախաձեռնությունից, իր պոտենցիալ դաշնակիցների հետ գործակցելու հնարավորությունից, ինչպես և վախենում է ծպտուն հանել արցախահայության ազատ ապրելու իրավունքի, Արցախի շրջափակման, հայ գերիների և անգամ հայ նահատակների մասին, որոնց աճյունները բաց երկնքի տակ են... Թերևս միայն հայ ժողովրդի այսօրվա սերունդները կհանդուրժեին այնպիսի ղեկավարի գոյությունը, որը 2022 թ. ՄԱԿ-ի լիագումար նիստի ժամանակ, կամ 2023 թ. իր առաջին ասուլիսում հայտարարում է, թե համաձայն է տարածքային զիջումների, միայն թե դիմացինը չի ասում, թե որն է այդ զիջումների սահմանը (և մեկ այլ հարց է, թե այդ դեպքում ինչպես է պահպանելու Հայաստանի ամբողջականությունը 29,8 հազար ք/կմ-ի սահմաններում):

Չկայացած ղեկավարը մեկ հարցազրույցի ընթացքում բազմաթիվ անգամներ հայտարարում է, թե Հայաստանը պարտավորություն չունի Ղարաբաղի առջև, Ադրբեջանն ու Ղարաբաղը իրար հետ պետք է լուծեն իրենց խնդիրները, և փորձում է կեղծ դատողություններով արդարացնել իշխանության գործունեության մեջ դրսևորվող իրավական ապօրինությունները, որոնք թույլ են տրվում Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և նույնիսկ Փաշինյանի կառավարության որդեգրած՝ Արցախի անվտանգության երաշխավորը լինելու պարտավորության դեմ: Փաշինյանը, ոտնակոխելով հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի արժեքը, նահատակված հերոսների հիշատակը և արցախցիների անկախ ապրելու կամքը, ըստ էության հայտարարում է, թե ի սկզբանե սխալ ու անհեռանկար է եղել արցախյան պայքարը: Հայկական բանակը կործանած ղեկավարն ասում է, թե բանակ չի եղել, երբ մինչև իր դավաճանական կառավարումը հայկական բանակը միշտ հաղթել է թշնամուն: Փաշինյանն անգամ բանակի հզորացման հեռանկարն է կասկածի տակ դնում՝ նույն ասուլիսում հայտարարելով, թե միշտ էլ կգտնվեն բանակներ, որոնք ավելի ուժեղ կլինեն: Իսկ թե ինչ ողբերգական վիճակի է նա ներկայումս հասցրել բանակը, վկայում են ոչ միայն իր ստորացած վիճակը և նոր պատերազմից վախը, այլև հենց վերջին շրջանի դժբախտ դեպքերը պաշտպանության բանակի համակարգում:

Փաշինյանն ասում է, թե իրենց իշխանությունն ի սկզբանե այն կարծիքին է եղել, որ Ղարաբաղի

հարցը ղարաբաղցիների հարցն է՝ մոռանալով նաև Արցախի անվտանգության երաշխավորը լինելու իր կառավարության պարտավորության մասին, չհիշելով իր՝ բանակցությունները զրո կետից սկսելու, «Արցախը Հայաստան է և վերջ» հայտարարությունների մասին: Փաշինյանը, երևի համոզված լինելով, որ իրեն կհաջողվի մշտապես խաբել հայ ժողովրդին, լռում է այն մասին, որ Արցախի խամաճիկ իշխանություններին ինքն է ժամանակին աջակցել պաշտոն ստանձնելու հարցում, և առ այսօր ձգտում է այդ իշխանությանը պահել իր թելադրանքի ներքո:

Վերջապես, եթե ի սկզբանե իր թիմի հետ համոզված է եղել, որ Արցախն ու Ադրբեջանն իրենց հարցերն իրար հետ պետք է լուծեն, այդ դեպքում Արցախն ու ազատագրված տարածքները հոր բոստանի հե՞տ էր շփոթել, որ նվեր էր տալիս Ադրբեջանին:

Ի վերջո, բանականությամբ օժտված մարդու համար պետք է ակնհայտ լինի, որ Նիկոլ Փաշինյանը ամբողջովին հրաժարվել է Արցախը պաշտպանելու՝ Հայաստանի ազգային-բարոյական և իրավական պարտավորություններից, արտաքին ուժերի թելադրանքով հրաժարվում է ավանդական դաշնակիցներից, հրաժարվում է Ռուսաստանի հետ ռազմական և այլ բնույթի համագործակցությունից և փաստացի պատրաստվում է բացելու Թուրքիայի հետ Հայաստանի սահմանները: Ադրբեջանի ու Թուրքիայի ճնշմամբ նա մինչ այժմ ձեռնամուխ չի եղել և չի լինելու հայկական բանակը լրջորեն զինելու և մարտունակ դարձնելու գործին:

Բանական հայի համար 2 բան պետք է ակնհայտ լինի այլևս. ինքն իրեն պաշտպանելուց հրաժարվելու քաղաքականությունը ոչ թե չեզոքացնում այլ ավելի է սրում թուրք նվաճողների ագրեսիվությունը և երկրորդ. Արցախի հանձնումը ոչ թե բերելու է թուրք հարևանների պահանջների բավարարմանը, այլ անմիջապես վտանգի տակ է դնելու Զանգեզուրը՝ ինչը և ներկայումս տեղի է ունենում: Այլ խոսքով տարիներ շարունակ մեծամիտ, հաստակող ու թուրքասեր Լևոն Տեր-Պետրոսյանն ու Նիկոլ Փաշինյանը խաբել են իրեն, իսկ մեղմացուցիչ դեպքում, իրենք են խաբված եղել:

Նիկոլ Փաշինյանի համար նախորդ իշխանությունների օրոք անարդարություն էր երկրում, որովհետև երկիր թալանողը, բյուջե լափողն ու հովանավորչությամբ զբաղվողները ինքն ու իր ընկերները չէին, իսկ հիմա ամեն ինչ կարգին է, և ամեն ինչ արդար է: Նիկոլ Փաշինյանն իր ու իր հետ քայլածների հարստանալը համարում է ժողովրդի կյանքի բարելավում: Տնտեսական ակտիվության աճի, աշխատավարձերի ավելացման, իշխանավորների բարեկեցության մակարդակի բարձրացման խորապատկերին գրանցվում է բնակչության աղքատության աճ, գնաճի համեմատ եկամուտների շոշափելի անկում: Իսկ ամենատագնապալին այն է, որ նվազում են հույսը, հավատը երկրի ապագայի հանդեպ, մարդիկ երկրից փախցնում



են երեխաներին, ոմանք, հայրենիքում ապրելով, հրաժարվում են Հայաստանի քաղաքացիությունից՝ երեխաներին զինվորական ծառայության չուղարկելու համար: Հայաստանն արյունահոսում է, Հայաստանն ու Արցախը նորանոր ու անդառնալի կորուստների շեմին են: Հայ ժողովուրդն այսօր չունի արտաքին բարեկամներ ու աջակիցներ: Փաշինյանն արձանագրում է փաստը, որ տեղի է ունենում աշխարհակարգերի բախում, և գիտակցաբար երկիրը տանում է գլոբալիզացիայի հորձանուտ, որտեղ Հայաստանին սպառնացող այլասերումն է, ուծացումն ու պետականության կորուստը: Անհուսալի գործընկեր, սեփական պաշտպանությունն օտարներից մուրացող Հայաստանը կարող է մաս մաս լինել թշնամիների և թշնամացված նախկին դաշնակիցների միջև: Հայ ժողովուրդը զգում է իր մաշկի վրա այս սպառնալիքը: Ուռճացող համատարած դժգոհությունը չի վերածվում դինամիկ էներգիայի, որն օրգանիզմից դուրս կփոնկար դավաճանության ներարկված թույնը: Հայաստանը փոթորիկներին հանձնված նավի պես շարունակում է ճոճվել հուսախաբության ու հույսի միջև: ■

Հղումներ

1 https://www.youtube.com/watch?v=j3k6F2mPBcg (մուտք՝ 21.01.2023).

Ռուսաստանի տարածաշրջանային շահերը: Ինչպե՞ս հարաբերվել Մոսկվայի հետ

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Ադրբեջանցի սադրիչների կողմից Բերձորի միջանցքի փակումը վեր հանեց բոլոր այն խնդիրները, որոնք կուտակվել են հայ-ռուսական հարաբերություններում: Այն, որ Մոսկվայի և Երևանի միջև բազում տարաձայնություններ կան, իհարկե հայտնի էր նաև մինչ ադրբեջանական այդ սադրանքը: Ավելին՝ ամենատարբեր առիթներով կողմերը բազմիցս ակնարկել են դրանց մասին: Սակայն առավել սուր ճգնաժամային իրավիճակը, որն ստեղծվել է Արցախի շրջափակման պատճառով, ստիպեց ՀՀ և ՌԴ իշխանություններին մի կողմ դնել դիվանագիտական էթիկետի բոլոր կանոնները և ուղիղ տեքստով մեղադրանքներ հնչեցնել միմյանց հասցեին:

Ստեղծված իրավիճակում Հայաստանին սպառնացող բազում նոր վտանգներից խուսափելու համար չափազանց կարևոր է հասկանալ, թե իրականում ինչ է տեղի ունենում հայ-ռուսական հարաբերություններում, որն է եղած խնդիրների ծագման պատճառը, և, ի վերջո, ինչ են ցանկանում միմյանցից ստանալ Հայաստանն ու Ռուսաստանը: Ընդ որում, այս հարցերին հստակ պատասխանելու համար, որքան էլ տարօրինակ հնչի, այնուամենայնիվ անհրաժեշտ է վերանալ օրվա լրահոսում հրապարակվող հայտարարություններից ու գնահատականներից և փորձել ավելի ընդգրկուն հայացք նետել մեր տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխություններին, դրանց տրամաբանությանն ու Հայաստանի և Ռուսաստանի առավել երկարաժամկետ շահերին:

Եվ այսպես, ի՞նչ խնդիրներ է փորձում լուծել Մոսկվան մեր տարածաշրջանում: 2022 թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» թերթում «Վըստահելի աղբյուր» մակագրությամբ լույս է տեսել մի նյութ, որում, ըստ ամենայնի, ներկայացված է վերոնշյալ հարցի վերաբերյալ ՀՀ իշխանությունների մոտեցումը: Հոդվածագիրը, որը, ըստ բազում հնչեցված, բայց չհերքված ենթադրությունների, հենց ինքը՝ Նիկոլ Փաշինյանն է, գրում է, որ «Ռուսաստանը Հայաստանից համարյա ուզում է այն, ինչ ուզում է Ուկրաինայից, որ այն դառնա «Ռուսաստան-Բելառուս» միութենական պետության կամ Ռուսաստանի մաս»: Հեղինակը նշում է, որ «Ռուսաստանին պետք է ԼՂ հարցի չլուծում, այսինքն, որ ԼՂ հարցը լինի չլուծված, որպես ազդեցության լծակ թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի վրա»: Սակայն, ըստ «հավաստի աղբյուրի», Արևմուտքի հետ կանխատեսելի հակամարտության հետևանքները մեղմելու համար Ռուսաստանում որոշել են դրական հարաբերություններ պահպանել Թուրքիայի հետ և հետագայում օգտագործել թուրքական հաղորդակցական հնարավորությունները՝ արևմտյան շուկաներ դուրս գալու համար: «Այս է պատճառը, որ ԼՂ հարցի Լավրովյան պլանը նախատեսում էր հարավային շրջանների հանձնում Ադրբեջանին, որ Օրդուբադ-Մեղրի-Հորադիզ երկաթուղու և ավտոճանապարհների երթուղին ազատվեր խոչընդոտներից»: Այս իմաստով, ըստ անանուն աղբյուրի, չնայած հրապարակային հայտարարություններին, «Ռուսաստանը ՀՀ տարածքով միջանցքի հիմնական շահառուն է, որովհետև թե՛ Ադրբեջանը, թե՛ Թուրքիան, թե՛ Ռուսաստանն ուզում են, որ ՀՀ տարածքով լինի միջանցք՝ ՌԴ վերահսկողության ներքո: Էականը վերջին գործոնն է, որովհետև ավտոճանապարհ Իրանի տարածքով էլ կա»[1]:

Ռուսաստանի տարածաշրջանային շահերի այս ընկալումը, մեր խորին համոզմամբ, բազում անճշտություններ կամ գոնե ապացույցներ պահանջող ենթադրություններ է պարունակում: Եթե հետևենք Փաշինյանի տրամաբանությանը, ապա պետք է փաստենք, որ 2021 թ. Ռուսաստանում Արևմուտքի դեմ զինված առճակատման գնալու որոշում է կայացվել, ապա այդ բախման մեջ Թուրքիան ընտրվել է որպես հնարավոր դաշնակից, որի հետ ցամաքային կապ հաստատելու ամենահարմար ուղի է ընտրվել Արցախի Հանրապետության արևելյան շրջաններով անցնող ենթադրյալ ճանապարհը (որը, ի դեպ, մինչ այս պահը գոյություն չունի): Եթե այս ամենը ճիշտ է, ապա մի շարք հարցեր են առաջանում: Նախ՝ ինչո՞ւ Մոսկվան ընտրեց գոյություն չունեցող ճանապարհ: Արդյոք ավելի հեշտ չէ՞ր լեզու գտնել Վրաստանի հետ և ապագայում օգտագործել աբխազական երկաթգիծը, որը նախ՝ գոյություն ունի ու հեշտ կարող է բացվել և երկրորդ՝ շատ ավելի կարճ է, քան ողջ Ադրբեջանի, հետո նաև Հայաստանի տարածքով կառուցվելիք երկաթգիծը, որի շինարարական աշխատանքներին պետք է նախորդեր նաև մեծ պատերազմ Հարավային Կովկասում:

Երկրորդ՝ եթե Մոսկվան իսկապես որոշել էր գնալ այդ դժվար ճանապարհով, ապա Ուկրաինայի դեմ հատուկ ռազմական գործողություն սկսելուց առաջ ինչո՞ւ չսպասեց 2020 թ. պատերազմի արդյունքներով ձեռք բերված պայմանավորվածությունների, հատկապես տարածաշրջանային հաղորդակցության ուղիների ապաշրջափակման իրականացմանը:

Երրորդ հարցը, որ տրամաբանորեն առաջանում է «հավաստի աղբյուրի»՝ աշխարհաքաղաքական իրավիճակի նկարագրությունից, վերաբերում է Թուրքիայի հանդեպ Ռուսաստանում ստեղծված վստահության մակարդակին: Փաշինյանը կարծում է, որ Կրեմլում իսկապես մտածում էին, թե տարածաշրջանում «Թուրքիայի աճող դերին» այլևս դիմակայել չկարողացող Ռուսաստանը կարող էր որոշել էլ ավելի նպաստել թուրքական գործոնի աճին Հարավային Կովկասում և հույս ունենալ, որ դրանից հետո կարող է անխոչընդոտ շահագործել Թուրքիայի հաղորդակցական հնարավորությունները: Իհարկե, նման բան չէր կարող լինել: Հետևաբար եթե նույնիսկ բացառենք պաշտոնական Երևանի քաղաքականության ընդգծված հակառուսական ուղղվածությունը, ապա, միևնույն է, կարելի է վստահ պնդել, որ մեր տարածաշրջանում Ռուսաստանի գործունեության շարժառիթներն առնվազն լավ չեն ընկալված ՀՀ իշխանությունների կողմից: Իսկ սա ինքնին արդեն մեծ խնդիր է Հայաստանի համար:

Վերադառնալով վերոնշյալ հարցին, թե ինչ խնդիրներ է փորձում լուծել Ռուսաստանը մեր տարածաշրջանում, փորձենք անդրադառնալ դրանցից ամենաակնհայտներին ու նաև կարևորներին:

ա) Ռուսաստանը ցանկանում է մնալ Հարավային Կովկասի ամենաազդեցիկ տերությունը:

Մեր տարածաշրջանը Ռուսաստանի համար կենսական շահերի գոտի է համարվում: Դարեր շարունակ Ռուսաստանն ամեն ինչ արել է Հարավային Կովկասն իր ազդեցության ոլորտում պահելու համար և այժմ էլ նույնն է շարունակում անել: Մանավանդ հիմա, երբ Ռուսաստանն ակտիվացրել է իր քաղաքականությունը հարակից տարածաշրջաններում (հատկապես Մերձավոր Արևելքում) և Արևմուտքի հետ առճակատման այս թեժ փուլում, Մոսկվայում կա հստակ համոզում այն մասին, որ Հարավային Կովկասի կորուստը կարող է մահացու հարված դառնալ ռուսական պետության համար: Ուստի վերջինս ակտիվ պայքարելու է մեր տարածաշրջանի համար և ամեն գնով այստեղ պահպանելու է իր դոմինանտ դիրքերը:

բ) Ռուսաստանը ցանկանում է պահպանել Արևմուտքի կախվածությունն իր էներգակիր ռեսուրսներից:

Հարավային Կովկասն առանցքային նշանակություն ունի Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության համար: Մոսկվայում քաջ գիտակցում են, որ Կասպից ծովի ավազանից և Միջին Ասիայից Արևմուտք տանող Ռուսաստանի էներգետիկ ուղիների այլընտրանքային ուղիներն անցնում են հենց մեր տարածաշրջանով: Եվ ոչ միայն էներգետիկ ուղիները: Հարավային Կովկասին մեծ տեղ է հատկացված նաև Չինաստանի մշակած «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» հայեցակարգում: Ուստի Ռուսաստանն ամեն ինչ անելու է, որպեսզի իր տարածքը շրջանցող տրանսպորտային և էներգետիկ ուղիները կամ լիարժեք չշահագործվեն, կամ գտնվեն իր վերահսկողության ներքո:

գ) Ռուսաստանը ցանկանում է օգտագործել Հարավային Կովկասը՝ այլ տարածաշրջաններում իր ազդեցությունը մեծացնելու համար:

Հարավային Կովկասում իր ներկայությունը թույլ է տալիս Մոսկվային ոչ միայն քիչ թե շատ ամուր դիրքերից հարաբերություններ կառուցել Իրանի և Թուրքիայի հետ, այլև օգտագործել տարածաշրջանի հնարավորությունները գլոբալ քաղաքականության մեջ, մրցակցային դիրք ունենալ նաև Եվրոպայի, Չինաստանի ու ԱՄՆ-ի հետ շփումներում: Այս առումով Հարավային Կովկասը յուրահատուկ պլացդարմ է, որը թույլ է տալիս Ռուսաստանին հավակնել աշխարհաքաղաքական լուրջ կենտրոնի դերին:

դ) Ռուսաստանը ցանկանում է անվտանգության գոտիներ ունենալ հարակից տարածաշրջաններում:

2008 թ. վրաց-օսական, ապա նաև ռուս-վրացական պատերազմից հետո Ռուսաստանի անվտանգային քաղաքականության մեջ առավել մեծ տեղ է հատկացվել հարակից տարածաշրջաններում սեփական անվտանգային խնդիրները լուծելու հայեցակարգին: Պաշտոնական Մոսկվան մեծ զգուշավորությամբ է վերաբերվում Ռուսաստանին հարող տարածաշրջաններում Արևմուտքի ներկայությանը և հատկապես ռազմական պոտենցիալի մեծացմանը: Ուկրաինական ճգնաժամը, ըստ էության, հենց այդ զգուշավորության դրսևորումներից մեկն է: Իսկ Հարավային Կովկասը, հաշվի առնելով այստեղ ծավալվող էթնոքաղաքական բարդ գործընթացներն ու դրանց հնարավոր ազդեցությունը Հյուսիսային Կովկասում ընթացող զարգացումների վրա, Մոսկվայի համար առանձնահատուկ նշանակություն ունի հենց որպես անվտանգության գոտի, որի կորուստը կարող է մեծ հարված դառնալ Ռուսաստանի ողջ անվտանգային համակարգի համար: Ընդ որում, Հարավային Կովկասում Ռուսաստանին ուղղված մարտահրավերները բխում են ոչ միայն Արևմուտքից, այլև Թուրքիայից:

Ահա սրանք են այն հիմնական խնդիրները, որոնք Ռուսաստանը փորձում է լուծել մեր տարածաշրջանում, և որոնցով պայմանավորված են Կրեմլի քայլերը Հարավային Կովկասում: Իհարկե, քիչ չեն նաև դեպքերը, երբ աշխարհաքաղաքական հակամարտության մյուս հարթակներում խնդիրներ լուծելու նպատակով Ռուսաստանը որոշ զիջումներ է անում իր մրցակիցներին Հարավային Կովկասում: Ցավոք, այդ զիջումները հիմնականում լինում են ի հաշիվ հայկական շահի, և 2020 թ. 44-օրյա պատերազմը դրա ապացույցներից մեկն է: Մյուս կողմից, սակայն, պետք է հստակ գիտակցել, որ Հայաստանի ճիշտ հաշվարկված քաղաքականությունն ու դիվանագիտական քայլերը կարող են բացառել մեր հաշվին սեփական խնդիրները լուծելու Ռուսաստանի հաճախ դրսևորվող արատավոր մարտավարությունը: Սա մի բան է, որը երկար ժամանակ կարողացել են անել ՀՀ նախկին իշխանությունները, և չեն կարողանում անել ներկաները:

Հակասում են արդյոք Ռուսաստանի վերոնշյալ խնդիրներն ու նպատակները Հայաստանի շահերին: Սա երկրորդ կարևոր հարցն է, որի պատասխանը կարող է մեծ օգուտներ կամ վնասներ բերել մեր երկրին: Ուստի այն զգուշավոր մոտեցում է պահանջում

ոչ միայն Հայաստանի իշխանություններից, այլև քաղաքական էլիտաներից: Մեր խորին համոզմամբ՝ այս հարցի պատասխանը, բացասական լինելով, բազում նրբություններ և բացառություններ ունի:

Փորձեմ միտքս ավելի պարզ ձևակերպել: Ո՛չ, Ռուսաստանի տարածաշրջանային շահերը հակոտնյա չեն հայկական երկու պետությունների շահերին: Բայց դա նաև չի նշանակում, որ, սպասարկելով իր շահը, Ռուսաստանը չի կարող վնասել հայկական շահերին: Կարող է, և մենք բազմիցս եղել ենք դրա ականատեսը: Ո՞րն է, ուրեմն, խնդիրը, և ի՞նչ հակասություն կա վերոնշյալում: Ինչպես քիչ առաջ ակնարկեցի, խնդիրը Ռուսաստանին ճիշտ ուղղորդելու հայկական կողմի կարողությունն է: Այլ խոսքով՝ Հայաստանին անհրաժեշտ է Ռուսաստանի հետ շփվելու ճիշտ մարտավարություն: Այդ մարտավարությունը կարող է և խիստ լինել, սակայն չպետք է կրի հակամարտության բնույթ: Դրա պատճառները երկուսն են: Նախ, ինչպես նշեցի, Հայաստանի և Ռուսաստանի տարածաշրջանային հիմնարար շահերը միմյանց հակոտնյա չեն, և երկրորդ՝ հայ-ռուսական հակամարտության մեջ հաջողության հասնելու Ռուսաստանի հնարավորությունները հասկանալի պատճառներով շատ ավելի մեծ են, քան Հայաստանինը:

Վերջին ամիսների զարգացումները վերոնշյալի լավագույն ապացույցն են: Որպես օրինակ դիտարկենք Բերձորի միջանցքի շրջափակումը: Ադրբեջանի այդ սադրիչ գործողության առաջին փուլում ակնհայտ էր դրա ոչ միայն հակաարցախյան, այլև հակառուսական բնույթը: Ադրբեջանցի «ցուցարարները» և զինվորականները ծաղրում էին ռուս խաղաղապահներին, սադրում նրանց, քաշքշում, և այդ ամենն ուղեկցվում էր տեղեկատվական-քարոզչական մեծ արշավով: Ադրբեջանցիների նպատակը պարզ էր. նրանք անում էին ամեն ինչ, որպեսզի խաղաղապահների նյարդերը տեղի տան, և ինչ-որ բախում հրահրվի: Դրանից հետո պաշտոնական Բաքուն կսկսեր բողոքել ռուս խաղաղապահների վարքագծից և օրակարգ կբերեր նրանց խնդիրը լուծելու, ասել է թե՝ Արցախից նրանց հեռացնելու հարցը: Ռուսաստանում մեծ վտանգ էին տեսնում Ադրբեջանի նման կեցվածքում: Նրանք հասկանում էին, որ խաղաղապահների վարկաբեկման արշավն ի վերջո կարող է սպառնալիք դառնալ ոչ միայն Արցախում, այլև ողջ տարածաշրջանում ռուսական ռազմական ներկայության համար: Եվ այն պահին, երբ հայկական կողմը կարող էր օգտվել ռուս-ադրբեջանական ուռճացած հակամարտության պտուղներից, պաշտոնական Երևանը ճիշտ հակառակ քայլն է անում և Ադրբեջանից առավել մեծ եռանդով սկսում է վարկաբեկել Արցախում ծառայություն իրականացնող ռուս խաղաղապահներին: Ցավոք, Երևանի այս վարքագիծը հանգեցնում է շատ կանխատեսելի հետևանքների, և ռուս-ադրբեջանական հակամարտության փոխարեն մենք ստանում ենք հայ-ռուսական հակամարտություն: Բնական է, որ ճիշտ այդ պահից Ադրբեջանը փոխում է ռուս խաղաղապահների նկատմամբ իր վարքագիծը և Արցախի հետագա շրջափակման երկարաձգմամբ նպաստում Մոսկվայի և Երևանի միջև ծագած տարաձայնությունների խորացմանը:

Վերոնշյալ օրինակը, որը, ինչպես արդեն նշել ենք հոդվածի սկզբում, բացահայտում է Հայաստանի և Ռուսաստանի հարաբերություններում կուտակված բազում խնդիրներ, նաև մի շարք կարևոր հարցերի պատասխաններ է տալիս: Այսպես՝ պարզ է, որ ռուս խաղաղապահների ներկայությունն Արցախում այսօր պետք է թե՛ ռուսական և թե՛ հայկական կողմերին: Այսինքն՝ այս հարցում Հայաստանի և Ռուսաստանի շահերը համընկնում են: Սակայն պաշտոնական Երևանի ապաշնորհ (իրականում՝ դավաճանական) քաղաքականության հետևանքով այնտեղ, որտեղ կողմերը կարող էին համագործակցել, նրանք մրցակցում են՝ հուրախություն Ադրբեջանի և Թուրքիայի: Իհարկե, չի կարելի անտեսել նաև այն փաստը, որ Ադրբեջանի կողմից Բերձորի միջանցքի փակումը հնարավոր է դարձել նաև Ռուսաստանի հանցավոր անգործության հետևանքով: Բայց այդ անգործությունն էլ իր պատճառներն ունի, իսկ եթե նույնիսկ պատճառներ չկան, ապա, միևնույն է, Արցախի անվտանգությունը պահանջում է, որ այդ հարցում Երևանը համագործակցի և ոչ թե հակամարտության մեջ մտնի Մոսկվայի հետ:

Հետևաբար եզրահանգումը մեկն է՝ Հայաստանը պետք է կարողանա ճիշտ աշխատել Ռուսաստանի հետ: Միայն այդ դեպքում երկու երկրների տարածաշրջանային շահերը, որոնք հիմնականում համընկնում են, կիրացվեն ոչ թե ի հաշիվ, այլ ի լրացումն մեկը մյուսի:

Բայց կա մեկ այլ կարևոր խնդիր, այն է՝ Հայաստանն ու Ռուսաստանը, հնարավոր է, արդեն հատել են անդառնալիության կետը: Համենայնդեպս, այսօր կարելի է վստահ պնդել, որ երկու երկրների միջև դաշնակցային հարաբերություններ այլևս գոյություն չունեն: Իսկ դա նշանակում է, որ Ռուսաստանը կարող է միանգամայն նոր գործելաոճ որդեգրել: Առաջինը, որ կարելի է ենթադրել Մոսկվայից, «զրո դիվանագիտության» քաղաքականությունն է: Հատկապես եթե Ուկրաինայում ընթացող հատուկ ռազմական գործողությունը հաջող ավարտ ունենա Ռուսաստանի համար (իսկ դրա հնարավորությունները չափազանց մեծ են), ուրեմն հաստատ զրո դիվանագիտություն: Միայն պարտադրանք: Ալիևի ու Փաշինյանի հետ Կրեմլը այլևս ոչինչ չի պայմանավորվելու: Պուտինի վարչակազմը պարզապես ժամանակ է ձգելու և առաջին իսկ հնարավորության դեպքում, որը, կարծում եմ, շատ չի ուշանա, ուժային լուծումներ է պարտադրելու Հայաստանին ու Ադրբեջանին: Փոքր հույսն այն է միայն, որ նախքան փղի՝ հախճապակու կրպակ մտնելն ու այնտեղ ամեն բան փշրելը Հայաստանում վերջապես հնարավոր կլինի իշխանափոխություն իրականացնել և գոնե նոր դեմքերով որոշակիորեն մեղմել ռուսական «արդարադատության» (իսկ իրականում՝ վրիժառության) հետևանքները հայկական երկու պետությունների համար:

Հղումներ

1. «Ինչ է ուզում Ռուսաստանը. ի գիտություն Վեհափառ հայրապետի, երեք նախագահների և փորձագիտական հանրության», 04.10.2022, https://armtimes.com/hy/article/245362 (մուտք՝ 07.01.2023):

Արցախի ապաշրջափակումն ու տարածաշրջանային արձագանքները

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

2022 թ. դեկտեմբերի 12-ին հայկական լրատվամիջոցները հայտնեցին, որ Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիական հագուստով մոտ 500 քաղաքացիներ բնապահպանական գործունեության պատրվակով փակել են Բերձորը (Լաչինի միջանցք)՝ Արցախը Հայաստանի և աշխարհի հետ կապող ճանապարհը: Դա հանգեցրել է 120.000 հայերի, այդ թվում՝ 30.000 երեխաների լիակատար մեկուսացման, ազատ տեղաշարժի և մարդու այլ հիմնարար իրավունքների խախտման: Արցախում սպառվում են անհրաժեշտ բժշկական պարագաները, սննդամթերքը և վառելիքը, իսկ դպրոցները փակ են ջեռուցման բացակայության պատճառով: Ավելին՝ Ադրբեջանը նաև երեք օրով դադարեցրեց Հայաստանից Արցախ մատակարարվող գազը:

Մի շարք ապացույցներ փաստում են, որ բողոքի ակցիան իրական զանգվածային շարժում չէ, այլ հիմնականում բաղկացած է ադրբեջանական հատուկ ծառայությունների անդամներից, զինվորականներից, Ալիևի հիմնադրամի շահառուներից և պետական իշխանությունների այլ աջակիցներից: Նրանք ակնհայտորեն հովանավորվում են պետության կողմից, իսկ նրանց անվտանգությունն ապահովում են Շուշիում տեղակայված ադրբեջանական հատուկջոկատայինները: Նրանք կիրառում են ահաբեկման մարտավարություն, օրինակ՝ բարձր երաժշտություն, ելույթներ, որոնք գովաբանում են Ադրբեջանի զինված ուժերը, և ցուցադրում «Գորշ գայլերի» խորհրդանիշները[1]:

Ցուցարարների սկզբնական պահանջը Լեռնային Ղարաբաղում հանքերի արդյունահանման մշտադիտարկումն էր, սակայն այն ստացավ քաղաքական ենթատեքստ, որը նախատեսում էր Արցախի ղեկավարության հրաժարականը և ադրբեջանական վերահսկողության հաստատումը Բերձորում և ամբողջ Արցախում:

Բնականաբար, նախապայմանները, որոնք առաջ քաշեցին, այսպես կոչված, էկոակտիվիստները, քննարկումների առարկա դարձան նաև հարևան Իրանում և Ադրբեջանի քաղաքական դաշնակից Թուրքիայում:

«ԻՄՆԱ»-ին տված հարցազրույցում Հարավային Կովկասի հարցերով փորձագետ Սալար Սեյֆ օդ-Դինին ընդգծեց, որ Բաքու-Թուրքիա զորավարժությունների անցկացմամբ պարզ դարձավ, որ Ալիևը Հայաստանի հետ թշնամությունը վերածել է Իրանի հետ թշնամության: Նա պարզաբանել է, որ Իրանի ռազմական մուտքը Սյունիք ՆԱՏՕ-ի՝ Թուրանի միջանցքի գաղափարը կյանքի կոչելու փորձի պայմաններում հավանության է արժանացել Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի կողմից և հստակ է, ինչից էլ Բաքուն վտանգ է զգում: Իրանը մտադիր չէ զորքեր ուղարկել կամ ռմբակոծել Բաքվի սահմանները. Իրանի հիմնական խնդիրը Սյունիքի պաշտպանությունն է, որով էլ նա ապահովում է իր սահմանների անվտանգությունը:

Այսպիսով, եթե ադրբեջանական ուժեր ուժ չկիրառեն Սյունիքի՝ Իրանին սահմանակից շրջաններում, ապա կարելի է ասել, որ Իրանը Բաքվի հետ այս հակամարտությունում վիճելի հարցեր չի ունենա:

Հարավային Կովկասի հարցերով փորձագետը հավելեց, որ Ալիևը փորձում է ռազմականացված պահել իր երկրի մթնոլորտը, որպեսզի քողարկի կոռուպցիան և ֆինանսատնտեսական բնագավառում անհրաժեշտ թափանցիկության բացակայությունը: Այդ դեպքում ոչ ոք չի կարող հարցնել, թե ինչու այս երկրի նավթն ազգային չէ, ինչու է ոսկու հանքերի արդյունահանումը Անգլիայի մենաշնորհը, և ինչու են երկու իշխող ընտանիքների հետ կապ ունեցող ընկերությունները կուլ տալիս խոշոր պայմանագրերը:

Սալար Սեյֆ օդ-Դինին նաև ասել է. «Բաքվի ժողովուրդը երեսուն տարի է, ինչ իր ողջ ներուժը կենտրոնացրել է Ղարաբաղում, դեռ մի քանի տարի զբաղված է լինելու Սյունիքով և Իրանով, որպեսզի թալանը շարունակվի, և Անկարան ու Թել Ավիվը զոհ լինեն զենքի վաճառքից»[2]:

Նման պայմաններում Ադրբեջանին սպառնացել է նաև ԻՀՊԿ գեներալ Ալի Ռեզա Թանհային: Վերջինիս խոսքերով՝ Ադրբեջանը չպետք է կրկնի Ուկրաինայի ու Սադամի սխալները և պետք է իմանա, որ Իրանը երբեք չի հանդուրժի իր սահմանների համար որևէ սպառնալիք: «Իրանում և նրա սահմանամերձ շրջաններում անդորրը խախտելուն ուղղված ցանկացած քայլի կհետևի Իրանի Իսլամական Հանրապետության զինված ուժերի վճռական պատասխանը»[3],- ասել է Թանհային:

«ԻՄՆԱ»-ին տված հարցազրույցում Կովկասի հարցերով փորձագետ Բուրհան Հեշմաթին, վերլուծելով Բաքվի վերջին գործողությունները և Ալիևի հայտարարությունները Զանգեզուրի միջանցքի գաղափարը կենսագործելու վերաբերյալ, ընդգծել է, որ բրիտանացիները, սիոնիստները և թուրքերը, պանթյուրքական և ՆԱՏՕ-ի կենտրոնները խստորեն

հետևում են այս ծրագրին, և հատկապես հետաքրքիր է այն, որ ՆԱՏՕ-ն փորձում է տարածքային կապ հաստատել Կովկասի և Կենտրոնական Ասիայի հետ:

Հեշմաթին հավելել է. «Եկեք նկատի ունենանք՝ ինչպես որ Իրանի թշնամիները շատ վճռական են այս ուղղությամբ, Իրանը նույնպես պետք է վճռական լինի դրան դիմակայելու հարցում: Այս ծրագիրը սահմանված է Իրանը շրջափակելու համար, ուստի մենք պետք է փորձենք հակազդել դրան»[4]:

Հեշմաթին ընդգծել է հատկապես այն փաստը, որ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խաղաղապահ ուժերի զորավարժություններն անցկացվելու են Հայաստանում: Եթե տարածաշրջանում այլ պայմաններ լինեին, զորավարժությունները կարելի էր բնական համարել, բայց Ադրբեջանի ու Թուրքիայի՝ այս տարածաշրջանում վարած քաղաքականության պատճառով Կովկասը դարձել և դառնում է ռազմական մրցակցության դաշտ: Օրինակ՝ Ադրբեջանի սխալ գործողությունների պատճառով Իրանը ստիպված եղավ մանևր կատարել երկրի հյուսիս-արևմուտքում՝ զգուշացնելու, որ թույլ չի տա Ադրբեջանին դառնալ սիոնիստական վարչակազմի տարածաշրջանային բազան[5]:

Միաժամանակ իր հակահայկական քարոզչությունն է շարունակում Թուրքիան: Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը հայտարարել է, թե իրենք օգնում են Ղարաբաղի իրենց եղբայրներին, այլ կերպ ասած՝ ադրբեջանցիներին. «Ղարաբաղում մենք օգնության ենք հասնում մեր եղբայրական Ադրբեջանին, նույն կերպ մենք գործեցինք Լիբիայում: Այնտեղ, որտեղ մեր եղբայրներն են, նաև մենք ենք»[6]:

Դեկտեմբերի 29-ին լրագրողների հետ զրույցում Թուրքիայի արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուն, մեկնաբանելով Լեռնային Ղարաբաղում իրավիճակի սրումը, նշել է, որ Անկարան շարունակում է Երևանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ սերտորեն համագործակցելով Բաքվի հետ: «Լաչինի միջանցքում տեղի ունեցած վերջին իրադարձությունները անկեղծության փորձություն կլինեն Հայաստանի համար»[7],- ասել է Թուրքիայի արտգործնախարարը:

Նա նաև հայտարարել է, որ Լեռնային Ղարաբաղում, որը Բաքուն համարում է իր տարածքը, տեղի է ունենում Ադրբեջանի «հարստության յուրացում», ինչն անընդունելի է[8]:

Բաքվում քննադատությունների նոր ալիք է բարձրացել նաև այն դեպքից հետո, երբ ռուս խաղաղապահները ադրբեջանցի լրագրողներին թույլ չտվեցին անցնել Շուշի-Ստեփանակերտ ճանապարհով:

Բաքվի վարչակազմը պնդում է, որ հաղթել է արցախյան պատերազմում և ազատագրել Արցախը, սակայն նրանց թույլ չեն տալիս նույնիսկ մի քանի կիլոմետր անցնել Ստեփանակերտով: Մինչդեռ Իրանի, Հայաստանի, Ռուսաստանի, Իսպանիայի և Շվեդիայի քաղաքացիները վերջին մի քանի ամիսների ընթացքում հեշտությամբ մուտք են գործել Արցախ և Ստեփանակերտ[9]:

Այսպիսով՝ արդեն մեկ ամիս է, ինչ Բաքվի հակահայ իշխանությունները ամբողջ աշխարհի աչքի առաջ «գերի» են վերցրել շուրջ 120.000 հայերի և

բնապահպանական գործունեության պատրվակով Արցախը կանգնեցրել հումանիտար ճգնաժամի առաջ: Չնայած միջազգային հանրության մեղադրանքներին ու սպառնալիքներին՝ Ադրբեջանը շարունակում է իր հայատյաց գործողությունները և բավականին հաջողությամբ կատարում է տարածաշրջանում թուրքական պանթյուրքիստական քաղաքականության շղթայի իր պարտավորությունները: Թե դեռ որքան Լաչինի միջանցքը կմնա ապաշրջափակման մեջ, պարզ չէ, սակայն մի բան հստակ է, որ միայն դիմադրության միջոցով հնարավոր կլինի դուրս գալ տարածաշրջանային դերակատարների քաղաքական շահերի բախման կիզակետից: Ձիջելով Արցախը՝ Հայաստանն աստիճանաբար զիջելու է Սյունիքը՝ դանդաղորեն կորցնելով իր ազգային-պետական ինքնությունը: ■

Օգտագործված աղբյուրներ

1. Տես https://evnreport.com/spotlight-karabakh/weaponizing-blockade-with-the-intent-to-ethnically-cleanse/ (մուտք՝ 10.01.2023):
2. https://www.isna.ir/news/1401091610865/%D8%B4%DB%8C%D9%81%D8%AA-%D8%AF%D8%B4%D9%85%D9%86%DB%8C-%D8%B9%D9%84%DB%8C-%D8%A7%D9%81-%D8%A7%D8%B2-%D8%A7%D8%B1%D9%85%D9%86%D8%B3%D8%AA%D8%A7%D9%86-%D8%A8%D9%87-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86 (մուտք՝ 10.01.2023).
3. https://t.me/KarabakhRu/29448?fbclid=IwAR0Pb8xjx7BkS60lpktwFou60u0xYYXt4WnBXDSzdxwkG8JxIfhovyDvtPg (մուտք՝ 10.01.2023).
4. https://t.me/Real_Qafqaz/3691?fbclid=IwAR2DFxR89Tf5i8R8NQFpENg8RASa853Kit8MjPUT_IQEisEBggn2dMT9ekk (մուտք՝ 10.01.2023): (մուտք՝ 10.01.2023).
5. Տես ՝ նույն տեղում(մուտք՝ 10.01.2023):
6. https://t.me/KarabakhRu/29435?fbclid=IwAR0J2WVA8C9JsDaLUbwZrSQa5e8XNE-5Z5sj2v1uEV-X9Wc7HyRhTEeHk7w (մուտք՝ 10.01.2023).
7. Տես https://regnum.ru/news/polit/3765962.html (մուտք՝ 10.01.2023).
8. Տես ՝ նույն տեղում (մուտք՝ 10.01.2023):
9. Տես https://t.me/ir_Azariha/15590?fbclid=IwAR1bkoHaZolzyX6U48KPgk3LJyChiYHg0-KlXt-HMtRDLHyM-aQmYQrIBN4 (մուտք՝ 10.01.2023):

Հայաստանի ու Ադրբեջանի հանդեպ իրանական կողմի տրամադրությունները

Ժաննա Վարդանյան
Իրանագետ

«Մենք ռազմավարական սխալ ենք գործել: Առաջին սխալն այն էր, որ փակել ենք Հայաստանի հետ սահմանը: Սրանով մենք թույլ ենք տվել, որ տարածաշրջանի աշխարհաքաղաքական հավասարակշռությունը թեքվի Իսրայելի և Թուրքիայի կողմը, ինչը երկարաժամկետ հեռանկարում իր ազդեցությունն է ունենալու մեր անվտանգության վրա»[1],- Արցախյան երրորդ պատերազմի ավարտից օրեր անց նման գնահատական էր հնչեցրել Եվրասիայի և Կովկասի հարցերով իրանցի փորձագետ Շոահիբ Բահմանը:

Սա պատերազմից հետո իրանական կողմի մտահոգությունների ամենացայտուն արտահայտություններից է: Բայց ընդամենը մեկը, քանի որ 2020 թվականի պատերազմում Հայաստանի պարտությունն Իրանը ընկալեց նաև որպես իր պարտություն: Պատճառը պատերազմի վերջնարդյունքով ուժերի վերադասավորումն էր ի վնաս Իրանի, մասնավորապես՝

- Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունների սերտացումը,
- Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների սերտացումը և Իրանի սահմանների հարևանությամբ իսրայելական ուղղակի և անուղղակի ներկայության ամրապնդումը,
- Բաքվի շարունակական նկրտումները Հայաստանի տարածքի նկատմամբ, մասնավորապես՝ այսպես կոչված միջանցքի պահանջը և այլն:

Վերլուծելով նոր իրադրությունը՝ պատերազմից հետո իրանական փորձագիտական դաշտը մշտապես մատնանշել է Հայաստանի ու Իրանի համար ստեղծված անվտանգային սպառնալիքներն ու դրանց չեզոքացման համար անհրաժեշտ քայլերը: Նորահայտ մարտահրավերներին դիմակայելու համար պաշտոնական Թեհրանն ակտիվացրել է իր քաղաքականությունը Հարավային Կովկասում: Այդ քաղաքականությունը երկու տարվա ընթացքում հարմարեցվել է նաև ընթացիկ զարգացումներին:

Պատերազմի ավարտից հետո՝ շուրջ մեկ տարի, Թեհրանը փորձում էր Հայաստանի և Ադրբեջանի հետ ակտիվորեն հարաբերվել թե՛ դիվանագիտական և թե՛ տնտեսական ոլորտներում: Թեհրանը նախ փորձեց առաջ տանել «3+3» ձևաչափը, և չնայած այդ նախագիծը ձախողվեց, Իրանը մինչ օրս շեշտում է դրա գործարկման կարևորությունը:

Տնտեսական առումով Ադրբեջանի դեպքում շեշտը դրվեց գրավված տարածքներում վերականգնողական աշխատանքներին մասնակցելու վրա. տարբեր մակարդակներով և բազմիցս Թեհրանից պատրաստակամություն հայտնեցին մասնակցելու շինարարական աշխատանքներին, օրինակ՝ մզկիթների

վերակառուցմանը, վերանորոգմանը, ականազերծման աշխատանքներին և այլն: Դա, սակայն, տեղի չունեցավ, քանի որ Ադրբեջանն այդ աշխատանքները վստահեց թուրքական ու իսրայելական ընկերություններին՝ նաև այդպես հատուցելով պատերազմի ընթացքում նրանց օժանդակության դիմաց:

Հայաստանի դեպքում էլ իրանցիներն ակտիվություն ցուցաբերեցին թուրքական ապրանքներն իրանականով փոխարինելու, ինչպես նաև ենթակառուցվածքային նախագծերին մասնակցելու հարցերում:

Թեհրանի այս ակտիվությունն ուղեկցվում էր տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխությունների անթույլատրելիության մասին հայտարարություններով, որոնք, բնականաբար, դժգոհությամբ էին ընդունվում Ադրբեջանում:

Ի վերջո, 2021 թ. աշնանը Բաքու-Թեհրան հարաբերությունները խիստ սրվեցին, ինչի շարժառիթ հանդիսացան Արցախ իրանական բեռնատարների ելումուտը, Ադրբեջանի կողմից Գորիս-Կապան ավտոմայրուղու մի հատվածի օկուպացիան ու իրանցի վարորդների ձերբակալությունը: Լարվածությունն ուղեկցվեց երկու երկրների պաշտոնյաների կողմից միմյանց հասցեին սպառնալիքներով ու նախազգուշացումներով, ՋԼՄ-ների քարոզչական գրոհներով:

Լարվածության որոշակի թուլացումից հետո Բաքուն ու Թեհրանը տնտեսական ոլորտում համագործակցության մի քանի պայմանավորվածություններ ձեռք բերեցին: Բայց հարաբերությունները հարթ չէին նաև 2022 թ., և աշնանը լարվածությունն աննախադեպ մակարդակի հասավ: Այն պահպանվում է մինչ օրս, և այդ պայմաններում իրանական լրատվական, փորձագիտական դաշտում որոշակի փոփոխություններ են նկատվում:

Իրանում հստակ գիտակցում են, որ Ադրբեջանի ու Թուրքիայի վարած քաղաքականությունն անմիջական

սպառնալիք է նաև իրենց համար, ուստի կարևորում են Հայաստանի հետ փոխգործակցությամբ այդ սպառնալիքների չեզոքացումը: Այս համատեքստում հետաքրքրական են նաև հայ-ադրբեջանական հարաբերությունների սրացումներին իրանական մամուլի օպերատիվ արձագանքները, հայկական կողմի տեսակետները ներկայացնելու հարցում բաց մոտեցումը: Վերջին շրջանում հայ փորձագետները մի շարք հարցազրույցներ են տվել իրանական ՋԼՄ-ներին, որոնց թվում և՝ տողերիս հեղինակը, որը հարցազրույց է տվել Իրանի պետական հեռուստատեսության երկրորդ ալիքին, ինչը մեծ աղմուկ է բարձրացրել Ադրբեջանում:

Հատկանշական է, որ իրանական մեդիայում նկատվում է նաև Արցախ անվան ավելի հաճախակի կիրառություն, այդ թվում՝ հեռուստաեթերի ժամանակ: Նշվածը հստակ վկայում է իրանական կողմի տրամադրվածության մասին: Եվ եթե նախկինում իրանական դաշտում ավելի նեղ շրջանակներում էին խոսում այն մասին, որ Իրանի շահերից է բխում Արցախի՝ հայկական կողմի վերահսկողության տակ լինելը, ապա այսօր այդ մասին ավելի բացահայտ են խոսում:

Ընդհանուր առմամբ իրանական մամուլի մոնիթորինգից և փորձագիտական շրջանակների հետ դեմ առ դեմ շփումներից պարզ է դառնում, որ՝

1. Իրանը շահագրգռված է Հայաստանի հետ հարաբերությունների խորացմամբ,
2. Թեհրանը խիստ զգայուն է Իսրայել-Ադրբեջան, Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների սերտացման հարցերում,
3. Թեհրանը զգայուն է Հայաստան-Արևմուտք հարաբերությունների հարցում:

Վերոնշյալն ունի իր բացատրությունը: Իրանում Հարավային Կովկասն ընկալում են որպես իրենց կորցրած տարածք և չեն ցանկանում կորցնել նաև ազդեցությունն այդ տարածաշրջանում: Այս տարածաշրջանում իր ազդեցությունը մեծացնելու համար Իրանն ակտիվացել է հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո:

Վրաստանի որդեգրած քաղաքական կուրսի պատճառով Իրան-Վրաստան հարաբերությունները չզարգացան այնքան, որքան ցանկանում էր Թեհրանը: Հարաբերությունները հատկապես հաջող ընթացք ունեցան ՀՀ-ի հետ, իսկ Ադրբեջանի դեպքում ուղեկցվեցին մի շարք խնդիրներով:

Արդեն արցախյան պատերազմից հետո Բաքվի քաղաքականությունը Իրանին ստիպեց ավելի շատ կենտրոնանալ հայկական ուղղության վրա: Իրանի համար Հայաստանն այսօր այն կետն է, որից կառչելով կարող է իր ներկայությունն ապահովել Հարավային Կովկասում և վերջնականապես դուրս չմղվել այդ տարածաշրջանից: Ընդ որում, ներկայություն ասելով Իրանում հասկանում են նաև ռազմական ներկայությունը:

Իրանական փորձագիտական դաշտում հատկապես խիստ ընդգծվում է ՀՀ Սյունիքի մարզում իրանական ռազմաբազայի ստեղծման անհրաժեշտությունը: Այդ համատեքստում կարևորվում է հայ-իրանական ռազմական համագործակցության մասին պայմանագրի կնքումը կամ ՀՀ իշխանությունների կողմից Իրանին ուղղված պաշտոնական դիմումը՝ Սյունիքում ներկայություն ունենալու համար: Սրան էր ուղղված նաև Կապանում իրանական հյուպատոսության բացումը, ինչն ապահովեց Իրանի քաղաքական ներկայությունը և մեծ ուղերձ էր ադրբեջանա-թուրքական դաշինքին:

Իրանական կողմի համար հատկապես մտահոգիչ է Ադրբեջան-Իսրայել, Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունների խորացումը: Արցախի օկուպացված



Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարարության շենքը

Խուդաֆերինի կամուրջը , հեռվում՝ ջրամբարը

շրջաններում Իսրայելի կողմից «խելացի գյուղերի» կառուցումը Իրանում ընկալում են որպես Իսլամական Հանրապետությանը լրտեսելու և նրա դեմ գործողությունների հարթակի ստեղծում: Ադրբեջանա-իսրայելական համագործակցության ցանկացած դրսևորում ընկալվում է Իրանի դեմ ուղղված քայլ, այդ թվում՝ երկկողմ փոխայցերն ու տարբեր ոլորտներում համագործակցության խորացումը: Թել-Ավիվում դեսպանատուն բացելու Ադրբեջանի որոշումն էլ հակաիրանական գործողությունների նոր շրջափուլի մեկնարկ որակվեց:

Նույն կերպ Իրանին մտահոգում է նաև Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների խորացումը: Ըստ իրանական կողմի՝ Թուրքիան փորձում է խեղաթյուրել Ադրբեջանի ժողովրդի՝ թե՛ հենց ադրբեջանցիների և թե՛ իրանախոս զանգվածի ինքնությունն ու նրանց թուրքացնել, բացի այդ՝ ծավալում է Ադրբեջանի բնակչության սուննիացման գործընթաց:

Իրանում առաջին հերթին նաև Թուրքիայի ազդեցությամբ են պայմանավորում Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները: Արցախյան երրորդ պատերազմն ու հաջորդիվ ՀՀ տարածքի օկուպացիան ու «Զանգեզուրի միջանցքի» ծրագրի առաջմղումը Իրանում Օսմանյան կայսրությունը վերականգնելու և թուրանական միություն ստեղծելու Թուրքիայի ծրագիր են համարում, Ադրբեջանը՝ գործիք այդ ծրագրում, իսկ Արևմուտքն էլ՝ օժանդակող ուժ:

Իրանական կողմը զգայունությամբ է հետևում նաև Հայաստան-Արևմուտք հարաբերություններին: Իրանական պաշտոնական փորձագիտական մոտեցումն այն է, որ տարածաշրջանի խնդիրները պետք է լուծվեն տարածաշրջանում և տարածաշրջանի երկրների մասնակցությամբ: Իրանական վերլուծական դաշտի գնահատմամբ՝ Արևմուտքին արցախյան հակամարտությունը, դրա լուծումը չեն հետաքրքրում, Հարավային Կովկասն Արևմուտքին պետք է Իրանին ու ՌԴ-ին դիմակայելու համար:

Հետևաբար հայ-ադրբեջանական շփման գծում ԵՄ դիտորդների տեղակայման կամ միջազգային խաղաղապահների մասին հայկական կողմի հայտարարություններն Իրանում անընդունելի են համարում:

«Հարավային Կովկասում խաղաղությունն ԱՄՆ-ի համար ինչ նշանակություն ունի, որ ցանկանա աջակցել դրան: Անգամ եթե ենթադրենք, որ ԱՄՆ-ն իսկապես ձգտում է կայուն խաղաղություն հաստատելու Կովկասում, ինչպիսին կլինի Ռուսաստանի նման ազդեցիկ շահագրգիռ կողմի մոտեցումը Կովկասում ամերիկյան խաղաղության շուրջ, երբ Ուկրաինայի մարտի դաշտում ականատես ենք Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի լայնամասշտաբ առճակատմանը: Կարող ենք պատկերացնել ամերիկյան և բրիտանական խաղաղապահ ուժերին և ՆԱՏՕ-ի նրանց մյուս դաշնակիցներին Ղարաբաղում՝ ռուսական խաղաղապահ ուժերի հետ կողք կողքի: Այսօր միակ երկիրը, որը միջազգային իրավունքի տեսանկյունից Կովկասում միջամտության իրավունք ունի, Իրանն է: Այս ճգնաժամից դուրս գալու միակ լուծումը Լաչինում և Հայաստան-Ադրբեջան լարվածության այլ կետերում իրանցի խաղաղապահների տեղակայումն է ռուս խաղաղապահների կողքին»[2],- իր հոդվածում նման դիտարկումներ է արել Իրանի Կովկասի հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Ջաֆար Խաշեն:

Ընդհանուր առմամբ Իրանի Իսլամական Հանրապետության տրամադրվածությունը նշանակում է, որ նրա հետ մեր հարաբերությունները որակապես նոր մակարդակի բարձրացնելու բացառիկ հնարավորություն է ստեղծվել, թեև իրանական կողմի որոշ ցանկություններ Հայաստանի շահերի տեսանկյունից անընդունելի են: Այնուամենայնիվ փաստ է՝ Ադրբեջանի, Թուրքիայի ու նրանց դաշնակիցների ծրագրերը հակասում են Հայաստանի ու Իրանի ազգային շահերին, հետևաբար դրանց դիմակայելու հարցում երկու երկրները համընկնող շահեր ունեն և պետք է միասնական ճակատով հանդես գան՝ սկսած համատեղ քարոզչական պայքարից մինչև ռազմական ու հատկապես ռազմատեխնիկական համագործակցության զարգացումը: ■

Հղումներ

1. 12.11.2020, نقشه غربی برای قفقاز, Տես https://jamejamdaily.ir/newspaper/item/82094 (մուտք՝ 09.01.2023):

2. Տե՛ս 30.12.2022 ,لزوم استقرار نیروهای حافظ صلح ایرانی در منطقه قفقاز, https://www.tasnimnews.com/fa/news/1401/10/08/2828435/ (մուտք՝ 09.01.2023):

Արցախի շրջափակումը Բաքվի կողմից. «բնապահպանները» և բրիտանական շահը

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դասախոս, պատմ. գիտ. թեկնածու

2022 թ. դեկտեմբերի 12-ից ադրբեջանական կողմը հումանիտար աղետ է ստեղծել արցախահայության համար՝ արգելափակելով Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհը, այլ կերպ ասած՝ բլոկադայի ենթարկելով Բերձորի (Լաչինի) միջանցքը: Բերձորի միջանցքն արգելափակվել է առավոտյան ժամը 10:30-ից, երբ մի խումբ ադրբեջանցիներ՝ իբրև բնապահպաններ, բռնազավթված Շուշի քաղաքի մերձակայքից տաղավարներ կանգնեցրին ճանապարհի ողջ երկայնքով: Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ Երևանն ու Ստեփանակերտը մտահոգություն են հայտնել և ռուս խաղաղապահներին արձագանքելու կոչ արել:

Հատկանշական է, որ սա Հայաստան-Արցախ կապը կտրելու երկրորդ դեպքն է այն բանից հետո, երբ նույն դեկտեմբեր ամսին դադարեցվեց երթևեկությունը Հայաստանի և Արցախի միջև, քանի որ քաղաքացիական հագուստով ադրբեջանցիները դեկտեմբերի 3-ին երեք ժամով փակել էին ճանապարհը:

Իրականում սա իրադարձությունների զարգացման միանգամայն սպասելի սցենար էր, հատկապես այն բանից հետո, երբ ադրբեջանական ԶԼՄ-ներում հայտնվեցին տեղեկություններ, որ ռուս խաղաղապահների ժամանակավոր տեղակայման գոտում շարունակվում է արժեքավոր պաշարների, այդ թվում՝ օգտակար հանածոների «թալանը»:

Երկու դեպքում էլ ցուցարարները մեղադրել են տարածաշրջանում տեղակայված խաղաղապահ ուժերին այն բանում, որ նրանք ադրբեջանցի բնապահպաններին թույլ չեն տվել վերահսկել Մարտակերտի շրջանի հանքարդյունաբերությունը: Ցուցարարները, խաղաղապահների «անգործությունը» դատապարտող ցուցապաստառները ձեռքներին, պահանջել են, որ իրենց հետ խոսի ռուսական խաղաղապահ ուժերի հրամանատար գեներալ Անդրեյ Վոլկովը[1]:

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը բազմիցս կոչ է արել խաղաղապահ ուժերին թույլ տալու, որ ադրբեջանցի պաշտոնյաներն ու մասնագետները մուտք գործեն ռուս խաղաղապահների հսկողության տակ գտնվող տարածք՝ գնահատելու ենթադրյալ հանքարդյունաբերությունը, իսկ խաղաղապահներին՝ այդ տարածքում «կանխելու բնական ռեսուրսների ապօրինի շահագործումը»:

Ադրբեջանական կողմը հայտարարում է, որ տարածաշրջանում ապօրինի արդյունահանումներ են եղել, «հատկապես Դրմբոնի ոսկու և Կաշենի պղնձամոլիբդենային հանքավայրերում», և պնդում է, որ հանքարդյունաբերությունը էկոլոգիական բացասական հետևանքներ է ունեցել[2]:

Դեկտեմբերի 3-ին և 7-ին ադրբեջանական կողմի ներկայացուցիչները և խաղաղապահ ուժերի բարձրաստիճան պաշտոնյաները հանդիպումներ են ունեցել՝ քննարկելու «հանքավայրերի ապօրինի շահագործումը» և բնական պաշարների արդյունահանման տարածքների մշտադիտարկման կարգը:

Դեկտեմբերի 10-ին համաձայնեցվել է ադրբեջանցի մասնագետների մոնիթորինգային այցը Մարտակերտի շրջանի հանքեր, սակայն այն չի կայացել, քանի որ շրջանի բնակիչները և հանքարդյունաբերական կազմակերպության աշխատակիցները հավաքվել են և արգելել խմբի մուտքը հանքավայրերի տարածք: Արցախի պաշտոնական լրատվամիջոցները հայտնել են, որ գործողությունը տեղի է ունեցել այն պատճառով, որ այցը համաձայնեցված չի եղել Ստեփանակերտի իշխանությունների կամ հանքավայրերը շահագործող կազմակերպության հետ: Դեռևս դեկտեմբերի 11-ին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը բողոքի նոտա է հղել Ռուսաստանին՝ պահանջելով հնարավորություն՝ «անխոչընդոտ մուտք գործելու» համապատասխան տարածքներ, և նման այցերի ցանկացած խոչընդոտ կամ պայման որակել է «անընդունելի»[3]:

Այստեղ ուշադրության է արժանի այն, որ երկու դեպքում էլ ցուցարարների կազմում ադրբեջանական «AzerGold» ՓԲԸ աշխատակիցներն էին, որը, ըստ տարբեր աղբյուրների, պատկանում է Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևի դրստերը՝ Լեյլա Ալիևային: Ընդ որում, դեռ 2022 թ. հունիսից ընկերությունը Դաշքեսանի շրջանի ոսկու հանքավայրում վերականգնողական աշխատանքներ էր սկսել: Նշվում էր, որ ընկերության առաջնահերթությունը շրջակա միջավայրի պահպանության համապատասխանությունն է նորմերին և միջազգային չափանիշներին գործունեության բոլոր ոլորտներում[4]:

Ավելի ուշ արդեն բրիտանական «Anglo Asian Mining» ՓԲԸ-ն[5] է բուռն հետախուզական աշխատանքներ սկսել Ադրբեջանի կողմից բռնազավթված Կովսականի շրջանում տեղակայված ոսկու հանքավայրում: Ընկերության ֆինանսական գծով տնօրեն Իլհամ Խալիլովի խոսքերով՝ ընկերությունը պայմանագրեր ունի Արցախում գտնվող Դրմբոնի և Կաշենի հանքավայրերի շահագործման համար, սակայն մինչ այժմ նրանց մուտքը խոչընդոտվում է այդ տարածքներում

ռուս խաղաղապահների ներկայության պատճառով: Միաժամանակ նա նշել է, որ 2023 թ. նախատեսվում է շահագործման հանձնել Ադրբեջանի Ջյաֆարի հանքավայրը[6]: Ասվածի համատեքստում պետք է ընդգծել, որ 2022 թ. հուլիսին Ադրբեջանի կառավարությունը գործարք է կնքել բրիտանական «Anglo Asian Mining» ընկերության հետ ու կոնցեսիոն պայմանագրով մի շարք հանքերի, այդ թվում՝ Կաշենի հանքի շահագործումը հանձնել նրան 3 մլրդ դոլարի դիմաց: Կաշենի հանքավայրն արդեն իսկ շահագործում է Արցախում գրանցված «Բեյզ մեթըլս» ընկերությունը:

Այս իրողությունները թերևս այնքան աչքի չզարնեին, եթե Բերձորի միջանցքի արգելափակմանը զուգընթաց խաղի մեջ չմտներ նույն ինքը՝ «Anglo Asian Mining» ընկերությունը: 2022 թ. դեկտեմբերի 20-ին հայտնի դարձավ, որ այդ ընկերությունը պաշտոնական նամակով դիմել է միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա պետություններին՝ Արցախում իր բիզնես գործունեության և ներկայումս «ապօրինի շահագործվող» հանքավայրերում հանքարդյունաբերական իրավունքների առնչությամբ:

Կոչն ուղղված է մի շարք միջազգային կազմակերպությունների և կառավարությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի, ԱՄՆ Պետդեպարտամենտի, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության և Եվրամիության բարձրաստիճան ներկայացուցիչներին: Ստացված տեղեկություններով՝ «Anglo Asian Mining» ընկերությունը դիմել է այս կառույցներին, որպեսզի նրանց աջակցությամբ վերականգնվեն իր իրավունքները, և աշխատակիցներն անարգել մուտք գործեն Դրմբոնի ու Կաշենի հանքավայրեր և Արցախի հարակից տարածքներ[7]: Հայտնի է նաև, որ դեռևս 2006 թ. ընկերությունը նմանատիպ նամակներով դիմել էր միջազգային նույն կառույցներին՝ իր սեփականության իրավունքի գերակայությունը հաստատելու հարցով:

Ըստ էության, Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամի հիմնական և ամենակարևոր պատճառներից մեկը բրիտանական ընկերության և ադրբեջանական իշխանությունների կողմից հանքավայրերի անարգել շահագործման համար համապատասխան պայմանների ստեղծումն է: Սակայն չպետք է բացառել նաև տարբեր ուժերի կողմից ռուսական խաղաղապահ առաքելությունը նսեմացնելու և Ռուսաստանին վարկաբեկելու վարկածը:

Գաղտնիք չէ, որ 2020 թ. 44-օրյա պատերազմը դադարեցվել է Ռուսաստանի միջնորդությամբ՝ նոյեմբերի 9-ի տխրահռչակ փաստաթղթի ստորագրմամբ: Մինչ միջազգային հանրությունը կամ, այսպես ասած, քաղաքակիրթ երկրները ձևացնում էին, թե կողմ են տարածաշրջանում խաղաղությանը և միայն դատարկ հայտարարություններ էին հնչեցնում պատերազմը դադարեցնելու անհրաժեշտության մասին, Ռուսաստանը հարցը տեղում կարգավորեց ու դարձավ Երևանի և Բաքվի միջև բանակցային գործընթացի հիմնական մոդերատորը:

Իրավիճակը սկսեց կտրուկ փոխվել այն բանից հետո, երբ ԱՄՆ-ն ու ԵՄ-ը փորձեցին ներգրավվել հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացում՝ առաջ մղելով իրենց հետաքրքրություններն ու անտեսելով Ռուսաստանի շահը:

Այսպես կոչված բրյուսելյան ձևաչափի ի հայտ գալուց հետո էր, որ իրավիճակը սկսեց ապակայունանալ, իսկ կարգավորման գործընթացը սկսեց ընթանալ ավելի դանդաղ և ոչ այն ուղղությամբ, որը կնպաստեր տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը: Դրա հետևանքով հայ-ադրբեջանական սահմանին առավել հաճախակի են դարձել ադրբեջանական կողմի սադրանքները և կրակոցները: Բազմաթիվ սադրիչ գործողություններ են իրականացվել նաև Արցախում՝ ռուս խաղաղապահների պատասխանատվության գոտում, սակայն դրանք արագորեն ճնշվել են Արցախի իշխանությունների կողմից:

Ակնհայտ է, որ սադրանքների հետևում կանգնած էին և են ուժեր, որոնք խնդիր են դրել նսեմացնելու ՌԴ խաղաղապահ առաքելությունը և հասնելու խաղաղապահների դուրսբերմանը Արցախից:

Հայաստանի իշխանություններն այսօր նույնպես գտնվում են արտաքին լուրջ ճնշման ներքո, ուստի պաքներն ամբողջությամբ ուղղում են դեպի Ռուսաստան: Հայ իշխանամետ պատգամավորների և պետական պաշտոնյաների որոշ հայտարարություններ Ռուսաստանի դեմ ոչ կառուցողական են և բացասաբար են անդրադառնում իրավիճակի վրա:

Հայաստանում ակտիվացել են նաև արևմտամետ հասարակական-քաղաքական տարբեր ուժեր, որոնք զբաղված են Ռուսաստանի վարկաբեկմամբ և միաժամանակ ադրբեջանցիների հետ գործում են Հայաստանի շահերի դեմ:

Մնում է հուսալ, որ Հայաստանի քաղաքացիները, որոնք մտածում են ապագայի մասին, կգիտակցեն, որ ստեղծված պայմաններում ռուս խաղաղապահների հեռանալու և ռուս-հայկական հարաբերությունների հետագա վատթարացման դեպքում Հայաստանի Հանրապետությունը հայտնվելու է Թուրքիայի վերահսկողության ներքո, որը տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերի ուղեկցորդն է, ինչպես նաև ՆԱՏՕ-ի անդամ: Թե դրանից հետո ինչ ճակատագիր բաժին կհասնի հայ ժողովրդին, բոլորիս քաջ հայտնի է պատմությունից: ■

Հղումներ

1. Տես «Экоактивистка: Будем стоять здесь до тех пор, пока не приедет командующий миротворцами», https://report.az/ru/karabakh/ekoaktivist-budem-stoyat-zdes-do-teh-por-poka-ne-priedet-general-major-volkov/ (մուտք՝ 09.01.2023):
2. Տես «Почему жители Нагорного Карабаха вторые сутки живут в блокаде», https://dron.media/detali/Nagorni-karabakh-blokada (մուտք՝ 09.01.2023):
3. Տես «Азербайджан направил ноту России в связи с деятельностью миротворцев», https://report.az/ru/vneshnyaya-politika/azerbajdzhan-napravil-notu-rossii-v-svyazi-s-deyatelnostyu-mirotvorcev/ (մուտք՝ 09.01.2023):
4. Տես «ЗАО AzerGold начало первые рекультивационные работы на золотоносном месторождении», https://azertag.az/ru/xeber/ZAO_AzerGold_nachalo_pervye_rekultivacionnye_raboty_na_zolotonosnom_mestorozhdenii-2165948 (մուտք՝ 09.01.2023):
5. Ադրբեջանում ոսկու հանքավայրերի զարգացման օպերատոր:
6. Տես «Anglo Asian Mining представила властям Азербайджана программу разведки золотоносного месторождения в Зангилане», http://interfax.az/view/878975 (մուտք՝ 09.01.2023):
7. Տես «Anglo Asian Mining writes to international organisations in respect of mining rights in Karabakh», https://www.proactiveinvestors.co.uk/companies/news/1001723/anglo-asian-mining-writes-to-international-organisations-in-respect-to-mining-rights-in-karabakh-1001723.html (մուտք՝ 09.01.2023):

Հայաստան-Հնդկաստան հարաբերությունների ընթացքն ու հեռանկարները

Արաքս Փաշայան
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

2022 թ. նոյեմբերի 28-29-ը Երևանում՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում, տեղի ունեցավ «Հայաստան-Հնդկաստան. հազարամյա հարաբերությունների նոր խթաններ» խորագիրը կրող հայ-հնդկական առաջին միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էր ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հետ համագործակցությամբ: Հնդկական կողմից գիտաժողովին ելույթ ունեցան Ն. Գ. Սանջայ Վերման (Հնդկաստանի արտաքին գործերի նախարարության Արևմուտքի քարտուղար), Ջեյ Կանսարան («Հնդկահայ բարեկամություն» ՀԿ հիմնադիր (ամերիկյան մասնաճյուղ), «Stellar IT Solutions»-ի ռազմավարական խորհրդական), Սունջոյ Ջոշին («Observer Research Foundation»-ի նախագահ, Դելի), Ն. Գ. Ռինա Պանդեյը (Հայաստանում Հնդկաստանի նախկին դեսպան (2005-2009)), Ռ. Կ. Սոհնին (Ազգային անվտանգության և ռազմավարական հետազոտությունների ու միջազգային անվտանգության ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, Դելի, գեներալ-լեյտենանտ (պաշտոնաթող)), Թեջաս Սանջայ Պագարը (Հայաստանում Հնդկաստանի դեսպանության երկրորդ քարտուղար), Ռանանջայ Անանդը («Հնդկահայ բարեկամություն» ՀԿ և Հնդկական մշակութային կենտրոնի համահիմնադիր ու նախագահ) :

Գիտաժողովը նվիրված էր Հայաստան-Հնդկաստան դիվանագիտական հարաբերությունների հաստատման երեսնամյակին: Այն վեր հանեց այն հետաքրքրությունների շրջանակը, որոնք միավորում են կողմերին: Առաջ քաշվեցին թեզեր եղած խնդիրների ու հեռանկարների վերաբերյալ: Լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցի ժամանակ Սունջոյ Ջոշին նշեց. «Հայերը մաս են կազմել Հնդկաստանով անցնող հնագույն առևտրային ուղիներին: Նրանք պատասխանատու են եղել առևտրի և գործարարության համար: Ես հայերին կկոչեի առաջին գլոբալիստներ: Նրանք այս աշխարհը գլոբալացրել են շատ ավելի առաջ, քան այսօրվա գլոբալացումը կմեկնարկեր: Այսօր էլ հայկական սփյուռքը շարունակում է նույնը»:

Հոդվածում կփորձենք ամփոփել հայ-հնդկական հարաբերությունների արդի հիմնախնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև գիտաժողովի շրջանակներում փորձագետների հնչեցրած թեզերը:

Հայ-հնդկական հարաբերությունները պատմական համատեքստում

Հայ-հնդկական հարաբերությունները դարավոր պատ-

մություն ունեն: Հայերին և հնդիկներին միավորում են քաղաքակրթական, նաև լեզվական առնչություններն ու ծագումնաբանական ընդհանրությունները: Պատմական տարբեր շրջափուլերում հայերը տարաբնույթ կապեր են ունեցել Հնդկաստանի հետ: Սակայն հայկական առաջին համայնքները Հնդկաստանում ձևավորվել են XVI դարում, որոնց բնակիչները հիմնականում վաճառականներ էին, պետական և զինվորական ծառայողներ: Այդ համայնքները ստվարացել են XVII-XVIII դդ. (շուրջ 20-25 հզ. մարդ), երբ բազմաթիվ պարսկահայեր բնակություն են հաստատել Հնդկաստանի շուրջ 20 քաղաքներում և առևտրակայաններում: Սկզբնական շրջանում հայերը Հնդկաստանում ներգրավված էին առևտրի մեջ՝ օգտագործելով նավահանգիստներն ու ծովային ճանապարհները. զբաղվել են մետաքսի, կտորեղենի, համեմունքների, աղի, պարարտանյութերի, թանկարժեք քարերի և այլ ապրանքների առևտրով:

Առաջինը հայ հասարակական-քաղաքական միտքը ձևավորվել է Հնդկաստանում 18-րդ դարում: Հայկական անկախ պետականության համար մղվող երկարատև պայքարի տեսական և գործնական քայլերը մշակվել են հենց Հնդկաստանում, որտեղ գործել են հասարակական և մշակութային ուղղվածությամբ հայկական խմբակներ: Դրանց մեջ հանրահռչակվել է հատկապես Մադրասի խմբակը: 18-րդ դարի երկրորդ կեսին Հնդկաստանում ազգային թեմաներով և դասական հայերենով գրվել ու հրատարակվել են բազմաթիվ արժեքավոր ստեղծագործություններ: 1772 թ. Մադրասում հիմնվել է առաջին հայկական տպարանը, որտեղ 1794 թ. լույս է տեսել հայկական առաջին տպագիր ամսագիրը՝ «Ազդարարը» (Հարություն

Շմավոնյանի խմբագրությամբ), որը հրատարակվել է մինչև 1796 թվականը: 1773 թ. Մադրասում լույս է տեսել հայկական անկախ պետականության վերաբերյալ Հակոբ Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունը, որում Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել «սահմանադրական հանրապետություն» հասկացությունը: 1772-1773 թթ. Մադրասի հայկական տպարանում լույս է տեսել Մովսես Բաղրամյանի՝ տեսական դրույթներ պարունակող «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» հայտնի գրքույկը: 1783 թ. Շահամիր Շահամիրյանը Մադրասում հրատարակել է «Տետրակ որ կոչի նշաւակը», որը Մադրասի հայերի իրավունքների և համայնքի կանոնադրության մասին է: Այն հետագայում ներդրվեց աշխարհի տարբեր հատվածներում հայկական համայնքային կյանքի կանոնադրության մշակման հիմքում:

Մեծ Բրիտանիայի կողմից Հնդկաստանի գաղութացմանը զուգահեռ, հասարակական և տնտեսական հանգամանքներով պայմանավորված, հնդկահայ համայնքը 19-րդ դարում սկսեց անկում ապրել: Ներկայումս Հնդկաստանի հայկական գաղութն այլևս գործոն չէ: Բենգալյան նահանգում այժմ կան հինգ հայկական կանգուն եկեղեցիներ, որոնցից երեքը գտնվում են հայաշունչ Կալկաթա քաղաքում: Դրանց մեջ է նաև Կալկաթայի ամենահին քրիստոնեական եկեղեցին՝ Ս. Նազարեթը (կառուցվել է 1707 թ.), ինչպես նաև Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը (հիմնվել է 1821 թ.), որը 18-րդ դարի երկրորդ կեսից Կալկաթայում սկիզբ առած հայկական կրթական-դպրոցական շարժման ծնունդ էր: Հայկական եկեղեցիներից ու մշակութային արժեքներից շատերն այսօր վերանորոգված են և բարվոք վիճակում են: Հնդկաստանում թեև չկան նշանավոր հայեր, բայց կան հայկական ծագում ունեցող հայտնի գործիչներ:

Հայաստան-Հնդկաստան հարաբերությունները Հարավային Կովկասում Հնդկաստանի արտաքին քաղաքականության համատեքստում

Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասը Հնդկաստանի արտաքին քաղաքականության գերակայություն երբևէ չի եղել: Այս ուղղությամբ Նյու Դելին գուցե տեսլական ունեցել է, սակայն գործնականում այն չի դրսևորվել՝ պայմանավորված Հնդկաստանի ոչ բավարար ներուժով: Հնդկաստանը Հարավային Կովկասի հանրապետություններից յուրաքանչյուրի հետ ունեցել է ուրույն հարաբերություններ: Հնդկական «փափուկ ուժին» տարածաշրջանը վաղուց էր ծանոթ, որը ձևավորվել էր դեռևս խորհրդային տարիներին: Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում հնդկական ֆիլմերը, երգերը, համեմունքները, դեկորատիվ արվեստի տարրերն ու հագուստի պարագաները որոշակի ժողովրդականություն միշտ էլ ունեցել են: Հետխորհրդային շրջանում և ներկայումս էլ տնտեսական առումով Հնդկաստանի հարաբերություններն առավել ընդլայնված են Ադրբեջանի հետ: Ադրբեջանը և Հնդկաստանը վաղուց ունեն բարեկամական և համագործակցային հարաբերություններ: Բաքուն երկար տարիներ է, ինչ Նյու Դելիի հիմնական առևտրային գործընկերն է Հարավային Կովկասում: Հատկանշական է, որ երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը վերջին շրջանում հասել է 1.1 մլրդ դոլարի: Ադրբեջանում կա ավելի քան 200 հնդկական ընկերություն՝ մոտ 1.2 մլրդ դոլար ներդրումով: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու ստեղծումից հետո հնդկական նավթային ընկերությունները սկսեցին զգալի քանակությամբ հում նավթ գնել Ադրբեջանից: Երկկողմ առևտրի մաս կազմեցին նաև երկրորդական նշանակության ապրանքները:

Հայ-հնդկական գիտաժողովը ՀՀ ազգային ակադեմիայում. 28-29 նոյեմբերի 2022 թ.

Վերջին շրջանում, բայց հատկապես 2020 թ.-ից հետո Ադրբեջանի և Հնդկաստանի հարաբերություններում որոշակի սառնություն առաջացավ: Հիմնական պատճառներից մեկը Ադրբեջանի հարաճուն հարաբերություններն են Պակիստանի հետ, որի հետ Հնդկաստանը խորքային հակասություններ ունի. Ջամուի և Քաշմիրի հիմնահարցն ու դրանից բխող անվտանգային խնդիրները Հնդկաստանի համար շարունակում են մնալ զգայուն թեմաներ: Ադրբեջանը և Թուրքիան ակտիվորեն աջակցում են Պակիստանին միջազգային հարթակներում: Այս պարագայում Թուրքիայի, Պակիստանի և Ադրբեջանի միջև եռակողմ ռազմավարական համագործակցությունը ևս անվտանգային սպառնալիք է Հնդկաստանի համար: Թերևս դա է այն պատճառներից մեկը, որ Հնդկաստանի կառավարությունը որոշեց վերանայել Ադրբեջանի տարածքով «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի անցման հնարավորությունը: Ջուգահեռաբար Հայաստանը Հնդկաստանից առաջարկություն ստացավ, որ ճանապարհն անցնի Հայաստանով:

Ներկա փուլում որոշակի լարվածություն Հնդկաստան-Ադրբեջան հարաբերություններում այնուամե-

նայնիվ կա: 2022 թ. հունիսի 9-ին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարություն է կանչվել Ադրբեջանում Հնդկաստանի դեսպանը, որին փոխանցվել է Բաքվի դժգոհությունը Հնդկաստանում իսլամոֆոբիայի առնչությամբ: Պատճառը իբրև թե Հնդկաստանի իշխող կուսակցության բարձրաստիճան անդամների՝ իսլամի և Մուհամեդ մարգարեի մասին վիրավորական արտահայտությունն է: Վերջին շրջանում Ադրբեջանում Հնդկաստանի դեմ բացասական դիսկուրս է ձևավորվել. խոսվում է այն մասին, որ միջազգային տարբեր հարթակներում ադրբեջանական նախաձեռնությունները արգելափակվում են պրոհայկական դիրքորոշում ունեցող Հնդկաստանի կողմից: Թեմայի մաս են կազմում նաև Հնդկաստանի՝ 2022 թ. Բրիքսի գագաթնաժողովին Ադրբեջանին չհրավիրելու հանգամանքը, Հնդկաստանի կողմից Հայաստանին տրամադրվող սպառազինությունը:

Հնդկաստանը մտավախություններ ունի թյուրքական էքսպանսիայի առումով, որի բաղկացուցիչն է Պակիստանը այս կամ այն կերպ: Եթե Թուրքիային և Ադրբեջանին հաջողվի հաստատել ցամաքային կապ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքով», ապա դա Թուրքիային ուղիղ ելք կապահովի դեպի գազով և նավթով հարուստ Կասպից ծով, որտեղ նա ցանկանում է ներգրավվել գազի հանքավայրի համատեղ մշակման ծրագրերում, հնարավոր է՝ Չինաստանի հետ: Թուրքիան կօգտագործի Ադրբեջանի աշխարհագրական դիրքը՝ հասնելու Կենտրոնական Ասիա՝ կապելու թուրանական տարածաշրջանը, խորացնելու իր տնտեսական, էներգետիկ, անվտանգային և մշակութային համագործակցությունը Կենտրոնական Ասիայի հետ, որտեղ նա արդեն շոշափելի ազդեցություն ունի: Ի թիվս այլ գործոնների, այսպես կոչված, միջանցքը կհեշտացնի զենքի ու վարձկանների տեղափոխումը Կենտրոնական և Հարավային Ասիա, այդ թվում՝ Ջամու և Քաշմիր՝ Պակիստանին աջակցելու համար: Թուրքիայի մուտքը Կենտրոնական Ասիա երկարաժամկետ հեռանկարում կսպառնա տարածաշրջանի ազգային անվտանգությանը: Կենտրոնական Ասիայում գերակայության հասնելու համար Թուրքիայի, Չինաստանի և Ռուսաստանի միջև մրցակցությունը, նրանց ռազմաքաղաքական և տնտեսական ընդլայնումը տարածաշրջանում կարող են սահմանափակել Հնդկաստանի ենթակառուցվածքային նախագծերի իրականացումը դեպի հյուսիս, քանի դեռ Հնդկաստանը խաղի վերջնական դերակատար չէ: Հնդկաստանը կարող է հավասարակշռել Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան առանցքը նաև Հայաստանի հետ սերտ համագործակցության միջոցով:

Իսկ Հայաստանի հրամայականը դաշնակիցների հետ համագործակցությամբ թյուրքական աշխարհից եկող անվտանգային սպառնալիքներին դիմակայելն է: Հնդկաստանը և Հայաստանը այս պարագայում բնական դաշնակիցներ են՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ համագործակցության բավական մեծ և չօգտագործված ներուժով:

Հայ-հնդկական հարաբերություններն իրապես անհրաժեշտ է դիտարկել Հարավային Կովկասում Հնդկաստանի կերպափոխվող արտաքին քաղաքականության, հայեցակարգային նոր մոտեցումների, աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական աճող հավակնությունների համատեքստում: Փաստ է, որ վերջին տարիներին Հնդկաստանն սկսել է ավելի մեծ ուշադրություն դարձնել հաղորդակցական կապերին ու դրանցից բխող տնտեսական և քաղաքական համագործակցությունների ընդլայնմանը: Սունջոյ Ջոշիի կարծիքով՝ անցած տարիներին Հնդկաստանն ընդլայնվելու համար չուներ անհրաժեշտ ռեսուրսները: Իսկ ահա վերջին շրջանում Հնդկաստանին հաջողվեց ուշադրությունը բևեռել դեպի Կենտրոնական Ասիա, ապա՝ Հարավային Կովկաս: Պայմանավորված տեղական և միջազգային մարտահրավերներով՝ Հընդկաստանը կարիք ունի ավելի շատ բարեկամների: Իրանը և Կովկասը Հնդկաստանի համար դեպի Եվրասիա հասանելության ուղիներ են: «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը, որի կարևոր բաղկացուցիչներից է «Սև ծով-Կասպից ծով» տարանցիկ միջանցքը, մեծ հնարավորություններ կբացի Հայաստանի համար, մանավանդ եթե Հայաստանն օգտագործելու է բարեկամ Իրանի Չաբահար նավահանգիստը:

«Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը ռազմավարական կարևորություն ունի Հնդկաստանի համար: Չնայած Իրանի հանդեպ կիրառվող պատժամիջոցներին՝ Հնդկաստանը շարունակում է սերտ համագործակցությունը Թեհրանի հետ, որը միջանցքի կարևորագույն մաս է: Այս համատեքստում կարևորվում է նաև Հայաստանը, որի հետ հարաբերություններն ընդլայնվել ու խորացել են վերջին մի քանի տարիների ընթացքում, ինչի ապացույցը ոչ միայն փաստական տվյալներն են, այլև Հնդկաստանի և Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հավաստիացումները:

Հայաստանի և Հնդկաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1992 թ. օգոստոսի 31-ին: ՀՀ առաջին բարձրաստիճան պաշտոնյան, որն այցելել է Հնդկաստան, ՀՀ հիմնադիր նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն էր (1995 թ.), իսկ հնդկական կողմից Հայաստան ժամանած առաջին պաշտոնյան Հնդկաստանի պետնախարար Դիգվիջեյ Սինգհն էր (2003 թ.): 2000 թ. Հայաստանը բացեց իր դեսպանատունը Հնդկաստանում: Դրանից հետո Հնդկաստանի և Հայաստանի միջև կնքվեցին բազմաթիվ հուշագրեր ու համաձայնագրեր, որոնք իրական համագործակցության հիմք ստեղծեցին:

Հայ-հնդկական շփումներն առավել մեծ թափ ստացան 2017-2019 թթ., բայց հատկապես 2020 թ. արցախյան պատերազմից և դրա հետևանքով աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունից հետո: 2017 թ. նոյեմբերի 7-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանն այցելել է Նյու Դելի, որտեղ հանդիպել է նախագահ Ռամ Նաթ Քովինդի հետ: Հանդիպումը

Հարություն Շմավոնյան

հայկական կողմը հաջող է համարել. քննարկվել է նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցը: 2019 թ. սեպտեմբերի 26-ին Նյու Յորքում ՀՀ վարչապետը հանդիպել է Հնդկաստանի առաջնորդ Նարենդրա Մոդիի հետ: Այդ շրջանից ի վեր կողմերի հարաբերություններն իսկապես աշխուժացել են: Բազմակողմ ոլորտներում համագործակցության խորացումը շահեկան էր թե՛ Հայաստանի և թե՛ Հնդկաստանի համար: 2020 թ. ի վեր համագործակցությունն ընդլայնվել է նաև միջազգային կառույցների շրջանակներում: Տեղի են ունեցել բարձրաստիճան ղեկավարների մի շարք փոխայցեր, երկու երկրներում կազմակերպվել են բիզնես համաժողովներ ու հանդիպումներ: Այսպես՝ ՀՀ ԱԳ նախարարը Հնդկաստանի իր գործընկերոջ՝ Սուբրամանյամ Ջայշանկարի հետ հանդիպել է 2021 թ. սեպտեմբերի 16-ին Դուշանբեում: 2021 թ. հոկտեմբերի 12-ին նախարար Ջայշանկարն այցելել է Հայաստան, և այցի ընթացքում մշակվել է համագործակցության հավակնոտ ճանապարհային քարտեզ: 2022 թ. ապրիլին հայկական պատվիրակությունը մասնակցել է «Raisina Dialogue» համաժողովին, որի շրջանակներում ՀՀ արտգործնախարարը հանդիպումներ է ունեցել Հնդկաստանի ղեկավարության հետ, ինչը հնարավորություն է ընձեռել շարունակելու երկխոսությունը նոր հնարավորություններով: 2022 թ. ապրիլին ՀՀ ԱԳ նախարարը տնտեսական համագործակցության առաջարկներ է ներկայացրել Հնդկաստանի ղեկավարությանը՝ կազմակերպելու բիզնես ֆորումներ Նյու Դելիում ու Մումբայում: ՀՀ ՊՆ նախարարը հոկտեմբերին այցելել է Հնդկաստան, որտեղ հանդիպել է պաշտպանության նախարար Շրի Ռաջնաթ Սինգհի հետ: 2022 թ. հուլիսի 4-ին տեղի է ունեցել հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի առցանց նիստը:

Հայաստանն առաջիկայում ևս կշարունակի աջակցել Հնդկաստանին միջազգային ասպարեզում Ջամուի և Քաշմիրի, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամի թեկնածության հարցում: Մյուս կողմից՝ Հայաստանը կշարունակի ռազմատեխնիկական աջակցություն ստանալ Հընդկաստանից, ինչին, ըստ ամենայնի, դեմ չեն ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ ԱՄՆ-ն, որոնց հետ Հնդկաստանն ավանդաբար սերտ հարաբերություններ ունի: Ավելին՝ Մոսկվան և Նյու Դելին և՛ Շանհայի համագործակցության կազմակերպության, և՛ Բրիքսի անդամներ են: Հնդկաստանը վերջին տարիներին ակտիվորեն զարգացնում է իր ռազմական արդյունաբերությունը, և Հայաստանը կարող է օգտվել այդ հնարավորությունից: Բացի այդ՝ Հայաստանի համար իսկապես լուրջ խնդիր է զենք ձեռք բերելը, մանավանդ ռուս-ուկրաինական պատերազմի պայմաններում, այն դեպքում, երբ Ռուսաստանը դժվարություններ ունի Հայաստան զենքի մատակարարման համար: Փաստորեն, Հնդկաստանի հետ Հայաստանի համագործակցությունը ձեռք է բերում ռազմավարական նշանակություն: Մյուս կողմից, քանի դեռ Ադրբեջանը շարունակում է սերտացնել համագործակցությունը Պակիստանի հետ, որը Հայաստանի դեմ ագրեսիվ տրամադրված եզակի պետություններից է, Նյու Դելիի և Երևանի շահերը համընկնում են: Պակիստանը ինչպես Հայաստանի, այնպես էլ Հնդկաստանի համար անվտանգային սպառնալիք է ներկայացնում: Բացի Ադրբեջանին տրամադրված ռազմաքաղաքական աջակցությունից՝ Պակիստանը, ըստ միջազգային տարբեր աղբյուրների, նաև վարձկաններ է ուղարկել Ադրբեջան, որոնք մասնակցել են 44-օրյա պատերազմին:

Հարկ է նշել, որ վերջին շրջանում աճել են նաև Հայաստան-Հնդկաստան ապրանքաշրջանառության ծավալները: Այսպես՝ 2021 թ. դրանք կազմել են 181 մլն ԱՄՆ դոլար՝ 2016 թ. շուրջ 21 մլն ԱՄՆ դոլարի համեմատ: Իհարկե, թվերը դեռևս չեն արտացոլում երկկողմ առևտրատնտեսական համագործակցության ողջ ներուժը, և Հայաստանն ակնկալում է առևտրի ծավալների աճ առաջիկա տարիներին: Անելիքներ կան տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցության, դեղագործության, գիտության և կրթության բնագավառներում համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ: Պաշտպանության ու ռազմատեխնիկական ոլորտները, գյուղատնտեսությունը, տրանսպորտը, քաղաքացիական ավիացիան, զբոսաշրջությունը և առողջապահությունը մեծ ներուժ ունեն և չափազանց խոստումնալից են երկու երկրների համար: Հնդկաստանի կառավարությունն օժանդակում է Հայաստանին՝ իրականացնելու զարգացման մի շարք ծրագրեր, որոնց մեծ մասը վերաբերում է բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառին: Հնդկաստանի կողմից Երևանում Հայ-հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների գերազանցության կենտրոնի ստեղծումը, նաև տարածքային զարգացման հարցում աջակցությունը (ինչն ունի կրթական, հումանիտար և

մշակութային բաղկացուցիչներ) իրապես շահեկան են Հայաստանի համար: Ակտիվ են նաև շախմատի ֆեդերացիաները: 2022 թ. շախմատի օլիմպիադայում Հայաստանի հավաքականը Չենայում զբաղեցրեց երկրորդ տեղը: Ընդամենը 13 տարի առաջ բժշկական մասնագիտությամբ ուսանողների թիվը Հայաստանում 650-750 էր, մինչդեռ ներկայումս 2800-ից ավելի է: Հնդիկ զբոսաշրջիկներ են այցելում Հայաստան նույնիսկ Թամիլ Նադուից, Մադուրայից, Ուդմալպետից և այլ վայրերից:

Աստիճանաբար ընդլայնվում է համագործակցությունը ռազմական ոլորտում: Հնդկաստանը պատրաստ է Հայաստանին տրամադրելու անհրաժեշտ սպառազինություն: Երկու երկրների ռազմատեխնիկական ոլորտը բազմաթիվ ընդհանրություններ ունի, ինչը դյուրացնում է համագործակցությունը: Օրակարգում է օդային և ցամաքային կանոնավոր կապ հաստատելու խնդիրը: Առաջիկայում նախատեսվում է ուղիղ օդային կապ հաստատել Հնդկաստանի հետ, ինչը կընդլայնի տնտեսական համագործակցությունն ու կխթանի զբոսաշրջության զարգացումը:

Սունջոյ Ջոշիի կարծիքով՝ ներկայիս աշխարհում, երբ ամեն ինչ քանդվում, անհետանում է, ինստիտուտները կործանվում են, կենտրոններն այլևս չեն միավորվում, պետք է պայքարել գլոբալ խնդիրների լուծման եզրեր գտնելու համար, լինի դա կլիմայի փոփոխության, թե տիեզերքին վերաբերող որևէ խնդիր, այնպես որ «այսօրվա աշխարհում չենք կարող թույլ տալ, որ ղեկավարները չխոսեն միմյանց հետ»: Հենց այս տրամաբանության շրջանակներում է Հնդկաստանը ձգտում ընդլայնելու համագործակցությունը բարեկամ երկրների հետ, որոնց թվում է նաև Հայաստանը: Հայաստանը և Հնդկաստանը ունեն բազմաթիվ չիրացված հնարավորություններ, ոլորտային համագործակցության շատ ու շատ ասպեկտներ, որոնք կարող են նոր մշակումների ու լրջագույն վերանայումների:

Ոլորտային համագործակցության այլևայլ հնարավորություններ. որո՞նք են դրանք

Հայաստանում կան բազմաթիվ մարդիկ, որոնք հետաքրքրված են հնդկական փիլիսոփայությամբ և յոգայով: Հնդկաստանում էլ շատերը հետաքրքրված են հայկական մշակույթով՝ եկեղեցիներով, հոգևոր երաժշտությամբ, արվեստով ու խոհանոցով: Հայ և հնդիկ բարեկամ ժողովուրդների կապերի սերտացման համար մեծ նշանակություն կարող է ունենալ հոգևոր կամ մշակութային զբոսաշրջությունը: Հայ զբոսաշրջիկները կարող են Հնդկաստանում ծանոթանալ ոչ միայն տեղական, այլև հայկական մշակութային արժեքներին, որոնք գտնվում են Հնդկաստանի տարբեր քաղաքներում՝ պետական հոգածության ներքո: Ներկայումս աշխատանքներ են տարվում հայ-հնդկական մշակութային փոխանակումների, հնդկական մշակույթի հոյակապ նմուշները, մասնավորապես՝ Աջանտայի քարանձավների որմնանկարների կրկնօրինակները Հայաստանում ներկայացնելու և կինոյի ոլորտում համատեղ նախագծեր իրականացնելու ուղղությամբ: «Հայֆիլմը» Բոլիվուդի հետ վերջերս կնքել է համագործակցության հուշագիր: Հայաստանը ֆիլմ արտադրողների համար կարող է գրավիչ լինել, քանի որ հնդիկ պրոդյուսերները էկզոտիկ և ֆինանսական առումով ոչ ծախսաշատ երկրներ են փնտրում նկարահանումների համար: Իսկ Հնդկաստանում տարեկան ավելի քան 2000 ֆիլմ է արտադրվում: Հայկական ֆիլմ արտադրող ընկերությունները կարող են հնդկական պրոդյուսերական կենտրոններին համագործակցություն առաջարկել:

Հայկական սրբ Նազարեթ եկեղեցին՝ Կալկաթայում առաջին քրիստոնեական փաճարը

Կարևոր համագործակցություն գոյություն ունի տեխնոլոգիական ոլորտում: Տեխնոլոգիաները ոչ միայն փոխում են հասարակությունների դիմագիծը, այլև միջհասարակական շփումներին նոր որակ են հաղորդում: Դրանք փոխում են գիտելիքի ու տեղեկատվության փոխանցման հնարավորությունները: Արդի գիտելիքին հասու դառնալը յուրաքանչյուր պետության և հասարակության առջև ծառացած մարտահրավեր է: Հենց բարձր տեխնոլոգիաներն են, որ խթանելու են Հայաստան-Հնդկաստան համագործակցությունը տարբեր ոլորտներում և առաջ են մղելու երկկողմ հարաբերությունները:

Շատ կարևոր է նաև համագործակցությունը սփյուռքի ոլորտում: Թե՛ Հայաստանը և թե՛ Հնդկաստանը ունեն սփյուռք: Իհարկե, հնդկական սփյուռքն անհամեմատ մեծ է՝ մոտ 30 միլիոն: Թե՛ հայերը և թե՛ հնդիկները տարբեր ոլորտներում կարևոր ներդրում են ունեցել և ունեն այն պետություններում, որոնցում ապրում են: Այս երկու ժողովուրդները միևնույն ժամանակ կարողացել են պահպանել իրենց ինքնությունը: Դա միավորող կապերից մեկն է, մանավանդ եթե հաշվի առնենք արդի աշխարհի և ինքնությունների կերպափոխվող բնույթն ու դրանցից բխող մարտահրավերները: Հնդկական սփյուռքը հայկական սփյուռքի պես ինստիտուցիոնալացված չէ: Հնդիկ

մասնագետների համոզմամբ՝ հնդկական սփյուռքը հայկական սփյուռքի փորձառության կարիքն ունի, ինչը հնարավոր է երկկողմ շփումների ակտիվացման հաշվին:

Հայաստան-Հնդկաստան համագործակցության համար շատ կարևոր են «people to people»՝ մարդկային շփումները: Հնդիկ ուսանողների ներկայությունը Հայաստանում միշտ էլ հնարավորություն է տվել մոտիկից ծանոթանալու հնդկական իրողություններին: Հնդկաստանի և Հայաստանի միջև գնալով աճում են հենց մարդկային շփումները. բավական շոշափելի թիվ են կազմում խառնամուսնությունները, նաև շատ հնդիկ երիտասարդներ, այդ թվում՝ բժիշկներ, ամուսնանում են Հայաստանում և չեն վերադառնում Հնդկաստան: Հայաստանը վերջին շրջանում հնդիկների համար դարձել է աշխատանքի սիրված ուղղություններից մեկը: Հնդկաստանի քաղաքացիների թիվը Հայաստանի պես փոքր երկրում բավական մեծ է: Ընդհանրապես հնդիկներն իրենց լավ են զգում Հայաստանում և լավ ինտեգրված են: Թե՛ հայերին և թե՛ հնդիկներին հետաքրքիր է ծանոթանալ միմյանց կենցաղին, խոհանոցին, սովորույթներին և այլն: Ճանաչելիության ընդլայնման հարցում կարևոր դեր կարող են ունենալ մեդիան և սոցիալական ցանցերը: Ռինա Պանդեի համոզմամբ՝ անհրաժեշտ է Հնդկաստանում Հայաստանի մասին տեղեկատվություն տարածել, ֆիլմեր ցուցադրել, որպեսզի զբոսաշրջությունը ևս զարգանա:

Ներկայումս աշխարհում կա մի հետաքրքիր և նոր զարգացող միտում՝ արտերկրում հարսանիքների անցկացումը, որը կարող է հետաքրքիր լինել երկու կողմի համար էլ, բայց առայժմ՝ հնդկականին: Հնդիկ երիտասարդները սիրում են արտերկրում հարսանիքներ կազմակերպել, իսկ Հայաստանն ունի դրա համար անհրաժեշտ հարմարությունները և, ըստ միջազգային տարբեր ինդեքսների, վերջին շրջանում բավական գրավիչ է դարձել տարբեր առումներով:

Եզրակացություն

Հայաստանն ու Հնդկաստանն ապրում են հետաքրքիր շրջադարձեր: Հնդկաստանի հետ հարաբերությունների խորացումն ու զարգացումը Հայաստանի արտաքին քաղաքական գերակայություններից է: Հնդկաստանը ժողովրդավար, միջազգային մեծ հեղինակություն ու կշիռ ունեցող, ինչպես նաև դինամիկ տնտեսությամբ աչքի ընկնող գերտերություն է, որը տնտեսությամբ աշխարհում հինգերորդն է: Հնդկաստանը նաև հնդկական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի անվտանգային համակարգի կարևորագույն բաղկացուցիչն է: Անվտանգության մարտահրավերները Հարավային Կովկասում արցախյան վերջին պատերազմի համատեքստում և Հայաստանի պարտությունը ի հայտ բերեցին աշխարհաքաղաքական նոր իրողություններ: Թուրքիայի դիրքերի ամրապնդումը, որն ուղեկցվում է մի կողմից Թուրքիա-Ադրբեջան, մյուս կողմից Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան տանդեմի հարաբերությունների ամրապնդմամբ, հիմք դարձավ Հնդկաստանի համար ամրապնդելու Հայաստանի հետ կայուն համագործակցությունը, ինչին զուգահեռ խարխլվեց Հնդկաստան-Ադրբեջան հարաբերություններում ձևավորված մթնոլորտը: «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքում Հայաստանի ներգրավումը, ռազմաքաղաքական և այլևայլ ոլորտներում ձևավորվող ու խորացող համագործակցությունը, Հնդկաստանի կողմից Հայաստանին զենքի վաճառքը, մյուս կողմից՝ Հնդկաստանի և Հայաստանի միջև գոյություն ունեցող դարավոր քաղաքակրթական ու այլ առնչություններ պարարտ հող են ստեղծում նրանց հետագա համագործակցության համար: Հնդիկ փորձագետների համոզմամբ՝ Նյու Դելին հանձնառու է Հայաստանի նկատմամբ իր ստանձնած պարտավորությունները կատարելու հարցում: Հայաստանն այս հարցում այլընտրանք չունի, եթե հաշվի առնենք, որ բնական դաշնակիցներ նա գրեթե չունի: Մյուս կողմից՝ Հնդկաստանն աշխարհագրորեն հեռու է Հայաստանից, ինչն իրական խոչընդոտ է առավել սերտ համագործակցության համար: Ամեն դեպքում Հնդկաստան-Հայաստան խորացող համագործակցությունն այլևս ընթացքի մեջ է, ինչի ապացույցը Նյու Դելիի արտաքին քաղաքականության մեջ հարավկովկասյան ուղղության կոնցեպտուալացման միտումն է:

Օգտագործված աղբյուրներ

1- Գիտաժողովին ելույթ ունեցան նաև Պիտեր Քաուին (Կալիֆոռնիայի համալսարանի համաշխարհային լեզուների կենտրոնի տնօրեն, Նարեկացու անվան հայագիտության կենտրոնի պրոֆեսոր), Ն. Գ. Արմեն Բայբուրդյանը (Հնդկաստանում Հայաստանի առաջին դեսպանը (2000-2004)), Ն. Գ. Յուրի Բաբախանյանը (Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը 2021 թ.-ից), ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատողներ Արաքս Փաշայանը (Միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ) և Գոհար Իսկանդարյանը (Իրանի բաժնի վարիչ), Սանտոշ Կումարի Արորան (Հայ-ռուսական համալսարանի հինդի լեզվի դասախոս), Սոյեր Հեսքոքը («Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի միջազգային գործընկերության ղեկավար) և Գևորգ Մանթաշյանը (ՀՀ բարձր տեխնոլոգիաների նախարարի տեղակալ):

2- Դրանցից են Կալկաթայի Ս. Գրիգոր եկեղեցին՝ կառուցված 1906 թ., Տինգրայի Ս. Երրորդություն եկեղեցին՝ կառուցված 1867 թ., Չինսուրայի Ս. Հովհաննես եկեղեցին՝ կառուցված 1695 թ., Սեյդաբադի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1758 թ., Բոմբեյի Ս. Պետրոս եկեղեցին՝ կառուցված 1796 թ., և Մադրասի Ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1712 թ.:

Սուրիոյ 11-ամեայ տագնապի փորձառութեան դասերէն

Կարօ Մանճիկեան
«Համազգային» հայ կրթական և մշակութային միութեան կեդրոնական վարչութեան անդամ, հրապակագիր

Սուրիական մեր հայրենիքի 11-ամեայ տագնապը ծանր ու ահաւոր, մեծ փորձութիւն ու փորձառութիւն դարձաւ մեզի՝ այդ տագնապին թաքուն ծալքերուն մէջ թափանցելով, անկէ դասեր քաղելով:

Լաւապէս հասկնալու համար սուրիական տագնապին դրդապատճառները կամ անոր տուն տուող պատճառներն ու դերակատարները անհրաժեշտ է լոյս սփռել նաև այս տագնապը կանխող տասնամեակին վրայ՝ բացայայտելու նաև ձեռք առնուած միջոցներն ու քայլերը, ճշգրտօրէն հասկնալու յաջորդիւ պատահած ու շարունակուող շրջանային տագնապները, թէ ինչու կը պատահին, ովքեր են դերակատարները, ինչպէս և որու կը ծառայեն, ինչ նպատակներ կը հետապնդեն... և այլն:

Սկսելու համար նախ հարկ է մատնանշել, թէ Սուրիան իր անկախութենէ (1946) ի վեր միշտ հակադրուած եղած է սիոնական, իսրայէլեան, արևմտեան ու ամերիկեան (ՆԱԹՕ) ծրագիրներուն, յաւակնութիւններուն, մնացած է արևմտեան և արևելեան երկիրներու հակադրութիւններուն արանքին, մասնաւորապէս՝ 1970 թուականէն ետք, երբ հանգուցեալ զօր. Հաֆէզ ալ-Ասատ հասաւ անոր իշխանութեան բուրգին գագաթը և բարեկամութեան դաշնագիր ստորագրեց Խորհրդային Միութեան հետ:

Անոր մահէն ետք, տոքթ. Պաշար ալ-Ասատի՝ նախագահութեան հասնելով, Սուրիոյ մէջ սկսան ժողովրդավարացման, ազատականացման հովեր փչել (արդէն փլուզուած էր Խորհրդային Միութիւնը): Սահմանափակուեցան ընկերվարական թեքումներով տնտեսական ձեռնարկները, սահմանափակուեցան վերնախաւի մենաշնորհները, և երկրին մէջ աճեցան մասնաւորաբար արաբական դրամագլուխներով ներդրումները... Մէկ խօսքով՝ սկսաւ տնտեսական աճ ու վերելք մը քաղաքական որոշ հանդուրժողականութեան զուգահեռ... Այլ խօսքով՝ տագնապին նախորդող տարիներուն Սուրիան փակած էր իր ներքին ու արտաքին պարտքերը և օտար դրամանիշներու պատկառելի պաշար մը ամբարած էր:

Ինչպէս վերը նշեցինք, տնտեսական մարզին մէջ նահանջ արձանագրուեցաւ ընկերվարական մանաւանդ ծայրայեղ համակարգէն, և զարկ տրուեցաւ չափաւորականութեան, առաջ եկան անհատական թէ պետութեան հետ միատեղ գործընկերութեան նախաձեռնութիւններ ու ձեռնարկներ, թափ տրուեցաւ մասնաւոր–անձնական արտադրական հաստատութիւններուն: Զարկ տրուեցաւ թեթև արդիւնաբերութեան, բացուեցան անձնական դրամատուներ և այլն: Ակներև էր ինքնաբաւութեան մը հասնելուն ճիգը, յատկապէս կենսական պէտքերու իմաստով: Մեծ տեղ տրուեցաւ բարձր արհեստագիտութեան, IT-ի մարզին... Մէկ խօսքով՝ երկիրը հասաւ 21-րդ դարու արժանի շեմին առջև:

Քաղաքական կապերը սերտացան արաբական, նոյնիսկ պահպանողական վարչակազմերուն ու

արևմտեան երկիրներուն հետ: Սակայն այդ սերտացումը արգելակուեցաւ, և այդ յարաբերութիւնները մասամբ ուղղուեցան դէպի սառեցում, երբ Իրաքը «ժողովրդավարացնելու» արիւնալի ճանապարհին վրայ Սուրիան «ոչ» ըսաւ Արևմուտքի քայլերուն (նկատի ունենանք ԱՄՆ-ի՝ օրուան արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլի դրած նախապայմաններուն մերժումը նախագահ Պաշար ալ-Ասատին կողմէ):

Այսպիսով՝ Սուրիան նախընտրեց իր վաղեմի զինակիցներուն՝ Ռուսիոյ և Իրանի (այժմ՝ սերտ դաշնակիցներ) կազմի արտադրութիւնը իր հողերուն վրայով հասցնել Միջերկրական ծով, ինչպէս նաև Չինաստանի արդիւնաբերական արտադրութիւնները: Մինչ այդ «եղբայր» Քաթարի ձգտումը՝ իր արտադրած կազը Սուրիոյ վրայով, Թուրքիոյ ճամբով Արևմուտք փոխադրելու, եթէ չմերժուեցաւ ալ, դիմակայուեցաւ կրաւորականութեամբ:

Սուրիան Արևելքին (Ռուսիոյ, Չինաստանի և Իրանի) համար կը նկատուէր վստահելի գործընկեր մը ու կրնար ըղձալի խաղաղ նաւահանգիստ մը դառնալ:

Վերոյիշեալ տուեալները, ի շարս բազմաթիւ այլ կէտերու, խստօրէն անհանգստացուցին Արևմուտքը, Թուրքիան ու մանաւանդ Իսրայէլը, որուն դէմ երեք մեծ պատերազմներ մղած էր Սուրիան (առաւելևս Լիբանանի հողերուն վրայ տարածուած մարտերը...)՝ իր կողքին միշտ ունենալով Խորհրդային Միութիւնը, մինչդեռ Արևմուտքը Իսրայէլի դաշնակիցն է:

Թուրքիան, որ կը փորձէր Եւրոպա մտնել, ձախողած ու յուսահատած ուղղուեցաւ դէպի արաբական երկիրներ՝ օգտագործելով Սուրիան որպէս տարանցիկ ճանապարհ: Այսպիսով՝ նէօօսմանական Թուրքիան իր յաւակնութիւնները ծաւալելու ու նախկին կայսրութիւնը վերականգնելու հեռանկարով շրջեցաւ դէպի հարաւ.

նախ՝ Իրաք, ուր վաղուց իր զօրքերը ելքումուտ կը կատարէին, ապա՝ Սուրիա ու արաբական երկիրներ, ուր և կը գտնուէր Սուրիոյ մերժումին հանդիպած իր դաշնակից Քաթարը:

21-րդ դարու առաջին տասնամեակին Արաբական ծոցի (ոմանց համար՝ Պարսից ծոց) երկիրները մեծ փորձեր կատարեցին դարպասելու Սուրիան, զայն ուղղելու և թեքելու դէպի Արևմուտք, սակայն ձախողելով նոյն Արևմուտքին հետ միատեղ որոշեցին փոխել արևելամէտ Սուրիոյ վարչաձևը, իսկ անյաջողութեան պարագային՝ քայքայել ու մասնատել զայն՝ օգտուելով անոր էթնիկ ու համայնքային բազմազանութենէն ու հակասութիւններէն՝ առաջնորդուելով «Բաժնէ, որ տիրես» սկզբունքով:

Պատրուակները չէին պակսեր: Այսպէս յայտարարուած՝ «ժողովրդավարութեան» չգոյութիւն, «մարդկանց իրաւանց ոտնակոխում»... ու նմանօրինակ բազմաթիւ, բազմատեսակ պատրուակներ... Նախորդող տասնամեակներուն Արևմուտքը իբրև թէ յաջողած էր «ժողովրդավարացնել» Աֆղանիստանը, Իրաքը, Թունուզը, Լիպիան, Եգիպտոսը, աւելի ուշ՝ Սուտանն ու Եմէնը, որոնք անցան Արաբական գարունի մը արիւնալի բովէն, ուր տեղի ունեցած էին քաղաքացիական պատերազմներ ու ցարդ անվերջանալի իրարայաջորդ իշխանափոխութիւններ:

Կարգը եկած էր Սուրիոյ՝ զայն ևս քալեցնելու նոյն արիւնալի ճանապարհէն: Եւ Սուրիոյ համար սարքուեցաւ «ընդդիմութիւն» մը, որուն ապաստան հանդիսացան Թուրքիան, Յորդանանը և Լիբանանի որոշ շրջաններ ու արաբական երկիրներ՝ Թուրքիոյ և Յորդանանի մէջ կայացնելով զինուորական բազմազգեան հրամանատարութիւններ՝ կազմուած արաբներէ, հրեաներէ, ամերիկացիներէ, թուրքերէ, անգլիացիներէ... և այլն: Իսկ արաբական երկիրներէն Սէուտական Արաբիան ու Քաթարը իրենց դեղին ոսկիներու ու փեթրուտոլարներու գանձարանները լայն բացին՝ առասպելական գումարներով զինելով այդ «ընդդիմադիրները», գնելու համար սուրիացի լուսանցքային զինուորականներ ու հատուկենտ քաղաքական դէմքեր: Աւելին՝ անոնք իրենց հեռուստատեսութեանց եթերը ևս տրամադրեցին անոնց՝ վարելու ապատեղեկատուութեան պատերազմը:

Վերոյիշեալ կայաններուն անձնակազմերը լաւապէս պատրաստուած էին արևմտեան ոստաններուն մէջ, զանգուածային լրատուական միջոցներով պատերազմ մղելու բնագաւառէն ներս:

Արաբական նշանաւոր առածը կ'ըսէ՝ «Հատիկը գմբէթի վերածեցին»:

Սկսան «խաղաղ» ցոյցեր՝ մասնակի կամ տասներորդական պահանջներով: Ապա պահանջները բազմացան՝ զուգահեռաբար անոնց մէջ զինեալ տարրերու երևումով, որոնք հատուկենտ կրակեցին ցոյցերուն հսկող անզէն ոստիկաններուն վրայ՝ անոնց ստիպելով, որ զինուին: Եւ տանիքներուն վրայ երևցան արձակազէններ (դիպուկահարներ):

Ոստիկանութիւնը ուժի դիմեց այն ատեն, երբ արդէն բանը բանէն անցած էր:

Շուտով դրացի երկիրներէն՝ Թուրքիայէն, Յորդանանէն ու Լիբանանէն, մարզուած զինեալներ թեթև ու միջակ զինատեսակներով սկսան թափանցելու Սուրիա՝ նախ յարձակելով ապահովութեան կեդրոններուն (ոստիկանատուներ...) վրայ, ապա թաղեր, գիւղեր ու քաղաքներ առին իրենց տիրապետութեան տակ: Շուտով անոնք ստացան Լիպիայէն ու փլուզած Եուկոսլաւիոյ երկիրներէն բերուած հրասայլեր, թնդանօթներ և այլն:

Մենք՝ քեսապաբնակներս, մեր մորթին վրայ զգացինք Թուրքիայէն Քեսապի մերձակայ ու թիւրքմէնների բնակուած գիւղերուն մէջ սպրդած ու ապաւէն գտած զինեալ տարրերուն, ահաբեկիչներուն ահաբեկչական գործունէութեանց աւերը, մինչև որ 2014-ի մարտ 21-ին անոնք գրաւեցին ու կողոպտեցին նաև Քեսապը՝ մեզ ստիպելով, որ տարագրուինք Լաթաքիա:

Այդ ահաբեկչական խումբերը կը բաղկանային զանազան երկիրներու քաղաքացիական կռիւներուն մէջ կոփուած բազմազգեան տարրերէ՝ արաբներ, աֆղաններ, չէչէններ, ույղուրներ (հեռաւոր Չինաստանի հիւսիսէն): Ասոնք բոլորը իսկապէս որ հմտացած էին հրասանդներու, հրթիռներու, հրասայլերու բանեցման մէջ: Ատոնք Սուրիա եկած էին «ժողովրդավարութեան և մարդկային իրաւանց պաշտպանութեան» դասեր տալու համար:

Լրատուական միջոց մը հաստատուած էր Անգլիոյ մայրաքաղաք Լոնտոնի մէջ՝ «Սուրիոյ մարդկային իրաւանց լիկա» անունով, որուն ներկայացուցիչը, տնօրէնը ու նոյնիսկ տէրը Սուրիոյ դատարաններէն դրամաշորթութեան և փաստաթուղթերու կեղծման համար դատապարտուած ու քրէական հետապնդման ենթարկուած անձ մըն էր: Ան, Լոնտոն հասնելով, դարձած էր «վստահելի» լրատուական աղբիւր մը (ցայսօր կը գործէ):

Իւրաքանչիւր դաւադիր երկիր ունէր իր խմբակը, երբեմն՝ խմբակներ՝ լաւապէս մարզուած, զինուած ու ֆինանսաւորուած: Անոնց անունները յարափոփոխ էին: Անոնցմէ ամէնէն նշանաւորը դարձաւ իր անսահման ծայրայեղութեամբ ու վայրագութեամբ յայտնի «Իսլամական պետութիւն» (ԻՊ, ISIS) կազմակերպութիւնը, որ ծնունդ էր ամերիկեան և թրքական գաղտնի սպասարկութեանց:

Զարմանալի հակասութեամբ վերոյիշեալ երկու երկիրները առերևոյթ Սուրիոյ մէջ միջամտեցին՝ որպէս թէ ԻՊ-ը արմատախիլ ընելու համար: Թուրքերը առաւել մեծ պատճառ մը ունէին Սուրիա ներխուժելու՝ այսպէս կոչուած քրտական «ահաբեկչութիւնը» արմատախիլ ընելու համար...

Այդ բազմազան կազմակերպութիւնները ձախողութեան մատնուեցան Սուրիոյ և անոր դաշնակիցներու միատեղ հակազդեցութեամբ: Սակայն անոնց հովանաւորները իսկոյն երևան եկան ու տիրեցին Սուրիոյ հիւսիսային և հիւսիսարևելեան նահանգներու մասերուն, երբեմն՝ նաև լրիւ նահանգի մը: Անշուշտ, միշտ մէկ գլխաւոր պատրուակով՝ «արմատախիլ ընելու ահաբեկչութիւնը»:

Շատ լաւ կը յիշենք՝ անցնող դարու 70-80-ական թուականներուն՝ Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ ալ-Ասատի օրով, յաճախ պահանջուեցաւ, մանաւանդ ՄԱԿ-ի բեմերէն, սահմանել «ահաբեկչութիւն» բառը՝ զայն զատորոշելով «ազգային-ազատագրական պայ-

Իսլամական պետության զինյալները Սիրիայում

քարի» գաղափարէն: Յայսօր դիտաւորեալ «շփոթ» ու նոյնացում առկայ է այդ երկու գաղափարներուն միջև՝ առ ի ծառայութիւն մեծապետական շահերուն:

Երկու չափ, երկու կշիռ...

Սուրիական «ընդդիմութիւնը» բաժնուեցաւ երկու մասի: Արևմուտքին համակիր ընդդիմութիւնը կոչուեցաւ «չափաւոր ընդդիմութիւն»... երբեմն ալ «զինեալ չափաւոր ընդդիմութիւն»... զարմանալի ու ծիծաղելի բաժանում...

Սուրիական տագնապին տրուեցաւ նաև տնտեսական դիմագիծ: Տնտեսական պատերազմ: Սուրիան ու անոր դաշնակիցները ենթարկուեցան միակողմանի տնտեսական դաժան շրջափակման՝ ժողովուրդը նետելով զրկանքի ու աղքատացման ճանապարհին, հասնելով մինչև հացի ու վառելանիթի զրկանքներուն... Այդ վնասներէն անմասն չմնացին դրացի երկիրները, մանաւանդ Լիբանանը ու մասամբ Իրաքը:

Վերոյիշեալ նկարագրութիւնը, անշուշտ, շատ հեռու է ամբողջական ըլլալէ: Արձանագրուածը միայն ուրուագիծն է կատարուածին:

Այժմ կարծէք թէ նոյն սենարիոն է, որ կը կիրարկուի Իրանի պարագային, որ Սուրիոյ գլխաւոր ու ամենահաւատարիմ դաշնակիցն է, որ վաղուց ենթարկուած էր Արևմուտքի միակողմանի տնտեսական անմարդկային ու դաժան շրջափակումին: Եւ այսպէս նախասերտուած, քրտուիի մը՝ Մահսայի մահուան զաւեշտական բեմադրութեամբ, ան յարմարագոյն պատրուակը հանդիսացաւ՝ Իրանը ներսէն ցնցելու և ներքին անդորրը խաթարելու, նախորդ տարիներու մի քանի ձախող նախափորձերէ ետք:

Տրուած ըլլալով, որ միջուկային ուժանիթի բնագաւառին մէջ Իրան-Արևմուտք բանակցութիւններուն առնչութեամբ Իրանը, մեկնելով զօրաւորի դիրքերէն, անզիջող և անդրդուելի կը մնար Արևմուտքի և Իսրայէլի անընդունելի պահանջներուն դիմաց, և որովհետև Մահսան քրտուիի էր (մերժած էր լաչակով ծածկել գլուխը), ան յարմարագոյնն էր՝ իշխանութիւններուն չենթարկուելու համար ստեղծելու «հերոսի» կերպար... Իսկ անոր ի պաշտպանութիւն ցոյցի ելած 500-հոգանոց խմբակը (ցոյցերուն նախօրէին) արևմտեան քարոզչական միջոցները «հաւար» կը փրցնէին, իբրև թէ Իրանի բնակչութեան կէսը ոտքի կանգնած էր: Անդին, երբ Հայաստանի մէջ բազմահազար ցուցարարներ ողողած էին քաղաքամայր Երևանի հրապարակները Արևմուտքին սիրելի իշխանութիւններուն դէմ, նոյն այդ ԶԼՄ-ները հազիւ թէ նշում կը կատարէին այդ ցոյցերուն մասին:

Այստեղ փակագիծ մը բանալով՝ կ'ուզեմ վերյիշելով նշել, որ երբ նոյն Արևմուտքին սիրելի Լևոն Տէր-Պետրոսեանը, 1996-ին կեղծելով ընտրութիւնները, ինքզինք նախագահ հռչակեց և բռնի ուժ գործադրեց վերոյիշեալ կեղծիքներուն դէմ ցոյցի ելած բազմամարդ հաւաքին դէմ՝ ի պաշտպանութիւն իրողապէս ընտրութեանց յաղթած Վազգէն Մանուկեանին, վերոյիշեալ ԶԼՄ-ները, ի պաշտպանութիւն, ԼՏՊին Վազգէն Մանուկեանը կոչեցին «գերազգայնական» (Ultra-nationalist), որ համազօր էր զայն նացի կամ ֆաշիստ կոչելուն: Նպատակը Վ. Մանուկեանը վարկաբեկելն էր, որովհետև ան հլու-հնազանդ կամակատար մը չէր կրնար ըլլալ Արևմուտքին համար, ինչպիսին էր ապազգային ԼՏՊն:

Արցախի 44-օրեայ պատերազմին ընթացքին, երբ թշնամին խաղաղ բնակիչներն ու բնակավայրերը ռմբակոծեց միջազգայնօրէն արգիլուած զինատեսակներով (ֆոսֆորային կամ քասէթային ռումբերով...), Արևմուտքը ոչ միայն չդատապարտեց թշնամին, այլ նոյնիսկ ձայն ու ծպտուն չհանեց: Որովհետև Ալիևը Արևմուտքի շահընկերն ու սիրելին էր իր քարիւղով ու այժմ անոր կազ մատակարարողներէն է...

Արևմուտքը հրահրեց ցոյցեր՝ Իրանի ընկերային այլ տեսակի հակասութիւններն շահագործելով, բնականաբար տասը՝ հազար ներկայացնելով: Ցուցարարներուն մէջ շուտով երևան եկան զինեալ տարրեր, յար և նման Սուրիոյ մէջ պատահածներուն, անոր տագնապի սկզբնական օրերուն:

Զինեալներ թափանցած էին, մասնաւորաբար, Ատրպէճանէն, Աֆղանիստանէն, Իրաքի քրտական ինքնավար մարզէն:

Պարսկաստան քաջատեղեակ էր, որ Ատրպէճանի մէջ ազատօրէն կը վխտային Իսրայէլի գաղտնի սպասարկութեանց գործակալները, որոնք առաքուած էին Պարսկաստանը քայքայելու նպատակով:

Պարսկաստանի խումբ մը գիտնականներ, մանաւանդ՝ միջուկային ուժանիթի մարզին պատկանող, կը սպանուէին անցեալ տասը տարիներու ընթացքին, ու ահաբեկիչները կապակցութիւններ ունէին վերոյիշեալ գործակալներուն հետ:

Պարսկաստանի ներսը անկայունացնելը կը հետապնդէր այլ նպատակներ ևս, որուն գլխաւորը ռուս-ուքրաինական պատերազմին Իրանը հակած էր Ռուսիոյ կողմը, մինչ Արևմուտքը բացայայտօրէն կը զինէ Ուքրաինան: Իսկ երբ ռուսական բանակը օգտագործեց մի քանի ԱԹՍ («տրոն»), դարձեալ «հաւար» փրթաւ արևմտեան ԶԼՄ-ներուն քով:

Մէկ ամիս է, որ ուքրաինական կարգ մը շրջաններ

Դեր Զորի հայոց ցեղասպանության հուշակոթողը՝ ավերված թուրքերի կողմից

զրկուած են ելեկտրական հոսանքէ, մինչ մենք Սուրիոյ մէջ տասը տարիներէ ի վեր կ'ապրինք մթութեան մէջ՝ օրական հազիւ երկու ժամ լուսաւորութեամբ:

Պարսկաստանի ներսը խառնելու համար Իրաքի քրտական ինքնավար շրջանէն հոն կը թափանցէին զինեալներ: Իսկ Իսրայէլի համար Պարսկաստանը կը նկատուէր միջուկային ուժանիթի գծով գլխաւոր մրցակից մը, որ քիչ մնացած է, որ տիրանայ նաև միջուկային զինատեսակ-ռումբերուն (ըստ Իսրայէլի):

Այստեղ նշենք, որ Իրաքի քրտական ինքնավար մարզին մէջ ևս անպակաս են Իսրայէլի գործակալները՝ յար և նման Ատրպէճանի գործակալներուն:

Պարսկաստան, առաջին իսկ օրէն բացայայտած ըլլալով նախատեսուած դաւադրութեան ծալքերը, անմիջապէս դիմեց կոշտ միջոցներու: Ըմբոստներուն (և ոչ թէ ընդդիմադիրներուն) հետ խօսեցաւ վճռականօրէն, անոնց գործածած ու հասկնալի լեզուով: Այսպէս՝ Շիրազ քաղաքին մէջ ըմբոստներու սպանութիւնը կազմակերպողներէն ու մասնակիցներէն ձերբակալուեցան 26 ահաբեկիչներ, որ մեծ մասամբ Իսրայէլի դաշնակից Ատրպէճանի քաղաքացիներ էին: Իսկ անոնց ղեկավարը՝ Ազերին, Պարսկաստան եկած էր օդանաւով Պաքուէն:

Ահաբեկիչներուն մեծ մասը թէև ազերիներ էին, սակայն կային նաև Աֆղանիստանէն թալիպաններ և այլ ազգութեան քաղաքացիներ:

Պարսկաստան, իրազեկ ըլլալով, որ մեծ թիւով զինեալներ կը պատրաստուին Իրաքի քրտական ինքնավար մարզին մէջ, և անոնցմէ նկատառելի թիւ մը արդէն թափանցած էր Իրան ու ահաբեկչական գործեր կատարած, անմիջապէս ոմբակոծեց այդ քրտաբնակ կասկածելի կայանները, իսկ Ատրպէճանը սաստելու համար մեծ թիւով զօրք ու զինամթերք կուտակեց անոր հետ սահմանագծին վրայ՝ պատմական սահմաններու անձեռնմխելիութեան մասին (ակնարկը Հայաստանին հետ 27 քմ սահմանագծին մասին էր) յայտարարութիւններ ընելով:

Արևմուտքին համար դէպի Եւրոպա Ռուսաստանի ու Պարսկաստանի առջև ճանապարհները պէտք է որ փակ մնային: Ականուած Աֆղանիստանը անբաւարար էր, և միջուկային ուժանիթին տիրացած Պարսկաստանը պէտք է որ անկայուն մնար (ի շահ Արևմուտքին, Իսրայէլին, Թուրքիոյ և այլոց): Եւ այդ անկայունութեան որպէս սկիզբ հերոսացուցին քրտուհի Մահսան, որուն համար իրանեան աղբիւրները հերքեցին, թէ ոստիկանութեան միջոցառումներու զոհն է:

Համբերատարութեան «կինէսեան» մրցանակ վաստակած Պարսկաստանը (չմոռնանք, որ պարսիկը 1x1 մեթր գորգ մը հիւսելու համար կրնայ 2 տարի «պայքարիլ»), զինուած սուրիական 11-ամեայ տագնապին փորձառութեամբ, ինչպէս վերը նշեցինք, ամենադոյզն զինեալ արարքին հակադարձեց զէնքի ուժով: Յառաջիկայ օրերու դէպքերու զարգացումները ցոյց պիտի տան, թէ Արևմուտքը որքան պիտի կարենայ տոկալ Պարսկաստանի երկարաշունչ համբերատարութեան:

Պարսկաստանի՝ Իմամ Խումէյնիի ծանօթ յեղափոխութիւնը պատճառ դարձաւ, որ երկիրը կորսնցնէ իր ներուժը (գիտնականներ, զինուորականներ, ճարտարագէտներ, ճարտարարուեստի հսկաներ... և այլն), իսկ Իրան-Իրաք պատերազմը արիւնաքամ ըրաւ երկիրը: Սակայն անոր յաջորդող 40 տարիները բաւարար եղան, որ ան նուաճէ ծանր ճարտարարուեստի ու միջուկային ուժանիթի գագաթները՝ հակառակ Արևմուտքին կողմէ պարտադրուած տնտեսական ու այլ բնագաւառներու պաշարումին 40 տարիներէ ի վեր:

Կը թուի, թէ Պարսկաստան տեղի տուողը չէ իրեն պարտադրուած իրավիճակին դիմաց: Ան Ռուսաստանի, Չինաստանի ու կարգ մը այլ երկիրներուն հետ միասին միջազգային նոր համակարգ մը ստեղծելու համար կը պայքարի: Եւ այդ ճանապարհը, մեծ համեմատութեամբ, նուաճուած կը թուի:

Այս իրավիճակին դիմաց, մենք մեզի կը հարցադրենք, թէ 2020 թուականին 44-օրեայ պատերազմէն ետք արուեստականօրէն պարտուած Հայաստանի իշխանութիւնները, որոնք ծնկաչոք եկած են թշնամիներուն (Ատրպէճան, Թուրքիա...) առջև, որ անկիւնին մէջ խցելու հասցուցած են մեր հայրենիքը՝ յոյսի օրրանը:

Արևելք-Արևմուտք անվերջ պայքարին մէջ, իր ներկայութիւնը պարտադրող ու Պարսկաստանի մրցակից նոր Օսմանեան կայսրութիւն մը ստեղծելու ձգտումով, Թուրքիան ու անոր դաշնակից Ատրպէճանը, Արցախը, Սիւնիքն ու Հայաստանը պատուար ու սեպ համարելով, ամէնօրեայ սպառնալիքներ ուղղելով Հայաստանին ու հայութեան, այսօր իրենց կամքը պարտադրելու ընթացքին մէջ գտնուելով, մեր մըտքերուն մէջ անդադար կը հնչեցնեն, թէ ինչ ապագայ կը խոստանան («ապագայ կայ... կայ ապագայ») ծնկած մեր իշխանութիւնները, որքանով են կրցած դաս քաղել սուրիական, պարսկական... և այլ երկիրներու դառն փորձառութիւններէն, դէպի ո՞ւր կ'առաջնորդեն մեր հայրենիքն ու հայութիւնը իրենց անհաւասարակշիռ ու անհաշիւ ոստոստումներով ու խարխափումներով:

Ասոր մասին մտածելն իսկ սարսափազդու կը թուի...

Ռուս-ուկրաինական «հակամարտության» և դրա ակունքների շուրջ

Գայանե Մանուկյան
Պատմաբան

Համաշխարհային ԶԼՄ-ները արդեն երկար ամիսներ գրում ու խոսում են ռուս-ուկրաինական պատերազմի և ընդհանրապես այս պատմական հակամարտության մասին, բայց հայ ընթերցողի համար այս երևույթը, նրա ծագումն ու արմատները կարոտ են լուրջ բացատրության:

Նախ՝ ինքնին աբսուրդ է «ռուս-ուկրաինական» արտահայտությունը, քանզի ուկրաինականն ու ռուսականը նույն հարաբերության մեջ են, ինչ մասն ու ամբողջը, և ինչպես անհասկանալի կլիներ «հայ-արցախյան հակամարտություն» արտահայտությունը, այնպես էլ արտառոց է «ռուս-ուկրաինական հակամարտություն» ասվածը:

Երկրորդ՝ պատմականորեն «հակամարտությունը» ընթանում է ոչ թե Ռուսաստանի և Ուկրաինայի միջև, այլ Արևմուտքի և ռուսական աշխարհի, որի ներսում, ցավոք, գտնվեցին արևմտամետ դավաճաններ:

Փոքրիկ անդրադարձով անհնար է ամբողջությամբ ներկայացնել հարցի էությունը, սակայն կարելի է այն ուրվագծել՝ անդրադառնալով դրան պատմության ու աշխարհաքաղաքականության պրիզմայի միջոցով:

Սկսենք պատմությունից: Դեռ 10-րդ դարի վերջին՝ քրիստոնեության ընդունումից կարճ ժամանակ անց, մեկ պետության մեջ միավորված արևելասլավոնական ցեղերը համախմբվեցին նաև ազգովի, և կազմավորվեց ռուս ժողովուրդը: Կիևը այդ պետության մայրաքաղաքն էր և ռուս ժողովրդի հոգևոր կենտրոնը: Կիևը ռուսական հոգևոր պատմության ակունքն է, նրա պատմական հիշողության առաջին կարևոր օջախը: Թերևս սխալ չի լինի ասել, որ Կիևի՝ որպես հոգևոր և պատմական կենտրոնի դերը ռուս ժողովրդի համար նույնքան մեծ է, որքան Ասիինը և Էջմիածնինը միասին վերցրած՝ հայերիս համար: Կիևը ռուսական քաղաքների մայրն է:

Միասնական հին ռուսական պետության մասնատումից հետո ու հարևան ժողովուրդների նվաճումների հետևանքով 14-15-րդ դարերում ստեղծվեց մի իրավիճակ, երբ արևմտյան և հարավային ռուսական հողերը (ներառյալ Կիևը) հայտնվեցին լեհլիտվական նվաճողների իշխանության տակ, մինչդեռ արևելյան և հյուսիսային հողերում պահպանվեցին ռուսական իշխանությունները, որոնք աստիճանաբար միավորվեցին Մոսկվայի շուրջ: Նման իրավիճակը հանգեցրեց ռուս ժողովրդի ներսում ազգագրական առումով առանձնահատկություններ ունեցող ենթախմբերի ձևավորմանը, որոնք, այնուամենայնիվ, շարունակում էին իրենց համարել հավաքական ռուս ժողովրդի մասեր: Նույնիսկ այդ ենթախմբերի անվանումներն էին հաստատում դա՝ վելիկոռուսներ (Մեծ Ռուսիայի բնակիչներ), մալոռուսներ (Փոքր

Ռուսիայի բնակիչներ), բելառուսներ (Սպիտակ Ռուսիայի բնակիչներ), այսինքն՝ ռուսներ, ռուսներ, ռուսներ... Հատկանշական է, որ 17-րդ դարում, երբ ներկայիս Ուկրաինայի կենտրոնական շրջանների բնակչությունը Բոգդան Խմելնիցկու գլխավորությամբ ապստամբեց լեհական զավթիչների դեմ և դիմեց մոսկովյան ռուսական թագավորությանը՝ միավորման համար, այդ միավորումը հիմնավորում էր ազգային ընդհանրությամբ: Հաջորդ՝ 18-րդ դարի ընթացքում հին ռուսական գրեթե բոլոր հողերը միավորվեցին Ռուսական կայսրության կազմում՝ բացառությամբ ներկայիս Ուկրաինայի արևմուտքում գտնվող Գալիցիայի (Լվով քաղաքով), որը հայտնվեց Ավստրիական կայսրության կազմում: Ինչ վերաբերում է ներկայիս Ուկրաինայի հարավային և հարավարևելյան հատվածներին, որոնք միասին հայտնի են Նովոռոսիա անվամբ, ապա այդ տարածքները բուն Ուկրաինայի հետ պատմականորեն թույլ կապ ունեն: Մինչև 18-րդ դարը դրանք գրեթե անմարդաբնակ էին, գտնվում էին Օսմանյան կայսրության ու Ղրիմի խանության վերահսկողության տակ: Այնուհետև դրանք գրավել է Ռուսական կայսրությունը, որն այդ վայրերում հիմնել է մի շարք քաղաքներ՝ Օդեսա (1794 թ.), Նիկոլաև (1789 թ.), Խերսոն (1778 թ.), Մելիտոպոլ (1784 թ.), Բերդյանսկ (1827 թ.), Դոնեցկ (1869 թ.), Լուգանսկ (1795 թ.), Դնեպրոպետրովսկ (1776 թ., պատմական անվանումը՝ Եկատերինոսլավ) և այլն, և այլն: Դեռևս 17-րդ դարում ռուսական պետությունը սեփական տարածքում հիմնել էր Խարկովը: Նովոռոսիայի բնակեցումն ու յուրացումը տեղի է ունեցել ոչ միայն Ռուսական կայսրության և ապա ԽՍՀՄ կազմում լինելու շնորհիվ, այլև հիմնականում այսօրվա Ռուսաստանի տարածքից տեղափոխված բնակչության ուժերով: Ավելորդ չի լինի նաև նշել, որ Ուկրաինան իր վերջին 150-200 տարվա տնտեսական, սոցիալական, մշակութային,

Կիևի սրբ Սոֆիայի տաճարը

կրթական, գիտատեխնիկական մեծ վերելքի համար պարտական է մասամբ ցարական Ռուսաստանին, բայց առավելապես ԽՍՀՄ-ին:

Մի քանի խոսք «Ուկրաինա», «ուկրաինացիներ» հասկացությունների մասին: «Ուկրաինա» բառն ունի ռուսական ծագում. միջնադարում նշանակում էր «ռուսական հողերի ծայրագավառ»: Հատուկ անուն այն դարձել է միայն 16-րդ դարում, երբ լեհ զավթիչներն այդպես են կոչել իրենց արևելյան համեմատաբար ոչ մեծ տիրույթները Դնեպր գետի երկայնքով՝ Կիևից մինչև ներկայիս Զապորոժիե: «Ուկրաինացի» հասկացությունն էլ լեհական կայսրությունում նշանակում էր «այդ տարածքում մշտական ռազմական ծառայություն անցնող», լիներ դա լեհ թե տեղացի կազակ: Ժամանակի ընթացքում «ուկրաինացի» հասկացությունը ձեռք է բերում նաև աշխարհագրական իմաստ, այսինքն՝ «որոշակի տարածքում բնակվող», բայց ոչ էթնիկ իմաստ: Օրինակ՝ Տարաս Շևչենկոյի ստեղծագործություններում, որը համարվում է նոր ուկրաինական գրականության հայրը, չկա ուկրաինական էթնոսի կամ ազգի մասին պատկերացում: Դա նույնն է, որ Խաչատուր Աբովյանը չիմանար հայ ազգի գոյության մասին: Ուշագրավ է, որ ինքը՝ Տարաս Շևչենկոն, իր իսկ գրած ու 1861 թվականին տպագրած այբբենարանն անվանել է «Հարավռուսերենի այբբենարան» («Букварь Южнорусский») այն պարզ պատճառով, որ «ուկրաիներեն» հասկացությունն իրեն անծանոթ էր:

Ուկրաինայի՝ որպես լայն աշխարհագրական հասկացության և ուկրաինացի ժողովրդի մասին արհեստական պատկերացումներն ի հայտ են գալիս միայն 19-րդ դարում առանձին գիտնականների աշխատություններում, որոնցից են, օրինակ, պոետ, փիլիսոփա և պատմաբան Պանտելեյմոն Կուլիշը (1819-1897) և պատմաբան, տնտեսագետ Միխայիլ Դրագոմանովը (1841-1895): Դարավերջին այդ տերմինները սկսում են գործածել ցարական իշխանություններին քաղաքական ընդդիմադիր հարավռուսական անջատողական շարժման ներկայացուցիչները: Եվ միայն 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո երկու զուգահեռ կազմավորումների ձևավորմամբ Ուկրաինան՝ որպես պաշտոնական անվանում, առաջին անգամ ստացավ իր գրանցումը: Այդ կազմավորումներն էին ազգային անջատողական ուժերի հռչակած Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետությունը (1917-1920 թթ.՝ ընդմիջումներով) և բոլշևիկների հռչակած Ուկրաինայի Սովետական Ժողովրդական (ապա՝ Սոցիալիստական) Հանրապետությունը, որը ստեղծվեց 1917 թ., ապա՝ 1922-1991 թթ., ԽՍՀՄ կազմում էր, իսկ 1991 թ. դարձավ առանձին պետություն: Ուկրաինայի ստեղծմամբ պաշտոնական գրանցում ստացան նաև «ուկրաինացի ժողովուրդ» և «ուկրաիներեն» հասկացությունները: Առաջին մարդահամարը, որի ժամանակ ռուս ժողովրդի մալոռուս հատվածը գրանցվեց (հարկադրաբար) որպես ուկրաինացի, 1926 թվականին էր: 1920-1930-ական թվականներին, այսպես կոչված, կուլտուրական շինարարությունն Ուկրաինայում ընթանում էր արմատականացման կարգախոսով, որը ենթադրում էր Ուկրաինական ԽՍՀ բնակչության մեջ արհեստականորեն ուկրաինական ազգային գիտակցության ձևավորում: Դրան նպաստում էր մինչ այդ մալոռուսական (և ընդհանրապես ռուսական) բնակչության շրջանում զանգվածայնորեն տարածված անգրագիտությունը: 19-րդ դարում ուկրաինական էթնոսի չլինելու վկայությունն է այն, որ ցարական ժամանակներում Մալոռուսիայից ներկա Ռուսաստան տեղափոխվածների սերունդները (օրինակ՝ Կուբանի կազակները) առ այսօր իրենց էթնիկապես ուկրաինացի չեն համարում:

Ուկրաինացի անջատողականներին կանդրադառնանք ստորև: Բայց մինչ այդ մի երկու խոսք այն մասին, թե ինչու էին բոլշևիկյան իշխանությունները վարում ազգային գիտակցության ձևավորման քաղաքականություն: Դա դյուրին բացատրություն ունի. 1) Բոլշևիկներն առաջնորդվում էին այն պատկերացմամբ, որ որքան շատ ժողովուրդներ մասնակցեն սոցիալիստական հայրենիքի շինարարությանը, այնքան լավ: 2) Բոլշևիկյան իշխանության գոյության ինքնաարդարացումներից էր այն դրույթը, թե ցարական Ռուսաստանը ժողովուրդների համար բանտ էր, և միայն խորհրդային իշխանությունը նրանց տվեց ազգային-մշակութային մեծ վերելքի հնարավորություն: Բնականաբար, դրա ամենավառ և ընդգծված օրինակը ուկրաինացիներն էին՝ որպես ԽՍՀՄ-ում ռուսներից հետո ամենախոշոր էթնիկ խումբ: 3) Եվս մեկ բոլշևիկյան դրույթի համաձայն՝ սոցիալիստական ազգերը սոցիալական առումով պարտադիր պետք է ունենային բանվոր դասակարգ: Իսկ ուկրաինական սոցիալիստական ազգի համապատասխան մոդելի ամենաարագ ստեղծման միջոցը Դոնբասի, Դնեպրոպետրովսկի և Խարկովի արդյունաբերական գոտիների բնակչության արհեստական ուկրաինացումն էր: Ուշագրավ է, որ 1917 թ. ստեղծված Ուկրաինան թվարկված հողերը չէր ներառում, ինչպես և Օդեսան ու Խարկովը: Այդ տարածքները Խորհրդային Ռուսաստանից անջատվեցին և նորաստեղծ Ուկրաինայի կազմում ներառվեցին աստիճանաբար՝ 1919-1925 թթ.

ընթացքում, իհարկե, առանց տեղի բնակչության կարծիքը հարցնելու: Հետաքրքիր զուգահեռ Արցախի և Ուտիքի 1921 թվականի ճակատագրի հետ: 4) Վերջապես, բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային Ուկրաինայի կազմավորումը, բոլշևիկյան իշխանության պատկերացմամբ, մեկընդմիշտ պետք է կտրեր ուկրաինական ազգայնական շարժումն իր արևմտյան արմատներից:

Եվ այստեղ հասնում ենք մեր թեմայի գլխավոր գաղտնիքի բացահայտմանը, նրան, որ իրապես ուկրաինական ազգային շարժումն ու անջատողականությունն ունեն արտաքին ծագում: Առանց դա հասկանալու անհնար է ըմբռնել այսօրվա հակամարտության էությունը:

Հետաքրքիրն այն է, որ ուկրաինական ազգայնականության հիմքը դրել են լեհերը: Բանն այն է, որ 1793-1795 թթ. Լեհական կայսրության (Ռեչ Պոսպոլիտայի) բաժանման հետևանքով ներկայիս արևմտաուկրաինական տարածքները հայտնվեցին Ռուսական կայսրության կազմում, սակայն իրական տեր ու տնօրենն այդ տարածքներում մնացին լեհական ծագմամբ տեղացի կալվածատերերը, որոնք չէին կորցնում հույսը՝ ձերբազատվելու ռուսական իշխանությունից: Լեհերը մալոռուսների անջատումը Ռուսաստանից դիտում էին որպես իրենց նպատակներին հասնելու միջոց: Հենց նրանք էլ (ի դեմս լեհ ազնվական գրողներ և վայգիտնականներ Յան Պոտոցկիի ու Տադեուշ Չացկիի) 18-19-րդ դարերի սահմանին առաջ քաշեցին օդից վերցրած մի անհեթեթ դրույթ, թե Մալոռուսիայի բնակիչները ռուսներ չեն, այլ առանձին ժողովուրդ: 1863-1864 թթ. լեհ ազնվականությունը փորձել է ապստամբելով Ռուսաստանից անջատել լեհական հողերը (այսպես կոչված Ցարստվո Պոլսկոյե- Царство Польское) և Մալոռուսիայի արևմտյան մասը, սակայն ապստամբությունը ճնշվել է:

Արևելյան Մալոռուսիայում աստիճանաբար լեհական անջատողական շարժմանն են հարել հին կազակական տոհմերից նրանք, ովքեր այս կամ այն պատճառով դժգոհ էին ցարական վարչակարգից: Նրանց անջատողական նկրտումների համար պատմական հենարան է ծառայել 16-17-րդ դարերում կազակական թվացյալ ազատության հերոսացումը, որի սկիզբը ռուս գրականության մեջ դրել են դեկաբրիստ (այսինքն՝ հակացարական) Ռիլեևը և նույնքան հակացարական Շևչենկոն: Նման պատկերացումների կրողներ էին հին կազակական տոհմիկ գործիչները (Գուլակ, Բելոզերսկի, Կուլիշ, Անդրուզսկի և այլք), որոնք ունեցել են լիբերալ, արևմտամետ ու հակառուսական-հակակայսերական տրամադրություններ և 1846 թ. ստեղծել են Կիրիլ-Մեֆոդիևյան ընկերությունը (Кирилло-Мефодиевское общество)՝ առաջին ուկրաինական ազգայնական կազմակերպությունը Ռուսական կայսրությունում, որի նպատակն էր ի շահ Արևմուտքի պայքարել ռուսական ցարական իշխանության դեմ, կազմալուծել կայսրությունը և այն փոխարինել «ազատ» «դեմոկրատական» հանրապետությունների դաշնությամբ: Այդ կազմակերպության գաղափարախոսության պատմական հիմնավորումը պիտի տային նույն՝ 1846 թ. Կուլիշի գրած ստեղծագործությունը՝ «Повесть об украинском народе» («Պատմություն ուկրաինացի ժողովրդի մասին»), և Շևչենկոյի պոեզիան, որում գովերգվում էր անցյալի կազակական պետականամերժ ազատությունը: Բնականաբար, այս ամենի հետևում, ինչպես ժամանակին դեկաբրիստների թիկունքում, կանգնած էր Մեծ Բրիտանիան, որը հետապնդում էր վտանգավոր հակառակորդի վերացման նպատակ:

1863 թ. լեհական ապստամբության ճնշումից հետո ուկրաինական սեպարատիզմի կենտրոնը դառնում են ավստրիական տիրապետության տակ գտնվող Լվովն ու Գալիցիան: Բայց, ինչպես դժվար չէ կռահել, այդ սեպարատիզմն ուներ ոչ թե հակաավստրիական, այլ հակառուսական ուղղվածություն:

Ուշագրավ է, որ Լվովում ուկրաինական ազգային շարժման հիմնադիրները նույնպես լեհ ազնվականության ներկայացուցիչներն էին, որոնցից է, օրինակ, 1863 թ. լեհական ապստամբությունից հետո Մալոռուսիայից Գալիցիա գաղթած Պաուլին Սվենցիցկին, որը դեռ Ռուսաստանում աչքի էր ընկել գյուղացիության լուսավորման անվան տակ Շևչենկոյի ստեղծագործությունները ժողովրդականացնելով: Լեհ կալվածատերերի միջավայրից դուրս եկած հասարակական գործիչների, գրողների ու հրապարակախոսների երազանքն էր երբևէ ոտքի հանել մալոռուսական բնակչությանն ընդդեմ Ռուսական կայսրության և վերստեղծել Ռեչ Պոսպոլիտան: Այդպիսի գործիչները ստացան ավստրիական իշխանությունների աջակցությունը, որոնք մտավախությամբ էին վերաբերվում Ռուսաստանի հարևանությամբ իրենց իշխանության տակ գտնվող Գալիցիայում ռուս բնակչության գոյությանը և 19-րդ դարի երկրորդ կեսից պլաններ էին մշակում քաղաքական ու գաղափարախոսական ճնշմամբ սերմանելու ռուս հպատակների մեջ ոչ ռուսական գիտակցություն: Այդ նպատակով 1868

«Ազով» ռազմական կազմավորման զինյալները

թ. Լվովում հիմնվում է ազգային-լուսավորչական «Պրոսվիտա» ընկերությունը, որի կողքին 1873 թ. հանդես է գալիս կազմակերպական ավելի ամուր հիմքեր ունեցող Շևչենկոյի անվան գիտական ընկերությունը: Ընկերության խնդիրներից էին արհեստական ճանապարհով մալոռուսական բարբառների հիման վրա ուկրաինական գրական լեզվի ստեղծումը՝ համեմված հնարավորինս շատ լեհական բառերով, մալոռուսական-ուկրաինական ազգային գիտակցության ձևավորմանն ուղղված գրական, ազգագրական ու պատմագիտական ստեղծագործությունների հրապարակումն ու տարածումը, հակառուսական քաղաքական հրապարակախոսության զարգացումը, գիտական կամ կեղծ գիտական պարբերականների թողարկումը: Ընկերությունը բուռն գործունեություն ծավալեց հատկապես 1897-1916 թթ. կազակական ծագում ունեցող պատմաբան, Ուկրաինայի պատմահայր Միխայիլ Գրուշևսկու ղեկավարությամբ, որի օրոք այն ձեռք բերեց գիտությունների ակադեմիայի կարգավիճակ: Բնականաբար, ընկերության գլխավոր ֆինանսավորողն ավստրիական կառավարությունն էր:

«Պրոսվիտա»-ի, ապա Շևչենկոյի անվան ընկերության կյանքում լեհերն ունեցան կարևոր ուղղորդող դեր՝ հանձինս վերը հիշատակված Պաուլին Սվենցիցկու, մեկ այլ լեհ կալվածատեր ընտանիքից սերված Վյաչեսլավ Լիպինսկու և այլն: Նրանք առաջնորդվում էին այն պատկերացմամբ, որ մալոռուսներն ու վելիկոռուսները ոչ միայն տարբեր ժողովուրդներ են, այլև հակոտնյա: Մասնավորապես, պրոպագանդվում էր մեկ այլ լեհ ազնվականի՝ Ֆրանցիշեկ Դուխինսկու առաջ քաշած անհեթեթությունը, թե վելիկոռուսներն անգամ ռուս էլ չեն, այլ ունեն թուրանական ծագում:

Նույն Գալիցիայում 1885 թ. ստեղծվեց առաջին քաղաքական կազմակերպությունը՝ «Նարոդնայա ռադա»-ն, որը բացահայտ հայտարարում էր ռուսներից առանձին մի ժողովրդի գոյության մասին, որը պետք է կոչվեր ոչ թե մալոռուս, այլ ուկրաինացի: Ղեկավարն էր «Պրոսվիտա»-ի հիմնադիր անդամներից մեկը՝ գրող և լրագրող Յուլիան Ռոմանչուկը, որը 1899 թ. Գրուշևսկու հետ հիմնեց ուկրաինական ազգային-դեմոկրատական կուսակցությունը: Ավստրիական խորհրդարանի գրեթե մշտական պատգամավոր Ռոմանչուկը 1890 թ. հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ այն մասին, թե Ավստրո-Հունգարիայի ռուս (ռուսինական) բնակչությունն իրականում առանձին ուկրաինական ժողովրդի մասն է: Այս կազմակերպությունների խնդիրն էր ավստրիական իշխանությունների հովանու ներքո ճնշել Գալիցիայում ռուսամետ տրամադրությունները, որոնք 19-րդ դարակեսին տակավին տիրապետող էին այնտեղ:

Բնականաբար, Գալիցիայում ուկրաինական ազգայնական շարժման գլխավոր թիրախը Ռուսական կայսրության կազմում ներառված Մալոռուսիան էր: Այստեղ այդ պրոպագանդան իր պտուղները սկսեց տալ 20-րդ դարասկզբին, երբ Գրուշևսկու ու Ռոմանչուկի գաղափարակից Նիկոլայ Միխնովսկու (հին լեհական ազնվական ընտանիքից) գլխավորությամբ հիմնվեց նախ Ուկրաինական հեղափոխական կուսակցությունը (1900-1905 թթ.), ապա՝ Ուկրաինական ժողովրդական կուսակցությունը (1902-1907 թթ.)՝ առաջին քաղաքական հակառուսական կազմակերպություններն արդեն Ռուսական կայսրության տարածքում: Ուշագրավ է Միխնովսկու հեղինակած «Ուկրաինական անկախության մանիֆեստը» (1900 թ.), որում խոսվում էր Կարպատներից մինչև Կովկասյան լեռներ ուկրաինական պետության ստեղծման անհրաժեշտության մասին: Մանիֆեստի վերտառությունն էր «Ուկրաինան ուկրաինացիների համար»: Եթե նայենք քարտեզին, կհասկանանք, որ դա նշանակում էր Ռուսաստանը կտրել Սև ծովից: Ի տարբերություն Գալիցիայի՝ ցարական Մալոռուսիայում հակառուսական-հակակայսերական (թե՛ լիբերալ, թե՛ տեղական-ազգայնական, թե՛ սոցիալիստական-հեղափոխական) արտաքին կուրատոր էր հանդես գալիս Մեծ Բրիտանիան՝ լեհական կալվածատերերի ակտիվ ներգրավմամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին՝ 1918 թ., ուկրաինական ազգայնական ուժերի ղեկավարումը ստանձնեց Կայզերական Գերմանիան մինչև սեփական կապիտուլյացիան: Պատերազմից հետո ուկրաինական ու լեհական ազգայնականների ճանապարհները բաժանվեցին, քանզի արևմտաուկրաինական հողերը՝ Լվովով հանդերձ, հայտնվեցին նորաստեղծ լեհական պետության կազմում, որն այնտեղ խեղդում էր ուկրաինական ազգայնական շարժման ցանկացած դրսևորում:

ԽՍՀՄ-ում, ընդհակառակը, ուկրաինական ազգայնական ուժերը գնացին փոխզիջման խորհրդային իշխանության հետ հետևյալ կարգախոսով՝ «թեկուզ խորհրդային, միայն թե ուկրաինական»: Այդ փոխզիջման արտահայտություն էր Գրուշևսկու վերադարձը Խորհրդային Ուկրաինա, որտեղ նա դարձավ Կիևի ԳԱԱ պատմաբանասիրական բաժնի ղեկավար:

Վերոշարադրյալը ցույց է տալիս, որ ուկրաինական «ազգային ինքնագիտակցության» ձևավորումը եղել է արհեստական, ղեկավարվել կամ հովանավորվել է արտաքին (լեհական, ավստրիական, անգլիական) ուժերի կողմից: Եվ այս ամենի նպատակն էր կազմաքանդել Ռուսաստանը, պոկել նրա սեփական հողերից մի մեծ կտոր և ամենակարևորը՝ ուղղել այդ կտորը մնացած Ռուսաստանի դեմ՝ հրահրելով պատերազմ ու փոխադարձ ոչնչացում ռուսական աշխարհում: Ակնհայտ է, որ ուկրաինական գիտակցությունը կարող էր ունենալ միայն հիվանդ ազգայնականության բնույթ, իսկ իր ավարտուն տեսքը կարող էր ստանալ միայն որպես ուկրաինական ֆաշիզմ: Պատահական չէ, որ ներկա ուկրաինական ազգայնականության ամենամեծ հերոսներն են Ստեփան Բանդերան ու Ռոման Շուխևիչը՝ բացահայտ նացիստներ, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ղեկավարել են ուկրաինական ազգայնական շարժումը և հիտլերյան Գերմանիայի աջակցությամբ ոչ այնքան պայքարել են խորհրդային պետության ու Կարմիր բանակի դեմ, որքան իրա-

կանացրել այլախոհ (կոմունիստ) ու այլացեղ (հրեա, լեհ) խաղաղ բնակչության կոտորածներ: Ստեփան Բանդերան իր, այսպես կոչված, ուկրաինական նացիոնալիստների կազմակերպության ղեկավարումը ստանձնել է 1940 թ.՝ հաստատվելով հիտլերյան Գերմանիայի կողմից զատված Լեհաստանի տարածքում, որտեղ իրականացվել է ԽՍՀՄ-ի դեմ դիվերսիոն պայքարի համար գրոհայինների և ահաբեկիչների պատրաստում, և դա՝ դեռևս ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումից առաջ: Թող չշփոթեցնի այն հանգամանքը, որ 1941-1944 թթ. Բանդերան գերմանական բանտում էր՝ ընդ որում ապրելով հյուրանոցային հարմարավետ պայմաններում: Բանդերայի ձերբակալումը միայն նպատակ ուներ անմիջական վերահսկողության տակ պահելու նրա ղեկավարած կազմակերպության ու դրա գրոհայինների գործողությունները և դրանք առավելագույնը ծառայեցնելու Գերմանիային: Ի դեպ, ավելորդ չի լինի նշել, որ այդ ազգայնականներն անմիջականորեն հովանավորվում էին Երրորդ ռեյխի զինվորական հետախուզության ու հակահետախուզության ծառայության («Աբվեր») կողմից, որի ղեկավար Կանարիսը, ըստ որոշ պատմական տեղեկությունների, կապված էր բրիտանական հետախուզության հետ: Այս հանգամանքն ինչ-որ չափով կարող է բացատրել նացիստական Գերմանիայի նկատմամբ բանդերականների ոչ հետևողական կեցվածքը: Բանդերականները 1942 թ. վերջից սկսեցին կազմավորել, այսպես կոչված, «ուկրաինական ապստամբական բանակը»: Ու թեև այն օգտագործվում էր հիտլերականների կողմից Կարմիր բանակի թիկունքում դիվերսիաներ կազմակերպելու, խորհրդային պարտիզանների դեմ պայքարելու և օկուպացված տարածքներում ոստիկանական ծառայության համար, սակայն առավել աչքի ընկավ լեհերի, ռուսների և հրեաների էթնիկ զտումների ու կոտորածների կազմակերպմամբ: Առավել հայտնի է վոլինյան կոտորածը 1943-1944 թթ., երբ Վոլինի մարզում (Արևմտյան Ուկրաինա) կոտորվեց, ըստ տարբեր հաշվարկների, 50-60 հազար լեհ:

1945 թվականից սկսած՝ ուկրաինական ազգայնականության ու ֆաշիզմի նկատմամբ շեֆությունն իրենց վրա են վերցրել անգլո-սաքսոնական երկրները՝ ոչ միայն ԱՄՆ-ն ու Անգլիան, այլև Կանադան, որտեղ 20-րդ դարում կազմավորվել է բավական ագրեսիվ և ռուսատյաց ուկրաինական գաղութ, որը կայուն ազդեցություն է ձեռք բերել այդ երկրի քաղաքական ու հասարակական կյանքում: Անգլոսաքսերի ուկրաինական քաղաքականության միտումն է կտրել Ուկրաինան Ռուսաստանից, կատարել դեռուսիֆիկացիա, վերածել այն մի խոշոր (30-40-միլիոնանոց) հակառուսաստանի և ամեն ինչ անել՝ միմյանց դեմ դուրս բերելու ռուսական աշխարհի երկու խոշոր հատվածները ու դրանով արյունաքամ անելու Ռուսաստանը: Բավական է ծանոթանալ Բժեզինսկու մտքերին, որպեսզի հասկանալի դառնան Ռուսաստանի և Ուկրաինայի հարցում Արևմուտքի ծրագրերը (տես http://ilinalexey.ru/2019/07/07/bzhezinskij-ob-ukraine/):

Բանդերականների երթը ժամանակակից Ուկրաինայում

Ուստի պատահական չէ, որ ԽՍՀՄ փլուզումից (1991 թ.) հետո արևմտյան հովանավորության տակ հայտնված Ուկրաինայի քաղաքական զարգացման ուղղություններն էին աստիճանական հեռացումը Ռուսաստանի հետ սերտ հարաբերություններից, նեոնացիստական ուժերի ամրապնդումն ու նրանց ազդեցության աճը, Բանդերայի ու բանդերականների հերոսացումը պետական մակարդակով, Ռուսաստանի, ռուս ժողովրդի և ամեն ռուսականի նկատմամբ թշնամության սերմանումը, ռուս ուղղափառ եկեղեցու դեմ հալածանքները: Հասարակության մեջ, նացիստական գաղափարախոսությամբ զինված մարտական գրոհային խմբերի ստեղծումը՝ ի դեմս «Ազով», «Պերվիյ սեկտոր» խմբավորումների: Այս ամենը տրամաբանորեն պետք է հանգեցներ 2014 թ. արյունոտ պետական հեղաշրջմանը՝ Արևմուտքի ակտիվ աջակցությամբ, ինչի հետևանքը Ուկրաինայի վերածումն էր բացահայտ նացիստական երկրի, որի գոյության իմաստը պիտի դառնար Ռուսաստանի դեմ պատերազմը: ■

Օգտագործված աղբյուրներ

1. https://iz.ru/1424966/2022-11-14/amerikanskii-razvedchik-obvinil-ssha-v-podderzhke-natcionalistov-na-ukraine.

2. https://katehon.com/ru/news/kak-ssha-podderzhivayut-ukrainskih-neonacistov-azova.

3. https://rossaprimavera.ru/news/0dd01401.

4. https://www.fondsk.ru/news/2022/04/03/75-letnjaja-istoria-tajnogo-sojuza-mezhdu-anglosaksami-i-ukrainskimi-nacistami-55907.html.

5. https://skeptimist.livejournal.com/4471223.html.

6. https://skeptimist.livejournal.com/4471223.html.

7. https://rg.ru/2022/04/06/pochemu-nacizm-vozrodilsia-na-ukraine-a-ne-v-germanii.html.

8. https://news-front.info/2021/10/01/ukrainskih-neonatsistov-finansiruyut-i-vospityvayut-ssha/.

9. https://yandex.ru/video/preview/5189323328776436815.

10. https://yandex.ru/video/preview/18092201389216291507.

ՀՀ-ԵՄ հարաբերություններ (Հոդված 2)

Արփի Աբրահամյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության վարչության անդամ, քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության համագործակցությունը սկսվել է 1990-ական թվականներից: ԵՄ-ի հետ ՀՀ համագործակցությունը կարգավորող իրավական հիմքը 1996 թ. ապրիլի 22-ին ՀՀ-ի և եվրոպական համայնքների ու դրանց անդամ 15 (համաձայնագրի կնքման ժամանակ ԵՄ-ն բաղկացած էր 15 անդամ պետություններից) պետությունների միջև կնքված և 1999 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագիրն է (ԳՀՀ) :

ԳՀՀ շրջանակներում ստեղծվում են միացյալ հաստատություններ՝ ՀՀ-ԵՄ համագործակցության խորհուրդը, ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեն, ՀՀ-ԵՄ համագործակցության առևտրի, տնտեսության և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեն, ինչպես նաև Խորհրդարանական համագործակցության կոմիտեն, որոնց նպատակն էր ապահովել պարբերական և սահուն քաղաքական երկխոսություն:

2003 թ. ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է լինում ԳՀՀ գործադրման ազգային ծրագրի մշակմանը (2006-2009), որի նպատակն էր պլանավորել և իրականացնել ԳՀՀ շրջանակներում ստանձնած պարտավորությունների, մասնավորապես իրավական և ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանեցումը ԵՄ չափանիշներին:

2004 թ. սեպտեմբերի 13-ին ներկայացվում են ազգային ծրագրի կառուցվածքը և հիմնական դրույթները: Կառուցվածքը հետևյալն է.

Գլուխ 1. Քաղաքական իրավիճակը, զարգացումները, ծրագրի նպատակները, չափորոշիչները և գործողությունները,

Գլուխ 2. Տնտեսական իրավիճակը, զարգացումները, ծրագրի նպատակները, չափորոշիչները և գործողությունները,

Գլուխ 3. Իրավական, ինստիտուցիոնալ և քաղաքականության մոտարկում,

Գլուխ 4. Ազգային ծրագրի իրականացման կառուցվածքը և ԵՄ-ի հետ հարաբերությունները,

Գլուխ 5. Ծրագրի պատրաստման և իրականացման ֆինանսական, մարդկային ռեսուրսների հիմնախնդիրները[2]:

ԵՄ-ի նախաձեռնությամբ Հայաստանի՝ Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներ ընդգրկմամբ ՀՀ և ԵՄ հարաբերությունները տեղափոխվում են որակական նոր մակարդակ. գործընկեր և համագործակցող երկրից Հայաստանը դառնում է ԵՄ հարևան երկիր:

2006 թ. նոյեմբերի 14-ին Բրյուսելում ԵՄ-ի հետ ստորագրվում և 2007 թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտնում

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործողությունների ծրագիրը, համաձայն որի՝ հնգամյա գործողությունների ծրագրով Հայաստանը պարտավորվում է առաջընթաց արձանագրել մի շարք ոլորտներում, ինչպիսիք են արդարադատությունը, մարդու իրավունքները, ներդրումային բարենպաստ պայմանների ստեղծումը, վարչարարության և օրենսդրության մոտարկումը, էներգետիկ ոլորտը, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորումը, տարածաշրջանային համագործակցությունը:

Արևելյան գործընկերության շրջանակներում Եվրոպական միությունը առաջարկում է ասոցացման համաձայնագրի կնքում Հայաստանի հետ, որի նպատակն է՝

1. ստեղծել նոր՝ առավել խոր պայմանագրային դաշտ ԵՄ-ի և գործընկեր երկրների միջև ասոցացման համաձայնագրերի միջոցով, ներառյալ, ըստ անհրաժեշտության, Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտին (ԽՀԱԱԳ), որտեղ կարգավորող մերձեցումը կարող է որպես գործիք ծառայել՝ ամրապնդելու առևտրի և ներդրումների ազատականացման դրական ազդեցությունը, ինչը կհանգեցնի համապատասխանեցմանը ԵՄ օրենքներին և չափանիշներին,

2. խթանել քաղաքացիների շարժունակությունը և դյուրացնել մուտքի արտոնագրերի տրամադրումը լավ կառավարվող և ապահով միջավայրում,

3. ընդլայնել համագործակցության ոլորտը և նպաստել ԵՄ ծրագրերում ու մարմիններում գործընկեր երկրների մասնակցությանը:

2010 թ. հուլիսի 19-ին մեկնարկում են ՀՀ-ԵՄ բանակցությունները ասոցացման համաձայնագրի շուրջ (փոխարինելու էր ԳՀՀ-ին):

Ասոցացման համաձայնագրի հիմքում ընկած ընդհանուր սկզբունքներն են՝ հարգանք ժողովր-

դավարական սկզբունքների, մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և օրենքի գերակայության նկատմամբ, հարգանք ինքնորոշման իրավունքի, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության և անկախության նկատմամբ:

Ասոցացման համաձայնագիրը բաղկացած էր 4 մասից՝ 1. Քաղաքական երկխոսություն, արտաքին քաղաքականություն և անվտանգության քաղաքականություն, 2. Ազատություն, արդարադատություն և անվտանգություն, 3. Տնտեսական և ոլորտային համագործակցություն, 4. Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունները տարվում էին առանձին:

2012 թ. փետրվարի 17-ին ԵՄ առևտրային քաղաքականության հանձնաժողովը որոշում է կայացնում ՀՀ-ի հետ Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունների մեկնարկի վերաբերյալ:

ԽՀԱԱԳ բանակցությունները սկսելու նպատակով ՀՀ-ն մշակել և հաստատել էր բանակցությունների մեկնարկի ապահովման միջոցառումները, որոնք պետք է իրականացվեին մինչև 2011 թ. ավարտը[3]:

Թեև 2013 թ. նոյեմբերի 29-ին ԱԼԳ վիլնյուսյան գագաթնաժողովի շրջանակներում ընդունվում է ՀՀ-ԵՄ համատեղ հայտարարությունը, որով վերահաստատվում է երկուստեք հանձնառությունը՝ շարունակելու զարգացնել և ամրապնդել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում համապարփակ համագործակցությունը, սակայն 2013 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ-ն հայտարարում է Մաքսային միությանն անդամակցելու որոշման մասին, որով պայմանավորված՝ ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագիրը (դրա մաս հանդիսացող Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ԱՀ/ԽՀԱԱԳ) չի ստորագրվում:

ԵՄ պնդմամբ՝ ասոցացման համաձայնագրի կնքումը դառնում է անհնարին, քանի որ երկիրը չի կարող միաժամանակ գտնվել երկու՝ մաքսային և առևտրային գոտիներում: Այս առումով արտահայտվել է Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Էլմար Բրոքը՝ նշելով, որ Մաքսային միությանն անդամակցելու մասին որոշումը ՀՀ նախագահը կայացրել է ՌԴ ճնշման ներքո՝ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված բարդ իրավիճակի պատճառով[4]:

Սկզբնական շրջանում հայկական կողմն առաջարկում է Վիլնյուսի գագաթնաժողովում ստորագրել ասոցացման համաձայնագրի «քաղաքական մասը»՝ փաստաթղթից հանելով Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտուն վերաբերող դրույթները, սակայն ԵՄ-ն չի համաձայնում: Այս հարցի շուրջ ԵՄ հետևողական դիրքորոշումն այն էր, որ քաղաքական ասոցացումը և տնտեսական ինտեգրումը պետք է ընթանան միաժամանակ՝ լինելով ասոցացման համաձայնագրի անբաժանելի մասերը[5]:

2015 թ. դեկտեմբերի 7-ին Բրյուսելում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը և ԵՄ միասնական արտաքին քաղաքականության ու պաշտպանության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին ազդարարում են ՀՀ-ԵՄ նոր իրավական փաստաթղթի շուրջ բանակցությունների մեկնարկը: Փաստաթուղթը ստանում է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր» անվանումը: Նորացված համաձայնագիրն ընդլայնելու էր ՀՀ-ԵՄ հարաբերությունների շրջանակը, նրանց գլոբալ, քաղաքական և տնտեսական շահերը, այն մարտահրավերները, որոնք ցանկանում էին միասին հաղթահարել:

Նոր համաձայնագիրը հիմնված էր նախքան Վիլնյուսի գագաթնաժողովը առաջադրված ասոցացման համաձայնագրի վրա: Այն չէր կարող պարունակել արտոնյալ առևտրային համակարգի մասին դրույթ, քանի որ ՀՀ-ն մաքսերի հաստատման գործառույթը փոխանցել էր ԵԱՏՄ-ին:

Եվրոպական հարևանության վերանայված քաղաքականության, ինչպես նաև ԱԼԳ շրջանակներում նոր համաձայնագիրը փոխարինելու էր ՀՀ-ԵՄ գործընկերության և համագործակցության համաձայնագրին, որը նախատեսում էր լայնամասշտաբ համագործակցություն՝ քաղաքական երկխոսության, առևտրի, ներդրումների, տնտեսության, օրինաստեղծ գործընթացների և մշակութային ուղղություններով:

2017 թ. փետրվարի 27-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը և ԵՄ խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը Բրյուսելում հայտարարում են բանակցային գործընթացի ավարտի մասին, իսկ մարտի 21-ին Երևանում կողմերը նախաստորագրում են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ)[6]:

Բրյուսելում 2017 թ. նոյեմբերի 24-ին կայացած ԱԼԳ 5-րդ գագաթնաժողովում Սերժ Սարգսյանի և Դոնալդ Տուսկի ներկայությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը և ԵՄ բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին ստորագրում են ՀԸԳՀ-ն:

Ըստ համաձայնագրի՝ բոլոր կողմերի վավերացումից հետո ՀՀ-ԵՄ հարաբերությունները կարգավորվե-

Էդուարդ Նալբանդյանը և Ֆեդերիկա Մոգերինին ստորագրում են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը

լու էին այդ համաձայնագրով[7]:

2018 թ. հունիսի 1-ից սկսվել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ժամանակավոր կիրարկումը:

2021 թ. մարտի 1-ից ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրն ուժի մեջ է մտել: Այն վավերացվել է ՀՀ-ի, ԵՄ բոլոր անդամ պետությունների և Եվրոպական խորհրդարանի կողմից[8]:

Համաձայնագիրը կնքվել է հետևյալ սկզբունքների հիման վրա՝ ժողովրդավարական սկզբունքներ, իրավունքի գերակայություն, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանք՝ ամրագրված ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ԵԱՀԿ հելսինկյան եզրափակիչ ակտում և 1990 թ. Նոր Եվրոպայի փարիզյան խարտիայում, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ համապատասխան այլ փաստաթղթերում, ինչպիսիք են, օրինակ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որոնք կողմերի ներքին և արտաքին քաղաքականության հիմքն են և սույն համաձայնագրի կարևոր տարրերը[9]:

Համաձայնագրի հոդվածներում ներառված են դրույթներ քաղաքական երկխոսության, բարեփոխումների, արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Առանձնակի ներկայացնենք համաձայնագրի մի քանի հոդվածների որոշ դրույթներ:

Համաձայնագրի 5-րդ հոդվածը վերաբերում է արտաքին և անվտանգության քաղաքականությանը.

«1. Կողմերը պետք է ակտիվացնեն արտաքին և անվտանգության քաղաքականության, այդ թվում՝ ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության ոլորտում իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից՝ միջազգային կազմակերպություններում և համագործակցության ձևաչափերում իր մասնակցությանը և դրանից բխող իր առկա պարտավորություններին տրվող կարևորությունը, ինչպես նաև պետք է լուծեն, մասնավորապես, հակամարտության կանխարգելման և ճգնաժամի կառավարման, ռիսկի նվազեցման, կի-բեռանվտանգության, անվտանգության ոլորտի բարեփոխման, տարածաշրջանային կայունության, զինաթափման, չտարածման, սպառազինությունների վերահսկման և արտահանման վերա-հսկման հետ կապված խնդիրներ»[10]:

Համաձայնագրի 6-րդ հոդվածը վերաբերում է միջազգային նշանակության ծանր հանցագործություններին և Միջազգային քրեական դատարանին: Սույն հոդվածի 1-ին դրույթով՝ «Կողմերը վերահաստատում են, որ միջազգային հանրության համար մտահոգիչ ամենածանր հանցագործությունները իրենց ամբողջության մեջ չպետք է անպատիժ մնան, և որ դրանց արդյունավետ քրեական հետապնդումը պետք է ապահովվի ազգային և միջազգային մակարդակով, այդ թվում՝ Միջազգային քրեական դատարանի մակարդակով միջոցներ ձեռնարկելու միջոցով», իսկ 3-րդ դրույթով՝ «Կողմերը համաձայնում են սերտորեն համագործակցել ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների կանխարգելման գործում՝ օգտվելով համապատասխան երկկողմ և բազմակողմ շրջանակներից»[11]: Այս դրույթների կենսագործումը բխում է ոչ միայն ՀՀ, այլև համամարդկային շահերից:

Տեղին է հիշատակել 2004 թ. փետրվարի 19-ի գիշերը Բուդապեշտում ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում կազմակերպված դասընթացներին մասնակցող հայ սպա Գուրգեն Մարգարյանի սպանությունը ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովի կողմից: Հունգարիայի դատարանը Ռամիլ Սաֆարովին դատապարտել էր ցմահ ազատազրկման, որը, Հունգարիայից արտահանձնվելով Ադրբեջան, արժանացել էր ներման ու հերոսացվել ազգությամբ հայ սպանելու համար, ինչն իրականացվել էր հրապարակային արարողությամբ:

Այս գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ թույլ է տրվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված կյանքի իրավունքի խախտում ընթացակարգային առումով (2-րդ հոդված), ինչպես նաև խախտվել է խտրականության արգելքի իրավունքը (14-րդ հոդված)՝ զուգակցված 2-րդ հոդվածով: Վճռում մասնավորապես նշվում է, որ Ադրբեջանը չի ապահովել իր քաղաքացու նկատմամբ սահմանված պատժի հետագա կիրառումը, ինչը հանգեցրել է ատելության հիմքով կատարված հանցանքի անպատժելիության[12]:

Այդուհանդերձ, Եվրոպական դատարանը Գուրգեն Մարգարյանի սպանությունը չի վերագրել Ադրբեջանին՝ հենվելով հունգարական դատավճռի այն հետևության վրա, որ այդ արարքները կատարելիս Սաֆարովը գործել է մասնավոր կարգավիճակով: Եվրոպական դատարանը պատասխանատվությունից ազատել է նաև Հունգարիային[13]: Դատարանն արձանագրել է, որ Ադրբեջանը տապալել է ազգային ատելության հիմքի վրա կատարված սպանության համար պատժի կիրառման ապահովումը՝ ներում շնորհելով, խրախուսելով ոճրագործին[14]:

Չնայած Ադրբեջանի իշխանությունների այդ անընդունելի գործելակերպի սուր քննադատությանը՝ ԵՄ-ն գործնական ոչ մի քայլ չարեց Ադրբեջանին այլ վարքագիծ որդեգրել հարկադրելու ուղղությամբ: Ավելին՝ ԵՄ-ն, հետամուտ էներգետիկ ներկրումների ուղիների բազմազանեցման իր շահերին, շարունակում է այդ ոլորտում ռազմավարական գործընկերությունն Ադրբեջանի հետ[15]:

Կարծում ենք՝ նման հանցանքի հերոսացումն ու խրախուսումն ունեցան վտանգավոր հետևանքներ՝ պարարտ հող ստեղծելով հետագայում Ադրբեջանի կողմից ավելի մեծ դաժանությամբ հանցագործությունների կատարման համար (2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմ, 2020 թ. թուրք-ադրբեջանական տանդեմի սանձազերծած 44-օրյա պատերազմ):

Համաձայնագրի 8-րդ հոդվածը վերաբերում

է տարածաշրջանային կայունությանը և հակամարտությունների խաղաղ կարգավորմանը:

Երկար ժամանակ է, ինչ Արցախն աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, փակ է[16]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ադրբեջանի դեմ կիրառած միջանկյալ միջոցը Լաչինի միջանցքի բացման որևէ երաշխիք չի տալիս[17]:

Սույն հոդվածի 1-ին դրույթը սահմանում է, որ «Կողմերը պետք է ակտիվացնեն իրենց համատեղ ջանքերը հետագա տարածաշրջանային համագործակցության պայմանները բարելավելու համար՝ խթանելով միջսահմանային տեղաշարժով բաց սահմանների առկայությունը, բարիդրացիական հարաբերությունները և ժողովրդավարական զարգացումը՝ այդպիսով նպաստելով կայունությանը և անվտանգությանը, ինչպես նաև պետք է աշխատեն հակամարտությունների խաղաղ կարգավորման ուղղությամբ»[18]:

Թեև ԵՄ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով բարձր հանձնակատար Ժոզեպ Բորելը նշում է, որ Հայաստանի և Ադրբեջանի սահմանին ԵՄ դիտորդական առաքելության տեղակայումը միտված է վստահության ամրապնդմանը անկայուն իրավիճակում, որը ռիսկի տակ է դնում մարդկային կյանքեր, և հակամարտության կարգավորման գործընթացին[19], և հայ-ադրբեջանական սահմանի հայկական կողմում Եվրամիության նոր՝ ավելի երկարաժամկետ առաքելություն տեղակայելու համար ստեղծվել է Բրյուսելի աշխատանքային խումբը[20], տեսանելի է, որ հակամարտությունների խաղաղ կարգավորմանը չի նպաստում հակառակորդ կողմը: Դեռ ավելին՝ Ադրբեջանի իշխանությունները պարբերաբար հայտարարում են, որ էներգապաշարների առևտրից գոյացող եկամուտը ծախսում են սպառազինություն կուտակելու և անհրաժեշտության դեպքում արցախյան խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու, ինչպես նաև ՀՀ տարածաշրջանային մեկուսացման քաղաքականությունն ամրապնդելու համար[21]:

Համաձայնագրի 9-րդ հոդվածը վերաբերում է զանգվածային ոչնչացման զենքերին, դրանց չտարածմանը և զինաթափմանը:

Ուկրաինան Ադրբեջանին մատակարարել է սպիտակ ֆոսֆոր պարունակող զինամթերք, որը 2020 թվականին օգտագործվել է Լեռնային Ղարաբաղի շուրջ ռազմական գործողությունների ժամանակ[22]: Այս առումով Ուկրաինայի և Ադրբեջանի դեմ ոչ մի պատժամիջոց չի կիրառվել, մինչդեռ համաձայնագրի սույն հոդվածի 1-ին դրույթում կողմերն ամրագրել են, որ «ԶՈՋ-երի տարածումը և դրանց մատակարարման միջոցները՝ թե՛ պետական և թե՛ ոչ պետական դերակատարներին, ինչպիսիք են օրինակ՝ ահաբեկիչները և մյուս հանցավոր խմբերը, ամենալուրջ սպառնալիքներից մեկն են միջազգային խաղաղության և կայունության համար»[23]:

Համաձայնագրի 11-րդ հոդվածը վերաբերում է ահաբեկչության դեմ պայքարին, որի 1-ին դրույթով՝

«Կողմերը վերահաստատում են ահաբեկչության դեմ պայքարի և դրա կանխարգելման կարևորությունը և համաձայնում են միասին աշխատել երկկողմ, տարածաշրջանային և միջազգային մակարդակով՝ ահաբեկչությունն իր բոլոր ձևերով և դրսևորումներով կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար»: Իսկ 2-րդ դրույթով՝ «Կողմերը համաձայնում են, որ էական է, որպեսզի ահաբեկչության դեմ պայքարն իրականացվի՝ լիովին պահպանելով իրավունքի գերակայությունը և միջազգային իրավունքին, այդ թվում՝ մարդու իրավունքների միջազգային նորմերին, փախստականների վերաբերյալ միջազգային նորմերին և միջազգային մարդասիրական իրավունքին, ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին և ահաբեկչության դեմ պայքարին վերաբերելի բոլոր համապատասխան միջազգային փաստաթղթերին լիովին համապատասխան»[24]:

Եվս մեկ օրինակ. 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքներում ահաբեկչություն իրականացնելու նպատակով Թուրքիայի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության պատասխանատու պաշտոնատար անձինք, գործելով կազմակերպված խմբի կազմում, համապատասխան ֆինանսական միջոցներ, ինչպես նաև զենք ու զինամթերք են տրամադրել «Սուլթան Սուլեյման Շահ / Ալ Ամշաթ», «Սուկուր», «Ալ Համզաթ», «Սուլթան Մուրադ» միջազգային ահաբեկչական խմբավորումներին, նրանց կազմից կատարել ահաբեկիչ-վարձկանների ընտրություն, ապահովել նրանց սահուն, անարգել անցումը Սիրիայի և Թուրքիայի պետական սահմանով նախ Թուրքիայի, ապա՝ Ադրբեջանի տարածքներ[25]:

ԵՄ-ն թուրք-ադրբեջանական տանդեմի նկատմամբ դեռևս ոչ մի պատժամիջոց չի կիրառել:

ԵՄ-ն իր հերթական հայտարարության մեջ արցախյան հակամարտության կարգավորման առումով «երկու կողմին կոչ է անում շրջել թշնամանքի էջը և շարունակել հաշտեցմանն ուղղված ջանքերը»:

Պարզ երևում է, որ Հարավային Կովկասում ԵՄ-ն ցանկանում է ավելի ընդարձակել իր ազդեցության գոտին, ապահովել իր մշտական ներկայությունը տարածաշրջանում:

ԵՄ-ն ավելացնում է իր աջակցության ծավալները և գրեթե կրկնապատկում ամենամյա դրամաշնորհային հատկացումները, որոնք 2019 և 2020 թթ. տարեկան կազմել են 65 մլն եվրո:

2022 թ. դեկտեմբերին Եվրոպական միությունը ստորագրել է «Ներդրում կատարելու մասին համաձայնագիր» (6.5 մլն եվրո) ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԶԾ-ի և ՊՀԾ-ի հետ՝ աջակցելու ՀՀ կառավարության սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխմանն ու արդիականացմանն ուղղված ջանքերին[27]:

Հատկանշական է, որ, էներգետիկ շահերով («Հարավային գազային միջանցք» էներգետիկ ծրագիր) պայմանավորված, Եվրամիությանն անհրաժեշտ է տարածաշրջանային կայունություն:

«Հարավային գազային միջանցքը» էներգետիկ ծրագիր է, որը ներկայումս ներառում է չորս պետություն՝ Ադրբեջան, Թուրքիա, Թուրքմենստան և Վրաստան, և կապակցում երեք խողովակաշար՝ Անդրկասպյան (Թուրքմենստան-Ադրբեջան), Հարավկովկասյան (Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա) և Անդրադրիատիկ (Թուրքիա-Հունաստան)[28]:

Թեև ԵՄ-ն հույս է հայտնում, որ գազային միջանցքի ներդրումը դրական ազդեցություն կունենա Հարավային Կովկասում կայունության, համագործակցության և բարեկեցության վրա, սակայն Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ՀՀ տարածաշրջանային մեկուսացման ու շրջափակման պայմաններում այդ ծրագրերը բոլորովին չեն նպաստում տարածաշրջանային կայունությանը, փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը, այլ բխում են տվյալ պետությունների, հատկապես ԵՄ-ի, Թուրքիայի և Ադրբեջանի կենսական ու քաղաքական շահերից:

Օգտագործված աղբյուրներ

1. Տես «Եվրոպական միություն», ՀՀ կենտրոնական բանկ, Եր., 2011, էջ 36:
2. Տես նույն տեղում, էջ 270:
3. Տես ՀՀ վարչապետի որոշումը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ վարվելիք բանակցությունների մեկնարկի ապահովման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին, 2011-ի թ. օգոստոսի 10-ի թիվ 763-Ա որոշում, https://www.gov.am/u_files/file/decrees/varch/2011/08/MAR-763_1.pdf (մուտք՝ 08.01.2023):
4. Տես «Հինգ հարց ու պատասխան ՀՀ-ԵՄ նոր համաձայնագրի մասին», (մուտք՝ 08.01.2023):
5. Տես Շտեֆան Ֆյուլե. «Ասոցացման համաձայնագիրը մասնատել չենք կարող», https://mediamax.am/am/news/interviews/7973 (մուտք՝ 08.01.2023):
6. Տես https://www.president.am/hy/press-release/item/2017/02/27/President-Serz-Sargsyan-met-with-President-of-the-European-Council-Donald-Tusk/ (մուտք՝ 08.01.2023):
7. Տես «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր», https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf?fbclid=IwAR2673vUP91kFZ9fXcBrpElc86zV1oYiQVYm0h3ltTo2559P_zCus__GCl4 (մուտք՝ 08.01.2023):
8. Տես «Փաստեր և թվեր ԵՄ-Հայաստան հարաբերությունների մասին», Մարտ, 2021 թ., https://eeas.europa.eu/sites/default/files/eap_factsheet_armenia_ar_1.pdf (մուտք՝ 08.01.2023):
9. Տես «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր»:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում:
12. Տես https://yerevan.today/all/iravakan/56686/gourgen-margaryani-gortsov-mied-i-vchiry-karevor-nshanakoutyoun-kounena-mip (մուտք՝ 08.01.2023):
13. Տես https://armenpress.am/arm/news/1027031.html (մուտք՝ 08.01.2023):
14. Տես նույն տեղում:
15. Տես «Եվրոպագիտություն», դասագիրք, խմբագրությամբ Նարեկ Գալստյանի, Եր., ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, 2021, էջ 322:
16. Տես https://www.youtube.com/watch?v=C_e99y3Htys (մուտք՝ 08.01.2023):
17. Տես https://www.youtube.com/watch?v=sFYH4VH4cMY (մուտք՝ 08.01.2023):
18. «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր»:
19. Տես https://yerkir.am/hy/article/2022/10/17/1432?fbclid=IwAR0zUuutR5JvpAAn3IJ1W3hT9A7_X2GVo7m05IWEEbRL-RyJFR2-p9EE1fYA (մուտք՝ 08.01.2023):
20. Տես https://www.youtube.com/watch?v=0Li-fTBZtkM (մուտք՝ 08.01.2023):
21. Տես «Եվրոպագիտություն», էջ 322:
22. Տես https://yerkir.am/hy/article/2022/11/16/3049?fbclid=IwAR0JoKUB0f5cEKtqzPbbrAhPLd16GMf4-PfAT6CC-gBr5s42HT676bAi88A (մուտք՝ 08.01.2023):
23. «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր»:
24. Նույն տեղում:
25. Տես https://hayeli.am/?p=615644&l=am (մուտք՝ 08.01.2023):
26. https://bit.ly/3IPK8xh (մուտք՝ 08.01.2023).
27. Տես https://yerkir.am/hy/article/2022/12/21/4922 (մուտք՝ 08.01.2023):
28. Տես «Եվրոպագիտություն», էջ 314:

«Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը» և հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները

Արմեն Մարուքյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հայ ժողովուրդն ավելի քան մեկ դար պայքարում է 19-րդ դարավերջին - 20-րդ դարասկզբին իր նկատմամբ իրագործված ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար: Այդ ժամանակամիջոցում ծավալված պայքարի արդյունքում շուրջ երեք տասնյակ երկրների խորհրդարաններ և մի շարք միջազգային կազմակերպություններ ընդունել են Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևեր, որոնցով իրավաքաղաքական հստակ գնահատական է տրվել հայերի նկատմամբ կատարված հանցագործությանը՝ այն որակելով իբրև ցեղասպանություն և մատնանշելով դրա համար պատասխանատու պետությանը: Չնայած այդ ամենին՝ Թուրքիան պետական մակարդակով շարունակում է ժխտել հայերի նկատմամբ կատարված հանցագործությունը: Այդ պայմաններում ակնհայտ է դառնում, որ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար պայքարելով անհնար է հասնել հարցի վերջնական հանգուցալուծմանը, և վաղուց հասունացել է պահը՝ պայքարելու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ու հատուցման համար: Այդ ուղղությամբ առաջին լուրջ քայլը կատարվեց 2015 թ. հունվարի 29-ին, երբ հենց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հուշահամալիրի մոտ պաշտոնապես հրապարակվեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»: Այդ փաստաթղթով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը, հանդես գալով համայն հայության անունից, հիմնվելով երիտթուրքերի վարչակազմը դատապարտող Անտանտի պետությունների 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրի, թուրքական ռազմական արտակարգ ատյանների 1919-1921 թթ. դատավճիռների, 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրի և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճռի վրա և ղեկավարվելով ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1946 թ. դեկտեմբերի 11-ի բանաձևի (96 (1)), 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, 1968 թ. նոյեմբերի 26-ի «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև 1966 թ.

դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի և մարդու իրավունքների վերաբերյալ մյուս բոլոր միջազգային ակտերի համապատասխան սկզբունքներով ու դրույթներով, հայտարարեց, որ այդ պահից ի վեր մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև ցեղասպանության հետևանքները հաղթահարելու համար[1]:

Միանգամայն բնական է, որ պաշտոնական շրջանառության մեջ դնելով «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարում» ձևակերպումը, որը հայոց պահանջատիրության, հատուցման գաղափարի դիվանագիտական արտահայտությունն է, հռչակագրային բնույթ ունեցող տվյալ փաստաթղթում հնարավոր չէր հստակեցնել, թե ինչ է նկատի առնվում «Հայոց ցեղասպանության հետևանքներ» ասելով, և ինչպես կամ ինչ չափով է պատկերացվում դրանց հաղթահարումը, քանզի կան հետևանքներ, որոնք ուղղակիորեն անվերականգնելի են:

Համահայկական հռչակագիրն ընդունած համահայկական կառույցի հաջորդ տրամաբանական քայլը պետք է լիներ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար Թուրքիային ներկայացվելիք պատմահիրավական հիմնավոր պահանջների փաթեթփաստաթղթի» ընդունումը: Համահայկական հռչակագրի 6-րդ կետը, ըստ էության, հենց դրան է վերաբերում՝ արձանագրելով, որ պետք է մշակվի իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի

մեկնարկ[2]: Պահանջների փաթեթի կամ թղթածրարի ընդունումը կարևոր է այն առումով, որ այդ կերպ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հարցում կորդեգրվի համազգային միասնական մոտեցում:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստները և դրանց չվերացման պատճառով առաջացած հետևանքները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) հայրենազրկում, բ) մարդկային կորուստներ, գ) մշակութային ժառանգության կորուստ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեբանական բարդույթներ:

Ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովուրդը զրկվեց իր հայրենիքի մեծագույն հատվածից՝ Արևմտյան Հայաստանից, ինչի հետևանքով սփռվեց աշխարհով մեկ: Հայերի հայրենազրկման ուղղակի հետևանք պետք է համարել Սփյուռքի գոյավորումը, քանզի ցեղասպանությունից հրաշքով փրկված արևմտահայերը, կորցնելով իրենց հայրենի օջախները, ստիպված էին հայրենիքից դուրս ամեն ինչ սկսել զրոյից՝ օտար միջավայրում անցնելով համակերպման դժվարին ճանապարհ: Մյուս կողմից՝ հայրենիքի մեծ մասի կորուստը և արևմտահայության ողջ մնացած հատվածի դուրսմղումը Արևմտյան Հայաստանից երկփեղկել են հայ ժողովրդին, խախտել նրա միասնականությունը, ջլատել ուժերն ու խաթարել բնականոն զարգացման հեռանկարները: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի երկու հիմնական հատվածները հեռացել են միմյանցից, ինչը լուրջ խզում է առաջացրել նրանց միջև: Արևմտահայերը դարձել են սփյուռքահայեր, իսկ արևելահայերն ու Արևելյան Հայաստանում հաստատված արևմտահայ գաղթականության մի հատվածը՝ հայաստանցիներ: Ապրելով տարբեր վարչակարգերի պայմաններում՝ ժամանակի ընթացքում նրանք ձեռք են բերել միմյանցից տարբերվող մտածողություն, ինչն էապես բարդացնում է համահայկական հարցերի լուծման գործընթացը[3]:

Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ հայրենազրկման հաղթահարման պահանջն ավելի իրատեսական է ամփոփել այն սահմաններում, որոնք ամրագրված են ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճռով*, ինչը ոչ միայն չի հակասում, այլև համապատասխանում է ցեղասպանության իրականացման պահին գործող միջազգային իրավական նորմերի, մասնավորապես՝ 1907 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային բախումների խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի դրույթներին, որոնց համաձայն՝ կողմերի միջև վեճի կարգավորման եղանակ է նաև միջազգային իրավարարությունը (արբիտրաժը): Ուստի Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռն իրավացիորեն կարելի է դիտել որպես քաղաքական պատասխանատվության սահմանում հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության համար[4]:

Մարդկային կորուստները: Հայոց ցեղասպանությանը զոհ գնաց շուրջ 1.5 միլիոն հայ: Սակայն մարդկային կորուստները հստակեցնելիս անպայմանորեն պետք է հաշվի առնվի նաև ցեղասպանության քաղաքականության ընթացքում իսլամացած հայերի թիվը, որոնք ցեղասպանության զոհ ժողովրդի համար նույնպես մարդկային կորուստ են, քանզի ուծացման այդ գործընթացի հետևանքով նրանք դադարել են իրենց հայ համարելուց:

Մարդկային կորուստների թվի հստակեցումից հետո անհրաժեշտ է պարզել, թե այդ կորուստներն ինչ հետևանքներ են ունեցել և ինչպես են անդրադարձել հայ ժողովրդի հետագա վերարտադրման վրա, և որքան կկազմեր հայերի թիվն այսօր՝ հանցագործությունից մեկ դար անց, եթե ցեղասպանության զոհերը ողջ լինեին: Այս առումով պետք է հաշվի առնել այն, որ արևմտահայերի ընտանիքները, որպես կանոն, բազմազավակ էին: Բացի այդ՝ 25 տարին մեկ տեղի է ունենում բնակչության վերարտադրություն (ռեգեներացիա), այսինքն՝ անցած մեկ դարի ընթացքում առնվազն չորս անգամ պետք է կատարվեր նաև սպանված հայերի վերարտադրությունը, եթե նրանք ողջ մնային:

Մշակութային ժառանգության կորուստ: Փարիզի խաղաղության վեհաժողովին հայկական պատվիրակությունների ներկայացրած հուշագրի համաձայն՝ ցեղասպանության ընթացքում թուրքական իշխանությունները հիմնովին կամ մասամբ ավերել են հայերին պատկանող բազմաթիվ ազգային կառույցներ՝ 83 առաջնորդարան, 1860 եկեղեցի և մատուռ, 229 վանք, 26 վարժարան և դպրեվանք, 1439 դպրոց, 42 որբանոց՝ բռնագրավելով դրանց գույքը և ոչնչացնելով դրանցում պահվող արժեքավոր գրքերն ու ձեռագիր մագաղաթները[5]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալներով՝ Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թվականից հետո կանգուն են մնացել 913-ը, որոնցից հետագա տարիների ընթացքում 464-ը հիմնովին ոչնչացվել են, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ունեն: Ակնհայտ է, որ նույն ճակատագրին են արժանացել նաև հայկական առաջնորդարաններն ու վարժարանները: Նշենք, որ երբ խոսում ենք «շարունակվող ցեղասպանության» մասին, նկատի ունենք նաև Թուրքիայի՝ հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի նկատմամբ պետականորեն շարունակվող ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնելու այն ամենը, ինչն ապացուցում կամ վկայում է այդ տարածքի իրական տերերի՝ հայերի մասին:

Հայկական ձեռագրերի ու հնատիպ գրքերի կորուստը դրամական միջոցներով անհնար է վերականգնվել: Խիզանի Սբ Խաչ վանքում պահվող մոտ 1.000 գրքերը մոխիր են դարձել[7]: Վարագա վանքի թաքստոցներից մեկում պահվող 150 կտոր մագաղաթները և ընտիր ձեռագիր մատյանները նույնպես անհետացել են, կորսվել են նաև Կեսարիայի շուրջ 700 արժեքավոր ձեռագրերը[8]: Մի քանի տվյալների համադրությամբ

կատարված ընդհանուր հաշվարկով՝ այդ տարիներին ավելի քան 20.000 ձեռագրեր ու հնատիպ մատյաններ հրո ճարակ են դարձել[9]:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդի մշակութային ժառանգության կորուստների վերականգնման պահանջը կարող է հիմնավորվել 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի՝ ոչ մահմեդականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող 37-44-րդ հոդվածներով: Մասնավորապես պայմանագրի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թուրքական կառավարությունը պարտավորվել է կատարյալ պահպանության տակ առնել եկեղեցիները, սինագոգները, գերեզմանները և փոքրամասնությունների այլ կրոնական հաստատություններ[10]: «Լիակատար պահպանություն» ասելով պետք է հասկանալ ոչ միայն եկեղեցիները չքանդելն ու չավերելը, այլև դրանց ամրացումն ու նորոգումը:

Հայոց ցեղասպանության **նյութական կորուստներն** ու դրանց հետևանքները հստակեցման կարիք ունեն: Փարիզի վեհաժողովին կից ստեղծվել էր փոխհատուցումների հանձնաժողով, որը զբաղվում էր պարտված երկրների կողմից հաղթողներին տրվելիք ռազմատուգանքների չափերի հստակեցումով: Քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ պարտված տերությունները պետք է փոխհատուցեն նաև այլ երկրների՝ պատերազմում նրանց հասցված վնասների դիմաց: 1919 թ. մարտի 7-ին հանձնաժողովին կից ստեղծվում է հատուկ հանձնախումբ, որն էլ մարտի 8-ին դիմում է մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանին, նյութական վնասների հաշվարկ ներկայացնելու հարցով: Հանձնախումբը ներկայացված հաշվարկներն ամփոփեց 1919 թ. ապրիլի 14-ին: Այսինքն՝ Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի գլխավորած պատվիրակություններն այդ լուրջ և պատասխանատու աշխատանքի համար ունեցել են ոչ ավել քան մեկ ամիս ժամանակ, որի ընթացքում ուղղակի անհնար էր ամբողջական տվյալներ հավաքել ու համակողմանիորեն համակարգել դրանք:

Հայկական պատվիրակությունների ներկայացրած փաստաթղթում բացակայում են Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ նահանգների հայ կաթոլիկ և ավետարանական համայնքների կրած նյութական կորուստները: 1904 թ. Սուրբ Փրկիչ եկեղեցու տարեգրքում նշված է, որ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում այդ պահի դրությամբ 67 հայ կաթոլիկ եկեղեցի էր գործում[11], հայ բողոքականները կայսրության տարածքում ունեին 310 ժողովարան, որոնց գերակշիռ մասը հիմնահատակ կործանվել է[12]:

Հուշագրում չեն հաշվառվել նաև այն նյութական վնասները, որոնք թուրքադրբեջանական զորքերի կողմից հասցվել են Բաքվի հայությանը 1918 թ., և բնականաբար չէին կարող նաև հաշվառվել փաստաթուղթը ներկայացնելուց հետո արդեն քեմալականների կողմից 1920 թ. արևելահայությանը, 1921 թ. կիլիկիահայությանը և 1922 թ. Զմյուռնիայի հայությանը հասցված նյութական վնասները[13]: Որոշ հեղինակների կարծիքով՝ ցեղասպանության քաղաքականության շարունակման հետևանքով հայերին հասցված նյութական վնասի նշված չափը պետք է ավելանա առնվազն 20 %-ով[14]:

Որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմվի, թե տնտեսական ինչ օգուտներ է քաղել թուրքական պետությունը հայերի զանգվածային կոտորածներից ու տեղահանությունից, բավական է նշել, որ, հակառակ պատերազմական ծանր պայմաններին ու կայսրության տնտեսության կաթվածահար վիճակին, երկրի պետական բյուջեն արձանագրեց աննախադեպ աճ: Այսպես՝ եթե 1913-1914 թթ. այն կազմում էր 35 մլն օսմ. ոսկի, ապա 1915-1916 թթ.՝ 38 մլն, իսկ 1917-1918 թթ.՝ 85 մլն[15]: Ակնհայտ է, որ տվյալ պայմաններում թուրքական բյուջեի նման աճը կարող էր ապահովվել միայն հայերի գույքի և ունեցվածքի բռնագրավման հաշվին: Այստեղ տեղին է արձանագրել դատապարտելի այն փաստը, որ թուրքական պետությունը փաստորեն օգտվում էր իր իսկ կազմակերպած ու իրագործած հանցագործության՝ Հայոց ցեղասպանության պտուղներից, ինչը նույնպես հանցագործություն է:

Հայկական պատվիրակությունների ներկայացրած հուշագիրը պետք է ճշգրտվի ըստ Ողջակիզման հետևանքով Գերմանիայի կողմից հրեաներին հասցված վնասների հատուցման փաստաթղթերի և 1952 թ. սեպտեմբերի 10-ին կնքված լյուքսեմբուրգյան համաձայնագրի, որոնք նախադեպ կարող են հանդիսանալ նաև Հայոց ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասները հաշվարկելու գործընթացում: 1951 թ. Իսրայելի արտաքին գործերի նախարար Մ. Շարեթը Գերմանիայից պահանջել էր Իսրայելում վերաբնակեցված, ցեղասպանությունից փրկված 500.000 հրեաների աբսորբացիայի համար վճարել 1.5

մլրդ, այսինքն՝ յուրաքանչյուրի համար 3.000-ական դոլար[16]: Հայկական պատվիրակության հուշագրում նույնպես անդրադարձ է կատարվել այս հարցին, սակայն նախատեսված էր աքսորից վերապրած և արտասահմանում ապաստանած յուրաքանչյուր հայ ընտանիքին, այլ ոչ թե անհատին, հատուցել 1919 թ. համարժեք 4.000 ֆրանսիական ֆրանկի չափով: Եթե արևմտահայ 160.000 ընտանիքների համար (800.000 մարդ. ընտանիքի անդամների միջին թիվ է ընդունվել 5-ը) կիրառենք հրեաների համար ընդունված մեկ շնչին հատկացվող գումարի հաշվարկի մեթոդը, ապա նրանց համար պահանջվող 640 մլն ֆրանկը[17] առնվազն պետք է հնգապատկվի: Պետք է հաշվի առնվի, որ, ի տարբերություն հայերի, հրեաներին գումարը տրվում էր հրեական պետությունում աբսորբացիայի համար, մինչդեռ արևմտահայերը աբսորբացիայի դժվարին ուղի են անցել օտար պետություններում՝ բացարձակապես ոչինչ չստանալով դրա համար: Այնպես որ այս խնդիրը նույնպես պետք է հաշվի առնվի նյութական վնասը հաշվարկելիս: Բացի դրանից՝ նման հաշվարկներ կատարելիս պետք է անպայմանորեն հաշվի առնել Լոզանի պայմանագրի դրույթները կոպտորեն խախտելու միջոցով Թուրքիայի կողմից հայկական համայնքի կալվածքների ապօրինի բռնագրավման հանգամանքը[18]: Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի զանգվածային ոչնչացումը կանխեց այդ նյութական հարստության բազմապատկման հնարավորությունը: Ցեղասպանությունից հրաշքով փրկված տասնյակ հազարավոր հայեր, կորցնելով իրենց ունեցվածքը, ստիպված էին արտասահմանում ամեն ինչ սկսել զրոյից՝ կրելով սոցիալտնտեսական անասելի զրկանքներ: Պետք է հաշվարկվեն նաև անցած տասնամյակների ընթացքում այդ գումարի վրա ավելացած թե՛ բանկային տոկոսները և թե՛ գնաճը: Վերջապես, Հայոց ցեղասպանության նյութական կորուստները հաշվարկելիս չպետք է մոռանալ նաև բաց թողնված շահույթի մասին, որով միայն կամբողջականացվի հայերին հասցված նյութական վնասների վերջնական չափը: Այս առումով նշենք, որ 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին Ա. Ահարոնյանի և Նուբար փաշայի ներկայացրած հուշագրով հայ ժողովրդի նյութական կորուստների չափը՝ 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկը, գնաճի վերահաշվառմամբ 1987 թ. կազմելու էր 640.89 մլրդ ֆրանկ*, ինչը համարժեք է 106.82 մլրդ ԱՄՆ դոլարի, իսկ 2008 թ. դրությամբ՝ 298 մլրդ ԱՄՆ դոլար: Այդ գումարին հետազոտող Գ. Բաղջյանը անցած տասնամյակների համար ավելացնում է տարեկան 5 % նվազագույն բանկային տոկոսադրույքը, որով 2008 թ. դրությամբ ստացվում է մոտ 9.97 տրլն ԱՄՆ դոլար[19]: Այս գումարը Գ. Բաղջյանը ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված միայն փաստացի նյութական վնասի (damnum emergens) չափն է համարում, որի մեջ չի ներառվում հասցված նյութական վնասի հետևանքով բաց թողնված շահույթը (lucrum cessans), ինչպես նաև բարոյական վնասը (pretium doloris)[20]:

Հոգեբանական հետևանքները: Հայոց ցեղասպանության հոգեբանական սթրեսները նույնպես անհետևանք չեն մնացել և անդրադարձել են հայ ժողովրդի հետագա կենսագործունեության վրա: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ բարդույթներ ու վախեր, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն ազդել ու շարունակում են ազդել ոչ միայն եղեռնը անմիջականորեն վերապրածների, այլև հաջորդ սերունդների վրա: Ընդ որում, խոսքը ոչ միայն ցեղասպանությունն անմիջականորեն վերապրածների ու նրանց սերունդների, այլև ողջ հայ ժողովրդի մասին է, որի մեջ առաջացել են թերարժեքության բարդույթներ: Դեռևս լիովին չի վերացել այն մտավախությունը, որ կատարվածը մի օր կարող է կրկնվել, քանի որ մեղավոր կողմը ոչ միայն չի ընդունել իր մեղքը և չի ապաշխարել, այլև շարունակում է ժխտել պատմական իրողությունը: Իր հայրենիքի մեծագույն մասը կորցնելով՝ հայ ժողովուրդը զրկվել է սեփական կենսատարածքի և նախնիների կերտած ազգային արժեքներին հաղորդակից լինելու հնարավորությունից: Դրա հետևանքով առաջացած թերարժեքության բարդույթներից մեկն էլ պետք է համարել այն, որ ոմանց մոտ առաջացել են թերահավատություն ու անվստահություն ազգի ապագայի, սեփական ուժերի ու կարողությունների հանդեպ և օտար արժեքներին ապավինելու հակում[21]: Ուստի հայ ժողովրդի շրջանում Սփյուռքում ու Հայաստանում զարգացման ու առաջադիմության ձգտումների փոխարեն տասնամյակներ շարունակ իշխում էր գոյատևման հոգեբանությունը:

Հայոց ցեղասպանության հոգեբանական հետևանքների հաղթահարման առումով միջազգային իրավունքում կիրառելի է սատիսֆակցիան, որը կարող է արտահայտվել խախտման ճանաչման, ափսոսանքի արտահայտման, պաշտոնական ներողության կամ այլ պատշաճ ձևերով: Այս առումով սատիսֆակցիայի առաջին քայլերը պետք է լինեն հայ ժողովրդից Թուրքիայի պաշտոնապես ներողություն խնդրելը, պետականորեն վարվող Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունից հրաժարվելը, Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդին կից գործող Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդը լուծարելը և քրեական օրենսգրքից «թուրքական ինքնությունը վիրավորելու» համար քրեական պատիժ նախատեսող տխրահռչակ 301-րդ հոդվածը վերացնելը: Այս քայլերին պետք է հաջորդեն ավելի կոնկրետ գործողություններ, մասնավորապես՝ Թուրքիայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանների ու թանգարանների կառուցումը, կրթական հաստատություններում հայերի ցեղասպանության մասին դասընթացների ներառումը, դպրոցական դասագրքերում այդ թեմայի ընդգրկումը, Արևմտյան Հայաստանի նախկին աշխարհագրական անվանումներով ու տեղանուններով պատմական

քարտեզների վերահրատարակումը և այլն:

Պահանջների փաթեթի հիման վրա Սփյուռքի ու Հայաստանի համապատասխան կառույցների ու մասնագետների համատեղ ջանքերով պետք է մշակվի նաև մարտավարական, կիրառական փաստաթուղթը՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործողությունների ծրագիրը» (այսուհետ՝ գործողությունների ծրագիր): Դրանում մատնանշվելու են այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով հնարավոր է լինելու հասնել վերը նշված հետևանքների հաղթահարմանը: Այս փաստաթուղթը, ի տարբերություն առաջինի, լինելու է փակ, սահմանափակ օգտագործման համար նախատեսված՝ թույլ չտալու, որ հակառակորդը, նախապես իմանալով, հնարավորություն ստանա կանխարգելիչ քայլերով չեզոքացնելու իր համար անբարենպաստ հետևանքները: Գործողությունների ծրագրի կարևորագույն խնդիր-ներից մեկը պետք է լինի կատարվելիք աշխատանքների բաժանումը Հայաստանի և Սփյուռքի միջև՝ ելնելով նրանց իրավասություններից, կարողություններից ու փորձառությունից: Ճիշտ այնպես, ինչպես Ողջակիզման հատուցման գործընթացում հստակ դերաբաժանում էր կատարվել Իսրայելի ու սիոնիստական կազմակերպությունների միջև, նույն կերպ Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման գործընթացում պետք է հստակեցվի, թե ինչ է անելու Հայաստանը, և ինչ խնդիրներ են դրվելու Սփյուռքի առաջ:

Այս առումով պետք է նշել, որ Ողջակիզման հետևանքների հաղթահարման գործընթացում Իսրայել պետության ու հրեական սփյուռքի ներդաշնակ համագործակցությունը դեռևս հաջողված բացառիկ օրինակներից է: Այդ գործում մինչև Իսրայել պետության ստեղծումը ոչ պաշտոնական մակարդակով նախապատրաստական լուրջ աշխատանքներ էին կատարվում համաշխարհային սիոնիստական կազմակերպության կողմից: Այս առումով պետք է նշել, որ մինչև Հայաստանի անկախության հռչակումը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործով բացառապես զբաղվում էին Սփյուռքի կառույցները, բայց, ավաղ, օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներից ելնելով, Հայաստանի անկախացումից հետո էլ այդ ուղղությամբ տարվող աշխատանքների հիմնական ծանրությունը շարունակեց կրել Սփյուռքը:

1948 թ. իր կազմավորումից հետո հրեական պետությունն ինքը պաշտոնապես հանդես եկավ Ողջակիզման հետևանքով հրեա ժողովրդին հասցված վնասների հատուցման պահանջով: 1951 թ. սկզբներին Իսրայելի արտգործնախարար Մ. Շարեթը Գերմանիային ուղղված հատուցման պահանջը հասցեագրեց հաղթանակած տերություններին՝ ԱՄՆ-ին, ԽՍՀՄ-ին, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային: Այդ պահանջը տերությունները, բացառությամբ ԽՍՀՄ-ի, վերահասցեագրեցին Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը: Այսպիսով՝ Իսրայելը հստակ հասկացնել էր տալիս թե՛ հանցագործ պետությանը՝ Գերմանիային, և թե՛ ողջ աշխարհին, որ հրեական անկախ պետականության ստեղծումից հետո պահանջատեր է ոչ միայն և ոչ այնքան հրեական սփյուռքը, որքան հրեական պետությունը, որը ողջ հրեա ժողովրդի շահերի ու իրավունքների ներկայացուցիչն է:

Այնուհետև՝ 1951 թ. հոկտեմբերի 23-ին, հրեական ազգային ու միջազգային կազմակերպությունները Նյու Յորքում հրավիրում են Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների համաժողովը (կրճատ՝ Պահանջների կոնֆերանսը), որը, ըստ հայտարարության, պետք է բանակցություններ սկսեր Գերմանիայի հետ Ողջակիզման հետևանքով հրեաներին հասցված վնասների հատուցման հարցի շուրջ: Պետք է նշել, սակայն, որ սա սիոնիստական կազմակերպությունների ինքնագործունեությունը չէր, այլ Իսրայել պետության ու հրեական սփյուռքի կողմից մշակված ծրագիր, որում հրեական պետությունն առաջին պլան էր մղում նացիստական հանցագործություններից տուժած հրեական սփյուռքի լիազոր մարմնին, սակայն իրականում ինքը ոչ միայն վերահսկում, այլև ուղղորդում էր այդ գործընթացը: Դրա վկայությունն այն է, որ մեկ ամիս անց՝ 1951 թ. դեկտեմբերին, Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ Պահանջների կոնֆերանսի ներկայացուցիչ Նաում Գոլդմանը Գերմանիայի վարչապետ Կ. Ադենաուերի հետ պայմանավորվածություն ձեռք բերեց բանակցությունների հիմքում դնելու Իսրայելի արտգործնախարար Մ. Շարեթի ներկայացրած՝ նյութական վնասների հատուցման չափը[22]: Դժվար չէ նկատել, որ հրեական պետությունը համակարգում ու ղեկավարում էր տվյալ գործընթացը, թեև Գերմանիայի հետ բանակցությունների սեղանի շուրջ հրեական կողմից հանդես էին գալիս միայն սիոնիստական կառույցների ղեկավարները: Ողջակիզման նյութական վնասների հատուցման շուրջ բանակցությունները սկսվեցին 1952 թ. մարտին և ավարտվեցին սեպտեմբերի 10-ին՝ լյուքսեմբուրգյան պայմանագրի ստորագրմամբ՝ մի կողմից՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ի դեմս Կ. Ադենաուերի), իսկ մյուս կողմից՝ Իսրայել պետության և Պահանջների

կոնֆերանսի (համապատասխանաբար ի դեմս արտգործնախարար Մ. Շարեթի և Պահանջների կոնֆերանսի ներկայացուցիչ Ն. Գոլդմանի) միջև[23]: Պայմանագրի համաձայն՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը պարտավորվում էր հատուցել Ողջակիզման հետևանքով հրեա ժողովրդին հասցված նյութական վնասները, ընդ որում՝ ոչ միայն անհատ հրեաներին ու հրեական կազմակերպություններին, այլև Իսրայել պետությանը, որտեղ ապաստան էր գտել նացիստական հանցագործություններից փրկված հրեաների մի մասը[24]: Չնայած լյուքսեմբուրգյան պայմանագրի ստորագրմանը և այն հանգամանքին, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն արդեն սկսել էր կատարել հրեաներին Ողջակիզման նյութական վնասների հատուցման իր պարտավորությունը, միևնույն է, Իսրայելը տարիներ շարունակ հայտարարում էր, որ հրեական պետության ներկայացուցչի ստորագրությունը տվյալ պայմանագրում դեռևս չի նշանակում, որ իրենք ներել են գերմանացիներին կամ ճանաչում են գերմանական պետության գոյությունը: Լյուքսեմբուրգյան պայմանագրի ստորագրումից միայն 13 տարի անց՝ 1965 թ., երկու պետությունների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:

Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև նման դերաբաշխումը թույլ կտա Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացները համակարգել մեկ կենտրոնից, այսինքն՝ արդյունավետորեն օգտագործել եղած սահմանափակ ռեսուրսները և խուսափել գործողությունների կրկնությունից: Գործողությունների ծրագրում պետք է հաստակեցվեն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ ինչպես միջազգային իրավական, այնպես էլ քաղաքական հարթություններում զուգահեռաբար տարվող աշխատանքները:

Միջազգային իրավական հարթություն: Հայաստանը՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, հիմնվելով թե՛ ՄԱԿ-ի կանոնադրության և թե՛ անմիջականորեն ցեղասպանության կոնվենցիայի դրույթների վրա, կարող է դիմել միջազգային դատական ատյաններին՝ և՛ իր ու Թուրքիայի միջև եղած վեճը լուծելու, և՛ կոնկրետ հարցերի, օրինակ՝ կոնվենցիայի դրույթների մեկնաբանման ու կիրառման, կամ էլ ՄԱԿ-ի կառույցների միջոցով ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի օրինականության և վավերականության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն տալու խնդրանքով: Սակայն այստեղ ծագում են նաև միջազգային դատական ատյանների՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանի կամ միջազգային արբիտրաժի իրավասությունների և ընդհանրապես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում դրանց դիմելու նպատակահարմարությունը պարզելու հարցերը:

Միջազգային իրավունքի ոլորտում պետությունների պատասխանատվության ինստիտուտի հստակ ամրագրման նպատակով Հայաստանը պետք է ակտիվացնի իր գործակցությունը ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի հետ, որի շուրջ 50 տարվա աշխատանքով ստեղծված «Միջազգային հակահրավական արարքների համար պետությունների պատասխանատվության մասին» փաստաթուղթը հավանության արժանացավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 2001 թ. դեկտեմբերի 12-ին ընդունած 56/83 բանաձևով: «Միջազգային հանցագործության» փոխարեն՝ այս փաստաթղթում կիրառվել է «միջազգային հակահրավական արարք» ձևակերպումը՝ չքրեականացնելու միջազգային իրավունքի նորմեր ստեղծող սուբյեկտներին՝ պետություններին: Այդ փաստաթղթում ցեղասպանություն հանցագործությունը որակվում է իբրև ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտում, ինչը, անշուշտ, ենթադրում է նաև պատասխանատվություն: Ցավոք, դա այս ուղղությամբ ընդունված դեռևս միակ փաստաթուղթն է, ուստի Հայաստանը՝ որպես շահագրգիռ կողմ, այստեղ դեռ շատ անելիքներ ունի:

Բոլոր դեպքերում չպետք է մոռանալ էստոպելի սկզբունքի մասին և անընդհատ հարցը պահել Հայաստանի և Սփյուռքի օրակարգերում, որպեսզի ոչ ոք չկարողանա պնդել, թե Հայաստանը կամ հայերն իրենց գործողություններով կամ անգործությամբ հաշտվել են ստեղծված իրողության հետ և կորցրել ժամկետները՝ այդպիսով զրկվելով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցը միջազգային ատյաններում բարձրացնելու իրենց իրավունքից:

Գաղտնիք չէ, սակայն, որ միջազգային իրավունքի և հատկապես դրա նորմերի կիրառման վրա որոշակի ազդեցություն ունեն աշխարհաքաղաքական զարգացումները, տարածաշրջանային գործընթացները, միջազգային հարաբերություններում ուժերի ու շահերի վերադասավորումները և այլն: Քանի որ Թուրքիան հետևողականորեն շարունակում է իր ժխտողական քաղաքականությունը և բացառում անգամ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցի քննարկումը, ակնհայտ է, որ թուրքական իշխանությունները միայն արտաքին ու ներքին ճնշումների պայմաններում հարկադրված կլինեն անդրադառնալ այդ հիմնախնդրին: Դա կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարները թուրքական կողմին հստակ հասկացնել տան, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում Թուրքիան այլևս այլընտրանք չունի, ինչպես ժամանակին տեղի ունեցավ գերմանացի ժողովրդի և Գերմանիա պետության հետ: Այս հանգամանքներից ելնելով՝ Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային իրավական գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող ու դրան զուգահեռ տարվող քաղաքական գործընթացով:

Քաղաքական հարթությունում տարվող աշխատանքները պետք է ներառեն ոչ միայն զուտ քաղաքական, այլև գիտական ու քարոզչա-

կան բաղադրիչներ: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար քաղաքական հարթությունում անհրաժեշտ է իրականացնել մի շարք գործողություններ, մասնավորապես.

1. Պետք է հետևողական աշխատանք տանել ցեղասպանություն հանցագործությունից տուժած ժողովուրդների խախտված իրավունքների վերականգնման պայքարի ընդհանուր ճակատի ձևավորման ուղղությամբ, ինչը զգալիորեն կբարձրացնի իրականացվող աշխատանքների արդյունավետությունը և հաջողության հասնելու հավանականությունը: Նշենք, որ այս գործընթացի հիմքերն արդեն իսկ դրվել են Օսմանյան կայսրության և նրա իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության կողմից ցեղասպանության ենթարկված ժողովուրդների՝ հայերի, ասորիների ու հույների սերտ համագործակցության ձևաչափով, որին կարող են միանալ նորանոր ժողովուրդներ ու երկրներ: Այս առումով կարևոր քայլ պետք է համարել 2015 թ. մարտի 24-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ. ասորիների և հույների ցեղասպանությունը դատապարտող հայտարարության ընդունումը:

2. Անհրաժեշտ է հետևողական աշխատանք տանել Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրների հետ այն առումով, որ ռացիոնալացվեն նրանց ընդունած բանաձևերն ու որոշումները՝ վերածվելով օրենքների, որպեսզի այդ երկրներն ու կառույցներն իրենց քաղաքականությամբ սատարեն Հայաստանին, երբ հասունանա հարցը միջազգային դատական ատյաններում բարձրացնելու պահը: Եվրոպական որոշ երկրների կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը օրենսդրորեն քրեականացնելու նախաձեռնությունը եվրոպական մյուս պետությունների հայկական համայնքները պետք է փորձեն տարածել նաև իրենց երկրների վրա: Այս առումով նպաստավոր է այն հանգամանքը, որ Եվրամիության անդամ երկրները, 2008 թ. նոյեմբերի 28-ին ստորագրելով «Քրեական պատիժներ սահմանելու միջոցով ռասիզմի և այլատյացության որոշ տեսակների ու դրսևորումների դեմ պայքարելու մասին» շրջանակային համաձայնագիրը, պարտավորություն են ստանձնել իրենց օրենսդրությունը համապատասխանեցնելու դրա դրույթներին:

3. Հայաստանը կարող է, օրինակ, դիմել Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրներին՝ խնդրելով, որ նրանք պահանջեն ու ճնշում գործադրեն Թուրքիայի վրա, որ վերջինս կատարի այդ պայմանագրի 37-44-րդ հոդվածներով իր ստանձնած պարտավորությունները իր ոչ մահմեդական բնակչության իրավունքները պաշտպանելու վերաբերյալ: Թուրքիայի հետ Լոզանի պայմանագիրը ստորագրած պետությունները գործնականում կարող են առաջնորդվել այդ պայմանագրի 44-րդ հոդվածի 4-րդ մասով և, Թուրքիայի կողմից իր ոչ մահմեդական հպատակների իրավունքների խախտումը դիտելով այդ երկրի հետ իրենց վեճ, դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան, որն Արդարադատության միջազգային մշտական պալատի լուծարումից հետո համարվում է վերջինիս ժառանգորդ դատական ատյանը: Նման գործընթաց սկսելու համար բավարար է Լոզանի պայմանագիրը ստորագրած պետություններից անգամ մեկի պահանջը, քանզի Թուրքիան, ստորագրելով ու վավերացնելով այդ պայմանագիրը, համաձայնել է, որ այդ վեճերի քննության հետևանքով միջազգային դատական ատյանի կայացրած վճիռն իր համար լինելու է վերջնական:

4. Այն երկրներում, որոնք դեռևս չեն ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը, անհրաժեշտ է տարբեր լեզուներով ստեղծել ու տարածել հանրամատչելի տեղեկատվական բուկլետներ, բրոշյուրներ: Գերադասելի է դա անել Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով, որպեսզի գործին տրվի պաշտոնական բնույթ: Նույնը պետք է արվի նաև էլեկտրոնային լրատվամիջոցների և համացանցի միջոցով: Այդ երկրներում անհրաժեշտ է ձևավորել բարենպաստ հասարակական կարծիք Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար: Այս գործողությունների թիրախը պետք է դառնան հիմնահարցին անտեղյակ կամ թուրքական ժխտողական քարոզչության հետևանքով ապակողմնորոշված զանգվածները, որոնց մատչելի ձևով և համոզիչ պետք է ներկայացվի պատմական ճշմարտությունը: Աշխատանքներ պետք է տարվեն նաև այդ երկրների գիտական շրջանակների հետ, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության տարբեր հիմնահարցերի շուրջ կարելի է հրավիրել միջազգային գիտաժողովներ՝ տվյալ երկրի գիտնականների մասնակցությամբ, իսկ գիտաժողովի նյութերը պետք է թարգմանվեն տարբեր լեզուներով ու տարածվեն: Գիտաժողովների արդյունքների հիման վրա պետք է ընդունվեն բանաձևեր՝ ուղղված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, Հայոց ցեղասպանությունը դեռևս չճանաչած երկրների ու հատկապես Թուրքիայի նախագահներին: Այս առումով լավ օրինակ են 2015, 2016, 2018

և 2022 թվականներին տարբեր երկրներից ժամանած անվանի գիտնականների, հոգևորականների, լրագրողների ու քաղաքական գործիչների մասնակցությամբ Երևանում կազմակերպված «Ընդդեմ ցեղասպանություն հանցագործության» գլոբալ ֆորումները, ինչպես նաև ցեղասպանություն հանցագործության դեմ պայքարող անձանց «Ավրորա» մրցանակաբաշխությունները:

Վերջին շրջանում, հատկապես Արցախյան երրորդ պատերազմից և դրան անմիջապես հաջորդած Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու գործընթացների մեկնարկից հետո մեզանում հետևողականորեն տարածվում են Հայոց ցեղասպանության վնասների հատուցման անհնարինության մասին թեզերը, որոնցով փորձ է արվում արժեզրկելու պահանջատիրության, հատուցման գաղափարը: Իրականությունը, սակայն, այն է, որ հիմա, առավել քան երբևէ, այդ գաղափարն արդիական է, և ծայրահեղությունների մեջ չընկնելու, ինչպես և իրատեսական պատկերացումներով առաջնորդվելու պարագայում հնարավոր է գտնել այդ հիմնահարցի ռացիոնալ լուծումները: Համապատասխան փաստերի ու միջազգային իրավական նորմերի հիման վրա լիովին հնարավոր է մշակել հատուցման գործընթացի որոշակի մեխանիզմներ և գործիքակազմ՝ հիմնվելով նախկինում արդեն իրականացված նման գործընթացի նախադեպերի վրա: Խոսքը մասնավորապես Հոլոքոստի հետևանքով հրեա ժողովրդին հասցված բարոյական ու նյութական վնասների հատուցման մեխանիզմների մասին է, որոնք կարող են օգտագործվել նաև Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված բարոյական ու նյութական վնասների հատուցման գործում: Ինչ վերաբերում է հայերի կորցրած հայրենիքին և պատմամշակութային ժառանգությանը հասցված վնասներին, ապա այս պարագայում հատուցման մեխանիզմի հիմքում կարող են դրվել մեր տրամադրության տակ եղած փաստերն ու միջազգային իրավական համապատասխան փաստաթղթերը:

Ամփոփելով նշենք, որ արագ փոփոխվող աշխարհում, երբ տասնամյակներ շարունակ գոյություն ունեցած պետական սահմանները կարող են վերաձևումների ենթարկվել, և դրանից ոչ մի պետություն, այդ թվում՝ Թուրքիան, երաշխավորված չէ, մենք, թեկուզև ընդհանուր գծերով, պետք է պատրաստ ունենանք Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր գործընթացի մեխանիզմների և գործիքակազմի մոդել կամ մոդելներ, որպեսզի աշխարհաքաղաքական և տարածաշրջանային բարենպաստ պայմանների ստեղծման պարագայում կարողանանք ներկայացնել գոնե դրա նախագիծը, և չստացվի այնպես, որ մենք հերթական անգամ դուրս մնանք գործընթացներից: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը ոչ միայն հայության իրավունքների վերականգնման ու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման հարց է, այլև մեր սրբազան պարտքն է անմեղ զոհերի հիշատակի առաջ: ■

Հղումներ

1. Տես «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը», http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/ (մուտք՝ 10.01.2023):
2. Տես նույն տեղում:
3. Տես Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 271:
   * Խոսքը չի վերաբերում 1878, 1918, 1920 թթ. սկզբին Ռուսաստանյան կայսրության, իսկ հետո էլ Հայաստանի Հանրապետության անբաժան մասը կազմող Կարսի մարզին, Բաթումի մարզի հարավային հատվածին և Սուրմալուի գավառին, որոնք Մոսկվայի ու Կարսի անօրինական պայմանագրերով հանձնվեցին Թուրքիային:
4. Տես Մարուքյան Ա., ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի քաղաքական ու միջազգային իրավական նշանակությունը, «Մեծ եղեռն. դատապարտումից հատուցում» (հոդվածների ժողովածու), Եր., 2011, էջ 97:
5. Տես Լևոն Վարդան, Հայկական տասնհինգը և հայերու լքեալ գոյքերը (Քննական ակնարկ մը ըստ թրքական վաւերագրերու), Պէյրութ, 1970, էջ 316:
6. Տես «Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի 2007 թ.», Եր., 2011, էջ 144:
7. Տես Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, № Բ-Դ, էջ 103:
8. Տես Նույնի՝ «Էջմիածին», 1966, № Ե-Է, էջ 143-144:
9. Տես Худавердян К., Саакян Р., Геноцид армян сквозь призму десятилетий, Ер., 1995, էջ 37-38:
10. Տես «Treaty of Lausanne», http://wwi.lib.byu.edu/index.php/ (մուտք՝ 10.01.2023):
11. Տես Baghdjian K. K., The confiscation of Armenian properties by the Turkish Government said to be abandoned, Antilias, 2010, էջ 72:
12. Տես Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում: 1915-1923 թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Վէմ», Եր., 2010, № 3 (31), էջ XXVI:
13. Տես Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999, էջ 11:
14. Տես Դաղայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուց-ման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ.: Գիտական զեկուցումների ժողովածու, Մոսկվա, 2008, էջ 180:
15. Տես Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ XXIX:
16. Տես Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 284:
17. Տես «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները», Եր., 1999, էջ 9:
18. Տես Թորիկեան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976, էջ 138:
   * Տասնամյակների ընթացքում գնաճի հետևանքով 1915-1919 թթ. մեկ ֆրանկը 1987 թ. արժեզրկվել և հասել է 33.5:
19. Տես Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 275-276:
20. Տես նույն տեղում, էջ 277-278:
21. Տես «Стратегические последствия геноцида армян», «Византийское наследство» (информационно-аналитический журнал), Ер., 2002, N 3, էջ 16:
22. Տես Մարության Հ., Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ.: Գիտական զեկուցումների ժողովածու, Մոսկվա, 2008, էջ 81-82:
23. Տես Гирин И., Vae victis или унижение? http://bercovich-zametki.com/2007/Zametki/ Nomer3/Girin1.htm (մուտք՝ 10.01.2023):
24. Տես նույն տեղում:

Բացուի՛լ

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Երբ կը խօսուի բացուելու մասին, հարցը ինծի համար կը ներկայանայ զոյգ երեսներով՝ ճանչնալ և ճանչցուիլ:

Այս ընկերական զրոյցը բնականաբար նկատի պիտի առնէ ճանչնալու և ճանչցուելու հաւաքական ոլորտը, ինչ որ, սակայն, չի զանց առներ նաև անհատական ոլորտը, որ, ուզենք կամ չուզենք, իր դերը կը խաղայ հաւաքական ճիգին մէջ ալ: Բայց այդ արդէն կրնայ ուրիշ մտորումներու նիւթ դառնալ:

Նաև, բնականաբար, պիտի խօսուի հայութեան մասին, թէև ըսուելիքները կրնան ընդհանրացուիլ բոլոր ազգութիւններու պարագային, իսկ փոխադարձ ճիգերն ալ իրենց երկկողմանի ազդեցութիւնը կ՚ունենան մէկը միւսին վրայ:

Նպատակս է, սակայն, կեդրոնանալ մեր վրայ ու փորձել ներկայացնել ճանչնալու և ճանչցուելու մեր դաշտերը, մեր սահմանափակութիւններն ու մեր կարելիութիւնները:

Ճանչնա՛լ: Սկսելով, ի հարկէ, մենք զմեզ ճանչնալով:

Այդ «մենք»-ը կրնայ ըլլալ ամենէն փոքր միաւորէն մինչև ամենէն մեծ միաւորը: Առնենք, օրինակի համար, որևէ վարժարան, որ կը գործէ համայնքի մը մէջ: Առաջին հերթին ան նախ լաւ պիտի սերտէ իր ունեցած ուժերը, գիտնայ իր ներուժը, բացայայտէ իր թերութիւնները, քննարկէ զանոնք սրբագրելու միջոցները, գիտակցի իր առաւելութիւններուն և ծրագրէ անոնց զարգացումը: Սա ներքին ճանաչումն է, ինքզինքի՛ն վրայ բացուիլն է, նաև ճանչցուելու նախապայմանը:

Կայ, սակայն, անոր յաջորդ փուլը՝ դիմացինին բացուելու: Իսկ ո՞վ է այդ դիմացինը: Ահա այստեղ կան տարբեր նկատառումներ կամ հասկացութիւններ՝

ներքին և արտաքին:

Ներքինը կրնայ ուրիշ հայկական վարժարան մը ըլլալ նոյն համայնքին մէջ: Անո՛ր բացուելու, զայն ճանչնալու, անո՛ր կողմէ ճանչցուելու պարագաներով: Իսկ այդ կը նշանակէ փոխադարձ յարաբերութիւններ, երթալ-գալեր, միացեալ նախաձեռնութիւններ և մասամբ նորին: Ներքինը, եթէ ուզենք քիչ մը աւելի ընդլայնել, կրնանք նկատի առնել հայկական վարժարանի մը հետ յարաբերութիւնը տարբեր համայնքի մը մէջ, տարբեր գաղութի մը մէջ:

Իսկ ի՞նչ ըսել կ՚ուզուի «արտաքին» բառով: Այդ կրնայ ըլլալ ոչ հայկական վարժարան մը, որ կը գործէ նոյն շրջապատին՝ թաղին, թաղամասին կամ քաղաքին մէջ: Արդէն դուրս եկանք մեր նեղ սահմաններէն: Իսկ նման յարաբերութիւն ստեղծելով, զիրար ճանչնալու այդ ճիգով նաև քաղաքական ոլորտ մը բացած կ՚ըլլանք մեր առջև, Հայ դատի աշխատանքի մը լծուած՝ մեր հայութիւնը, հայկականութիւնը ճանչցնելու տեսակէտէն, ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն:

Բայց վարժարան մը կրնայ չսահմանափակուիլ միայն այլ վարժարանի մը բացուելով: Ան կրնայ այդ փոխադարձ ճանաչումի ճիգերը տարածել այլ հաստատութիւններու՝ հիւանդանոցներու, ծերանոցներու, մանկատուներու, նոյնիսկ քաղաքապետութիւններու, նահանգապետութիւններու կամ պետական աւելի բարձր մակարդակներու հաստատութիւններու հետ: Ինչո՞ւ ոչ, նաև թանգարաններու, լրատուամիջոցներու հետ և այլն: Եւ մէկ քաղաքէն միւսը, մէկ երկրէն ալ միւսը: Նաև ու մանաւանդ Սփիւռքի ու հայրենիքի միջև: Սահման չկայ:

Վարժարանը օրինակ մըն է, որ նշուեցաւ: Բացուելու տեսաբար ընդլայնելի նոյն այդ ցանցը կրնայ ստեղծուիլ ու տարածուիլ հայկական կեդրոններու,

եկեղեցիներու, կուսակցութիւններու և միութիւններու, մանաւանդ մամուլի միաւորներու միջև և անոնց ճամբով: Դարձեալ չկայ սահման:

Բացուիլը միայն այս չէ սակայն: Փոխադարձ յարաբերութիւններու ճամբով զիրար ճանչնալը հարցին աւելի դիւրին իրականանալի կողմն է: Եւ կ'ենթադրեմ, որ առաւել կամ նուազ չափով նման ճիգեր կը գործադրուին կազմակերպ համայնքներու մէջ ու միջև: Այդ ճիգերը կրնան բազմանալ, բարելաւուիլ, աւելի արդիւնաւէտ դառնալ: Այո՛:

Աւելի դժուարը բացուիլն է ոչ թէ ֆիզիքական, այլ բարոյական առումով: Եւ այդ՝ աշխարհի՛ն բացուելու տեսլականով:

Այսի՞նքն: Բացուիլ գիտական ու գիտարուեստական կամ արհեստագիտական աշխարհին, ճանչնալ զայն ու ճանչցնել ինքզինք: Այսինքն՝ գտնուիլ այդ մակարդակին վրայ, առնել ու տալ: Մանաւանդ տալի՛ք ունենալ:

Բացուիլ մշակութային աշխարհին՝ գրականութեան, արուեստներու, մարզաձևերու, արդի մարդկութիւնը ներգրաւող այլազան ոլորտներուն վրայ՝ միշտ յիշելով, որ ճանչցուելու համար ճանչցուելիք պիտի ըլլաս, ճանչցնելիք պիտի ունենաս:

Վերջապէս, բացուիլ գաղափարներու աշխարհին վրայ, մասնակից ըլլալ մարդկութեան գաղափարական զարգացման, տալ և առնել նաև այս իմաստով: Մանաւանդ այս իմաստով:

Եւ ճիշտ այստեղ է ահա, որ ի յայտ կու գան անհատական ու հաւաքական ճիգերու միաձուլումը, այդ միաձուլման կենսականութիւնը: Որովհետև եթէ չենք բացուած անհատապէս, իւրաքանչիւրս չէ բացուած, ապա մեզմէ բաղկացած հաւաքականութիւնը ինքն ալ չի կրնար բացուիլ: Եւ հակառակը՝ եթէ հաւաքականութիւնը պատրաստ չէ բացուելու, պատրաստ չէ իր բաղկացուցիչ տարրերը՝ իր ազգայինները, իր քաղաքացիները մղելու, որ բացուին, ապա չենք կրնար դուրս գալ մեր խոզակէն:

Բացուիլ կարենալու համար, սակայն, պէտք է ձերբազատիլ շատ կաշկանդումներէ, նախապաշարումներէ, «աւանդութիւններէ», մանաւանդ վստահութեան պակասէն, ըլլայ մենք մեր հանդէպ, ըլլայ դիմացինին հանդէպ:

Բացուիլ, սակայն, չի նշանակեր ինքնութիւնը կորսնցնել, չի նշանակեր դառնալ անդէմ ու անդիմագիծ, ըլլալ պարզապէս ուրիշին պատճէնը: Կը նշանակէ սեփական դէմքը ա՛լ աւելի ամրակայել՝ հպարտութեամբ մաս կազմելու համար յառաջադէմ մարդկութեան:

ՀՅԴ Բյուրոյի հայտարարությունը

Ծավալապաշտական նկրտումները բավարարելու Ադրբեջանի հանցավոր քաղաքականությունը շարունակվում է:

Հեռահար նպատակներ հետապնդող «բնապահպանական» կազմակերպված սադրանքի հետևանքով 2022 թվականի դեկտեմբերի 12-ից փակ է Արցախն ու Հայաստանը իրար կապող միակ ճանապարհը՝ Բերձորի միջանցքը: Փաստացի Արցախը գտնվում է ամբողջական շրջափակման մեջ, և շուրջ 120.000 հայ բնակչությունը կանգնած է հումանիտար աղետի առջև:

Հերթական անգամ Ադրբեջանը շինծու պատրվակով կոպտորեն ոտնահարում է 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ձեռք բերված պայմանավորվածությունները՝ առանց լուրջ հակազդեցության արժանանալու Հայաստանի և Ռուսաստանի կողմից:

Ադրբեջանի այս սանձարձակ վարքագիծը, ինչպես միշտ, բացահայտ կերպով հովանավորվում է Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից: Թուրք-ադրբեջանական տանդեմի նպատակները պարզ են՝ հայաթափել Արցախը, մասնատել և ինքնիշխանությունից զրկել Հայաստանի Հանրապետությանը:

Անցնող շաբաթների ընթացքում արցախահայությունը հերթական անգամ ի ցույց դրեց իր անկոտրուն կամքն ու ոգին և, հակառակ բոլոր դժվարություններին, շարունակում է տեր կանգնել իր ինքնիշխանությանը: Տարբեր միջազգային կառույցների և ատյանների, բազմաթիվ երկրների պետական հաստատությունների և պաշտոնատար անձանց հասցեական դատապարտումները, առանձին գործիչների հայտարարությունները խիստ կարևոր և գնահատելի նկատելով հանդերձ՝ անդրադառնում ենք, որ դրանք բավարար չեն Ադրբեջանի անմարդկային գործելակերպը կանխելու համար:

ՀՅ Դաշնակցությունն իր կազմակերպական միավորների, Հայ դատի գրասենյակների և հանձնախմբերի, ուղեկից միությունների և քույր կառույցների միջոցով կարողացել է դեկտեմբերի 12-ից դիվանագիտական, քաղաքական, տեղեկատվական-քարոզչական և մարդասիրական գետնի վրա հսկայածավալ աշխատանքներ իրականացնել, և այսուհետ ևս արվելու է առավելագույնը՝ արցախահայությանը զորավիգ կանգնելու և Արցախի իրավունքները պաշտպանելու համար:

Արցախը հայկական պահելու հարցում բոլորս անելիք ունենք: Դժվարին ու ճակատագրական զարգացումները դեռ առջևում են: Ինքնակազմակերպվելու, համազգային ջանքերով մեր իրավունքներին տեր կանգնելու ու մեր ազգային շահերը պաշտպանելու մարտահրավերների առջև ենք:

Առ այդ, ՀՅԴ Բյուրոն անհրաժեշտ է համարում Արցախի իշխանությունների հետ անմիջականորեն աշխատող, համահայկական ցանցային ներուժը կազմակերպող և համակարգող մարմին առաջացնելու շուրջ գործնական քայլերի ձեռնարկումը:

Միաժամանակ մեկ անգամ ևս հարկ ենք համարում Հայաստանի օրվա իշխանություններին հորդորել զերծ մնալ Հայաստանի և Արցախի շահերը վտանգող, ապաշնորհ ու անհեռատես քաղաքականությունից: Հայաստանը չի կարող հրաժարվել Արցախի անվտանգության երաշխավորի հանձնառությունից: Որևէ պարագայում Արցախի ինքնիշխանությունը, արցախահայության ինքնորոշման իրավունքը չեն կարող սակարկման առարկա լինել: Ցանկացած ետքայլ կարժանանա հակազդեցության՝ բոլոր հնարավոր ձևերով և եղանակներով:

ՀՅԴ ԲՅՈՒՐՈ
05-ը հունվարի 2023 թ.

Արցախի շրջափակումը վերացնելու
պահանջով նստացույց կառավարության
շենքի դիմաց. 1990 թ. ամառ

ԴՐՕՇԱԿ